

6-7(399-400)
16.02.2015
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԳԵՂԵՅԻԿԻ ԵՎ ԲԱՐՈՒ ԿՐՈՂՆԵՐԻ ՏՈՆԸ

Հայ ժողովուրդը միշտ էլ պատկառանք է ունեցել կնոջ հանդեպ: Դեռևս միջնադարյան տաղերգուներն իրենց տաղերում գովերգել են կնոջը՝ փառաբանելով նրան որպես մաքրամաքուր արարածի: Կինը և՛ կյանքի աղբյուր է, և՛ ընտանիքի մշտական գուն սյուն, և՛ չարի հանդեպ շանթարգել: Նրա ամենամեծ կոչումը Մայր լինելն է, որը ցանկացած լեզվով նույն իմաստն ու նշանակությունն ունի:

Մեր պետական տոնացույցում երկու գեղեցիկ տոներ կան, որոնք շեշտում են Կնոջ և Մոր հանդեպ հայի պաշտամունքը: Եվ թեպետ դրանց ստեղծման նախահիմքերը միանգամայն տարբեր են, սակայն երկուսն էլ հաստատում են նույն բանը՝ կինը բնության զարդն է:

Հատկանշական է նաև, որ թե՛ Կանանց միջազգային օրը, և թե՛ Մայրության ու գեղեցկության օրը նշվում են գարնանը: Ասել է թե՛ գարունը ասոցացվում է հիշյալ երկու տոներին՝ դրանցով պայմանավորելով կյանքի հավերժությունը:

Մասնագիտության բերումով գիտակրթական բնագավառի աշխատողների մեծամասնությունը կանայք են: Սեռային տարբերակում չընենք, պարզապես ընդօժենք փաստը, որ կանանց է առավելապես վստահված մատաղ սերնդին կրթելու և դաստիարակելու դժվարին գործը: Դրա մեջ խորը իմաստ տեսնելով՝ փաստենք նաև, որ նրանք մեծագույն պատասխանատվությամբ են կատարում իրենց առաքելությունը՝ մնալով գեղեցիկի ու բարու անփոփոխ կրողներ:

Առհասարակ, կնոջը զուտ տոնական թվացույցով զնահատելը ճիշտ չէ, նրան պիտի մեծարել տարին բոլոր: Եվ՝ անխտիր բուրդին: Հատկապես տարվա այս եղանակին ծաղիկները արևահամ են բուրում. արևի համ և բույր նվիրենք գեղեցիկ սեռի ներկայացուցիչներին: Մեծարանքի խոսքեր ասենք՝ վստահ լինելով, որ կանայք ունակ են սիրով ու նվիրվածությամբ փոխհատուցելու: Այսօր և ամեն օր:

Շնորհավոր ձեր գարնան տոնը, սիրելի կանայք:

«ԼՍԱՐԱՐ»



Ձյունը
հուզմունքից
լալիս...
Արցունքը
բողբոջ է
դառնում,
բողբոջը՝
ծաղիկ:
Դռները բացեք,
գարունն է
գալիս...

Լուսակարները՝
Ձ. ԸՈՔՈՅԱՆԻ

ՍՈՎԵՆ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔ՝ ՆԵՐՔԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅԱՆՅՏՄԱՆԸ

Փետրվարի 3-6-ը ԼՂՀ ԿԳՆ կրթության պետական տեսչության հանձնաժողովը, նախարարի խորհրդական Օնիկ Ասրյանի նախագահությամբ, իրականացրել է համակողմանի տեսչական ստուգում Մարտունու շրջանի Բերդաշենի Սոնթե Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցում: Արդյունքների ամփոփմանը նվիրված մանկավարժական խորհրդի արտահերթ նիստին մասնակցում էին ԿՊ տեսչության պետ Սոս Արզումանյանը, կրթության շրջանային բաժնի վարիչի տեղակալ Գեորգի Սևիկյանը:

Արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ տեսչական հանձնաժողովի նախագահ Օնիկ Ասրյանը:

Ըստ ներկայացված տեղեկանքի՝ դպրոցը վերջին անգամ տեսչակորման է ենթարկվել 2010 թ. մարտ ամսին: 2005թ. տեսչակորմանից հետո բավականին հարստացվել է դպրոցի ուսումնական-թանկան բազան, որում իր ներդրումն ունի դպրոցի տնօրեն Արտակ Ջարգարյանը: Լրիվությամբ փոխվել է դպրոցական գույքը: Դպրոցն ունի կահավորված 20 առարկայական կաբինետներ, որից 10-ը՝ վճարովի: Այդ թվում տարրական դասարանների համար ստեղծված են 2-ական մայրենի և մաթեմատիկայի կաբինետներ, և այդ դասարանների պարապմունքները նշված երկու առարկաներից կազմակերպվում են կաբինետներում: Ուսուցումը կազմակերպվում է կաբինետային համակարգով: Առարկայական կաբինետները ապահովված են դիտողական պարագաներով: Նախկին 15 համակարգի փոխարեն այժմ դպրոցն ունի 2 համակարգչային կաբինետ՝ 26 համակարգչով: Համակարգչային կաբինետներից մեկի համակարգիչները միացված են համացանցին, և ունի պրոյեկտոր: Դպրոցը հանրապետության այն եզակի կրթօջախներից է, որն ունի հրաձգա-



յին վարժանք, որն օգտագործվում է սովորողների կրակային պատրաստակամության համար: Վարժանքներ են անում նաև ուսուցիչները, ինչու չէ՞ նաև դպրոց այցելած հյուրերը: Դպրոցը Մարտունու շրջանում լավագույն բազային կրթօջախներից է, որն իր նյութատեխնիկական բազայով գերազանցում է անգամ շրջկենտրոնի ավագ դպրոցին:

Ձեկուցողը գոհունակությամբ արձանագրեց դպրոցում տիրող կարգ ու կանոնը: Աշակերտների կարգապահությունը բարձր է. ստուգման օրերին դասերից բացակա էր 1-2 աշակերտ հիվանդության պատճառով: Հաճախումները վերահսկվում են տնօրինության կողմից, կատարվում է աշակերտների ամենօրյա հաշվառք, ինչպես ֆիզիկոսներ, այնպես էլ դասերին մասնակցելու առումով:

Գովեստի է արժանի նաև այն, որ բոլոր 34 ուսուցիչները բաժանորդագրվել են «Լուսարար» թերթին: Բացառիկ դպրոցներից է, որտեղ բոլոր աշակերտները (բացառությամբ՝ առաջին դասարանցիների) գրանցված են գրադարանում: Դրվատվեց տնօրենի կողմից տարվող դպրոցավարչությունը: Առկա են բոլոր փաստաթղթերը՝ ժապավենավորված, էջակալված և հաստատված: Ավելին՝ այդ ամենը մտցված է նաև համակար-

գիչ և հանձնաժողովի նախագահի պահանջած ցանկացած փաստաթուղթ անմիջապես ներկայացվում էր: Այս երևույթը (բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև վերադասից ստացված հրամաններն ու որոշումները համակարգիչ մտցնելը) հանձնաժողովի նախագահի խոսքով՝ առաջին անգամ է հանդիպում դպրոցներում և արժանի է ընդօրինակման:

Դպրոցում կոմպլեկտավորվել է 13 դասարան-կազմ՝ 213 աշակերտի ընդգրկմամբ:

Դասավանդման գործընթացի արդյունավետությանը անդրադառնալով՝ բանախոսը հատկանշեց կաբինետային համակարգով ուսուցման կազմակերպումը (ինչպես ասացինք՝ անգամ տարրական դասարաններում): Այստեղ աշխատում են մասնագիտական և մեթոդական բավարար պատրաստություն ունեցող փորձառու ուսուցիչներ: Տարիներ շարունակ Բերդաշենի դպրոցի անունը բարձր է հնչում առարկայական օլիմպիադաներում հաղթած աշակերտների շնորհիվ: Այսպես, 2013 թ. դպրոցի 3 աշակերտներ մասնակցել են ՀՀ օլիմպիադայի եզրափակիչ փուլին, որից 2-ը գրավել են 1-ին տեղ, մեկը պարզակատրվել է գովասանագրով ակտիվ մասնակցության համար,

ընդ որում՝ աշակերտներից մեկը հավաքել է առավելագույն 60 միավոր հայ գրականություն առարկայից: 2014 թվականին ԼՂՀ օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցել է 5 աշակերտ, որից 2-ը հայոց լեզու և գրականություն առարկաներից մասնակցել են ՀՀ առարկայական օլիմպիադայի եզրափակիչ փուլին: Հայոց լեզու առարկայից 9-րդ դասարանի աշակերտուհի է. Գրիգորյանը գրավել է 1-ին տեղը, 11-րդ դասարանի աշակերտուհի Ս. Սողոմոնյանը հայ գրականություն առարկայից 3-րդ տեղը: Նարե Առստամյանը Համահայկական օլիմպիադայում գրավել է առաջին տեղը: Այդ հաջողություններում մեծ է հայոց լեզվի և գրականության վաստակաշատ ուսուցչուհի Էլմիրա Գաբրիելյանի ներդրումը: Նա 2001-2003 թթ. հաղթող է ճանաչվել և պարգևատրվել «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի տարբեր անվանակարգերում, 2006 թ. արժանացել է «Վաստակավոր մանկավարժ» կոչման, իսկ 2012 թ. պարգևատրվել է «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից: Տարիների վաստակ ունեցող ուսուցչուհին այսօր էլ շարունակում է աշխատել եռանդով և իր փորձը սիրով հաղորդել երիտասարդ գործընկերներին: Փորձառու ուսուցչուհու կողքին աշխատում են երիտասարդ մասնագետներ Լուսինե Ավանեսյանը, Նունե Առստամյանը, մյուսները, որոնք արդեն հաջողություններ ունեն: Լ. Ավանեսյանն արդեն տարակարգ է ստացել, մեծ ներուժ ունի նաև Նունե Առստամյանը: Տեսչակորվել են ուսալանով նախատեսված բոլոր առարկաները՝ բացառությամբ ֆիզկուլտուրա, կերպարվեստ, տեխնոլոգիա, երաժշտություն առարկաների: Տեսչակորված առարկաները դասավանդող 25 ուսուցիչից 7-ի աշխատանքը զնահատվել է «լավ»:

ԱՍՓՈՓՈՒՄ

ԱՌԱՎԵԼ ԸՆՏ ԱՇԽԱՏԱՆՔ՝ ՆԵՐՔԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅԱՆԱՅՏՄԱՆԸ

ՄԵԹՈԴՓՆԵՐԸ՝ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ

Մասնագիտական շփումները և ջերմ ու անկեղծ քննարկումներն առաջին հերթին անհրաժեշտ են այն ուսուցիչներին, որոնք նոր են ուղիղ ամենակարգական գործունեության մեջ: Կամ պիտի լավ ուսուցիչ լինել, կամ՝ չլինել, որովհետև միջակայքում ենթադրվում է մատաղ սերնդի կրթությունն ու դաստիարակությունը, աղոտում մեր երկրի ապագան:

Փնջային մեթոդաբանության աշխատանքները նպատակաուղղված են ուսուցիչների վարպետության բարձրացմանը, սովորողների գիտելիքների հարստացմանը, առաջավոր փորձի տարածմանը:

Օրերս հնարավորություն ունեցա մասնակցելու Նորագյուղում և Խնամապատում կազմակերպված մեթոդաբանության աշխատանքներին և պարզել, թե ինչով են շնչում այդ դպրոցներում աշխատող ուսուցիչները, և ինչպիսի սերունդ ենք ունենալու մոտ ապագայում:

Նորագյուղի մեթոդաբանությունը ընդգրկված է չորս դպրոցներ՝ Նորագյուղի, Իվանյանի, Հովսեփավանի և Սարգսյանի:



Ընթացիկում դասեր կազմակերպվեցին երկու ուսուցիչների՝ փորձառու Լուսինա Ներսիսյանի (2-րդ «ա» դասարան- ես և շրջակա աշխարհը) և սկսնակ Քրիստինե Գրիգորյանի մոտ(11-րդ դասարան- Ֆիզիկա):

2-րդ «ա» դասարանում առարկայի ընծեռած հնարավորության սահմաններում ուսուցչուհին զգալի աշխատանք կատարեց:

Թեման՝ «Եղի բնության բարեկամ», շատ արդիական էր ու հետաքրքիր: Դասարանը վերածվել էր ժրջան մեթոդների մի փեթակի, ուր բոլորն աշխատում են, ուր ամեն աշակերտ գիտի իր անելիքը: Նրանք գիտեն ամեն ինչ իրենց շրջապատի բնության մասին: Կարողանում են տարբերել ծառերը, թփերը, խոտաբույսերը, տարբերակել կենդանիները՝ թռչուններ, սողուններ, կաթնասուններ, միջատներ, ձմեռող և չվող թռչուններ: Վերջիններիս վերաբերյալ ուսուցչուհին 2 նկար-պատկեր էր պատրաստել՝ երանի և ծնունդ տեսարաններով, որտեղ սովորողները պետք է տեղադրեին համապատասխան թռչունները, ինչը մեծ սիրով էին կատարում:

Երեխաները գիտեն նաև, որ կռուկը հույսի ու հավատի, արագիլը զարման, բարության, կաջաղակը չաչանակության խորհրդանիշներն են, իսկ ուսուցչուհու այն հարցին, թե որ կենդանին էր առաջինը ընտելացրել մարդը, նրանք ճիշտ պատասխանեցին՝ շանը և կատվին 10 հազար տարի առաջ: Իսկ թե մուկը ընտանի՞ է, թե ոչ, նրանք դրա պատասխանն էլ ունեին՝ ոչ, քանի որ մարդը նրան չի խնամում:

Նրանք լավ են հասկանում բնության նշանակությունը մարդկանց կյանքում, ուստի, իրենց փոքրիկ շուրթերով կոչ էին անում հոգատար լինել բնության հանդեպ, հորդորում՝ դեղաբույսերը չպոկել արմատներով...

Առավել հետաքրքիր կազմակերպվեց դասի երկրորդ մասը՝ նոր նյութի հաղորդումը: Դա ժամանակակից դասին ներկայացվող պահանջները բավարարելու լավագույն դրսևորում էր:

Նյութի մատուցումը կատարվում էր կանգառներով (I, II, III, IV...) երեխաները կարողանում էին պարբերությունները և հանում դրանցում առկա հեռակետային բառերը՝ ըստ կանգառների: Վերջում նյութն ամփոփում էին այդ բառերն օգտագործելով: Ուսուցչուհին հետևում էր սովորողների խոսքին, ապահովում միջառարկայական կապը, սովորողների հայտնասիրական դաստիարակությունը, շրջապատը, բնությունը ճանաչելու, սիրելու և պահպանելու կարողությունների մշակումը:

Վերլուծության ժամանակ երիտասարդ ուսուցիչներն ընդգծեցին, որ դասն իրենց համար շատ ուսանելի էր ու սպասվորիչ հատկապես այն առումով, որ դիտողական պարագաներով հագեցած այդ դասը լիովին ծառայեց իր նպատակին, իսկ դաստիարակության ուղղությամբ կատարված աշխատանքը անգնահատելի էր:

Ձեկուցողը փաստեց, որ տնօրինության կողմից կիսամյակային ամփոփիչ աշխատանքների վերահսկողություն է իրականացվում բոլոր առարկաներից: 1-ին կիսամյակի վերջին հայտը լեզու, ռուսաց լեզու և մաթեմատիկա առարկաների կիսամյակային ամփոփիչ աշխատանքների արդյունքները հետևյալն են. հայտը լեզվից 5-12-րդ դասարաններում առաջադիմությունը կազմել է 93%, ուսման որակը՝ 30%, ռուսաց լեզվից՝ առաջադիմությունը՝ 83%, ուսման որակը՝ 30%, մաթեմատիկայից առաջադիմությունը՝ 65%, ուսման որակը՝ 19%:

Ընթացիկ ուստարվա դեկտեմբեր ամսին դպրոցում մի շարք առարկաներից կազմակերպվել են արտաքին ստուգումներ ԼԳՀ ՊԳԿ կողմից: Այսպես՝ 4-րդ դասարանում մայրենիից առաջադիմությունը կազմել է 85%, ուսման որակը՝ 40%, մաթեմատիկայից 6-րդ դասարանում առաջադիմությունը կազմել է 61%, որակը՝ 17%, ռուսաց լեզվից 11-րդ դասարանում առաջադիմությունը՝ 31%, ուսման որակը՝ 6%, հայտը պատմությունից 8-րդ դասարանում առաջադիմությունը՝ 73%, ուսման որակը՝ զրո, աշխարհագրությունից 8-րդ դասարանում առաջադիմությունը՝ 2% տոկոս, ուսման որակը՝ զրո%:

Տեսչական հանձնաժողովի կողմից տրված գրավոր աշխատանքներից՝ 1-4-րդ դասարաններում մայրենիից և մաթեմատիկայից, 5-12-րդ դասարաններում հայտը լեզվից, ռուսաց լեզվից, անգլերենից և մաթեմատիկայից արժանագրվել են հետևյալ արդյունքները.

2-4-րդ դասարաններում մայրենիից գրավոր աշխատանքներին մասնակցել են 54 աշակերտ. առաջադիմությունը կազմել է 67%, ուսման որակը՝ 33%: Նույն դասարաններում 1-ին կիսամյակի արդյունքներն են՝ առաջադիմությունը՝ 91%, ուսման որակը՝ 44%: Մաթեմատիկայից նույն դասարաններում տեսչական գրավորներից առաջադիմությունը կազմել է 78%, ուսման որակը՝ 33%: կիսամյակի արդյունքներն են՝ 88% և 44%:

Հայտը լեզվից գրավոր աշխատանքներ են տրվել 5-12-րդ դասարաններում, և գրանցվել են հետևյալ արդյունքները. 1-3 միավոր են ստացել 55 աշակերտ, 4-6 միավոր՝ 52, 7-10 միավոր՝ 20 աշակերտ. առաջադիմությունը կազմել է 57%, ուսման որակը՝ 16%: Բարձր առաջադիմություն և ուսման որակ են գրանցվել 10-րդ դասարանում 92% և 39% (ուսուցիչ՝ Է. Գաբրիելյան) և 6-րդ դասարանում՝ առաջադիմությունը 61%, որակը՝ 33% (ուսուցիչ՝ Ն. Առստամյան). 1-ին կիսամյակի արդյունքները բավականին բարձր են՝ առաջադիմությունը 99 տոկոս, ուսման որակը՝ 66%:

Ռուսաց լեզվից գրավոր աշխատանքներ են տրվել 4-7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 12-րդ դասարաններում: Այդ դասարաններում սովորող 118 աշակերտից գրավորներին մասնակցել է 115 աշակերտ. առաջադիմությունը կազմել է 71%, ուսման որակը՝ 17%: Ուսուցիչները այդ դասարաններում 1-ին կիսամյակում տվել են 94% առաջադիմություն և 45% ուսման որակ:

Անգլերենից գրավոր աշխատանքներ են տրվել 6-րդ, 7-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններում. այդ դասարաններում սովորող 53 աշակերտից մասնակցել է 50-ը, առաջադիմությունը կազմել է 66%, ուսման որակը՝ 6%: Բարձր առաջադիմություն է գրանցվել 6-րդ դասարանում՝ 89%, ուսման որակը՝ 17% (ուսուցիչ՝ Ս. Զարգարյան):

Մաթեմատիկայից գրավոր աշխատանքներ են տրվել 5-12-րդ դասարաններում: Այս դասարաններում սովորող 132 աշակերտից գրավորներին մասնակցել է 130-ը. 1-3 միավոր է ստացել 83, 4-6 միավոր՝ 40, 7-8 միավոր՝ 7 աշակերտ: Առաջադիմությունը կազմել է 35%, ուսման որակը՝ 8%:

Հանձնաժողովի եզրակացությունը մեկն է՝ դպրոցի ուսուցիչները դեռևս շատ անելիքներ ունեն ուսման բարձր որակ ապահովելու համար:

Դպրոցում բավականաչափ աշխատանքներ են կատարվում սովորողների հետ արտադպրոցական և արտադասարանական դաստիարակական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Այդ աշխատանքները կազմակերպվում են պլանի համաձայն՝ ձգտելով սովորողների մոտ սեր առաջացնել դեպի Արցախ աշխարհը:

նական դաստիարակական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Այդ աշխատանքները կազմակերպվում են պլանի համաձայն՝ ձգտելով սովորողների մոտ սեր առաջացնել դեպի Արցախ աշխարհը:



Կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, պարտադիր կարգով նշվում են բոլոր տոն և հիշարժան օրերը: 2013-2014 ուստարում դպրոցում կազմակերպվել են 37 անուն միջոցառումներ, այդ թվում՝ «Հեքիաթների աշխարհում», «Ոսկե աշուն», «Հացի բույրը»՝ գրական-գեղարվեստական միջոցառումները, հայրենասիրական երգ-ասմունք, գրական միջոցառում՝ Նվիրված Պ. Սևակի հոբելյանին, «Հայ ասպետ» խաղ-մրցույթ, «Ամառարտ պահենք մայրենին», «Դե՛, տղաներ», «Բարև գարուն», «Բնությունը գարո՞ւ է» ներկայացումները և այլն: Ընթացիկ ուստարում դեռ կազմակերպվել են 29 անուն միջոցառումներ, այդ թվում՝ Կոմիտասյան օրերի նվիրված մեծ երգահանի 145-ամյակին, «Մաթեմատիկայի աշխարհում» ինտելեկտուալ խաղ 11-րդ և 12-րդ դասարանների միջև, նշվել է մեծանուն երգիչ-երգահան Շ. Ազնավուրի ծննդյան 90-ամյակը, դատական նիստ՝ «Վնասակար սովորույթներին ասենք ո՛չ», արիության դաս և այլն:

Դպրոցը հանդիպումներ է ունեցել և սերտ կապի մեջ է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ձուլաբարի միջնակարգ դպրոցի հետ: Կազմակերպվում են տողաներ՝ նվիրված հայտը բանակին, լեգենդար հրամանատար Ս. Մելքոնյանի ծննդյան օրվան: Դպրոցի բոլոր դասարանները անվանակոչված են գյուղի գոհված ազատամարտիկների անուններով, և դասասենյակներում ստեղծված են նրանց նվիրված անկյուններ:

Դպրոցում որոշակի աշխատանքներ են կատարվել դպրոց-ընտանիք կապի ամրապնդման համար: Այդ գործում իր ուրույն տեղն ունի dasaran.am ծրագիրը. դպրոցում գործածության մեջ են դրված էլեկտրոնային մատյանները, և ուսուցիչները բարեխոսության միջոցով նշանակած օրվա գնահատականները մտցնում են dasaran.am կայք, որի արդյունավետությունը 100% է: Հաշվի առնելով, որ գյուղի ընտանիքների մեծ մասն ունի ինտերնետ կապ, տնօրենը մտադիր է այդ կայքը օգտագործել նաև ծնողների հետ հետադարձ կապը սերտացնելու համար:

Մանկավարժական խորհրդի նիստում անկեղծ երկխոսություն ծավալվեց ստուգման արդյունքների շուրջ: Տեսչապետ Սոս Արզումանյանը ուսուցիչներին հորդորեց ոչ միայն արձանագրել արդյունքները, այլև պատճառաբանելով նախազգեստը գտնել, թե ինչու, երբ մանկավարժների մեկ երրորդի աշխատանքը «լավ» է գնահատվել, միայն շախմատ առարկայի դրվածքն է «լավ»:

Նախ բոլոր ելույթ ունեցողները իրենց գոհունակությունը հայտնեցին տեսչիցների հետ 4-օրյա համատեղ, փոխըմբռնման մթնոլորտում կատարած աշխատանքների համար: Նրանք խոսքով՝ դրանք նոր թարմություն են մտցնելու իրենց աշխատանքներում, նոր լիցք կհաղորդեն: Կրտսեր օղակի մեթոդիկները մանկավարժներին հարցրին. Յուրաքանչյուրը վստահեցրեց, որ դասավարդների աշխատանքում կկատարվի մեծ փոփոխություն. իրենք սովորեցին ուսուցման նոր մեթոդներ, ճկուն հնարներ՝ ելնելով ուսուցման աշակերտակենտրոն դրույթներից: Ստուգող տեսչի գնահատմամբ՝ կրտսեր օղակում դասավարդող բոլոր ուսուցիչներն առանձնա-

նում են իրենց գործիմացությամբ, պատասխանատվությամբ, կազմակերպվածությամբ, համագործակցությամբ, միաժամանակ նաև՝ մրցակցությամբ, պատրաստակամությամբ, ջանասիրությամբ, ջերմեռանկությամբ, փոխըմբռնմամբ:

Հայտը լեզվի և գրականության մեթոդիկավորման նախագահ Է. Գաբրիելյանը բավարարված է հայտը լեզվից 16% տոկոս ուսման որակով: Նրա կարծիքով՝ տոկոսների վրա ազդում է այն հանգամանքը, որ ավարտական դասարաններում պատրաստվելու համար միասնական և ավարտական քննություններին պարապում են շտեմարաններով, իսկ տեսչական ստուգումներին թելադրության արդյունքներով են առաջնորդվում: Աշխարհագրության ուսուցչուհի Չ. Հարությունյանն իրեն վիրավորված է զգում իր առարկայի «արհամարհված» լինելու համար. այն ժամանակներում, երբ աշխարհագրությունը մրցութային առարկա էր բուն ընդունվելու ժամանակ, վիճակը բարվոք էր, իր աշակերտները մինչև վերջին տարիներս մասնակցում և հասնում էին մինչև օլիմպիադայի եզրափակիչ փուլ, լավ արդյունքներ էին ցույց տալիս աշխարհագրությունից, իսկ այժմ, երբ այն հանված է քննությունների ցանկից, այլ է վիճակը, սակայն չնայած դրան՝ շրջանավարտներից մի քանի հոգի բնագիտակրթական առարկաներից ընտրել են աշխարհագրությունը ավարտական քննությունների համար:

Դպրոցի փոխտնօրեն Օլեգ Սարգսյանը գոհ է ստուգումներից այն առումով, որ առաջին՝ բացահայտեցին մի շարք թերություններ դասավանդման որակի, աշակերտների գիտելիքների, փաստաթղթերի վարման տեսակետից և որ ոչ մի թերություն դուրս չի մնացել տեսուչների տեսադաշտից, բայց և՛ տեսուչները նպատակադրված էին միայն թերությունները ներկայացնել, այլև տվեցին բավականին օգտակար խորհուրդներ և ամենակարևորը՝ մատնացույց արեցին դրական աշխատանքները, ինչը նոր լիցքեր հաղորդեց կոլեկտիվին: Խոստովանեց, որ թերությունները, կապված ուսման որակի հետ, ուղղակի կապ ունեն մասնագիտական որակների հետ, և այդ իմաստով այժմյա մանկավարժական կազմը, հատկապես տեխնիկական առարկաների գծով, զիջում է իրենց դասավանդած հզոր մանկավարժներին, բայց բոլոր դեպքերում շեշտը պետք է դնեն հետևյալ վրա՝ բոլորի հնարավորությունները օգտագործել և բարձրացնել ուսման որակը: Շեշտը պետք է դնել ինչպես եղել է, կա ու կլինի՝ յուրաքանչյուր դասի մասնակրկիտ նախապատրաստությանը: Ինքնակրթության թեմաների միջոցով մասնագիտական պատրաստության անընդհատ բարձրացմանը, և այդ բոլորի արդյունքում բարձրացնել դասավանդման որակը:

Տեսչապետի կարծիքով՝ Բերդաշենի դպրոցը կարելի է դասել հանրապետության լավագույն դպրոցների շարքում. բազմակառուցված է, մեթոդիկ կա, ուրեմն, հնարավոր է հասնել ցանկալի արդյունքի:

Կրթության բաժնի վարիչի տեղակալ Գ. Սևակյանը բնական համարեց տեսչական հանձնաժողովի կողմից Բերդաշենի դպրոցի դրական կողմերի գերակշռման փաստի արձանագրումը. բաժինը նույնպես այս դպրոցի կատարած աշխատանքը շրջանում առանձնացնում է լավ ղեկավարման շնորհիվ: Բոլոր պայմանները կան բարձր արդյունքների հասնելու համար և սրան պիտի ուղղված լինեն կոլեկտիվի ջանքերը: Ի վերջո, ամեն ինչ գնահատվում է արդյունքով:

Ելնելով ստուգման մասին ներկայացված տեղեկանքից՝ կրթության պետական տեսչության հանձնաժողովը, նախազգեստի առաջարկությամբ, երկու գնահատական նշանակեց. դպրոցավարությունը՝ «լավ», իսկ ուսումնառարկայի աշխատանքների դրվածքը՝ ավանդական «բավարար»:

Որոշման մեջ առանձին կետով պարտավորեցվեց հնարավորության սահմաններում վերանորոգել դպրոցի շենքը և կատարել բակի բարեկարգում:

ՌԻՍՈՒՑՈՂԱԿԱՆ

ՂԱՅՐԵՆԱԶՈՒՆԶ ԴԱՍԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՕՐԻՆԱԿ

Փետրվարի 26-ին մայրաքաղաքի Մ. Մաշտոցի անվան հ.4 հիմնական դպրոցն իր հյուրընկալ դռներն էր բացել մայրենիի մի խումբ ուսուցիչների առջև: Հավաքվելու առիթը մայրենիի դաս-միջոցառումն էր 5-րդ դասարանում (ուսուցչուհի՝ Նորա Թամրազյան):

Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր դասի պլանավորում ենթարկում է ստեղծագործ և լուրջ աշխատանք, որի արդյունքում ուսուցիչը գտնում և մշակում է այն ձևերն ու հնարները, որոնք տանում են դեպի դասի նպատակների իրականացում: Երկարամյա փորձ ունեցող ուսուցչուհին վարպետորեն համադրել էր դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդները ու մեթոդական ողջ զինանոցի կիրառմամբ հասել ուսուցման նպատակների իրականացմանը: Իսկ նպատակները արդիական էին ու շատ կարևոր մեթոդա սերունդի հայեցի դաստիարակության և կրթության համար: Ուսուցչուհին նպատակ ուներ էլ ավելի բարձրացնել աշակերտների հայրենասիրական և ազատասիրական ոգին, և դա նրան հաջողվեց:

Յուրատիպ ու ոչ ավանդական էր դասի մուտքը:

- Բարև, երեխաներ, ինչպե՞ս էք:
- Լավ ենք:
- Լա՛յնը՞լ է պայմանավորված ձեր լավ տրամադրությունը:

-Մենք ապրում ենք ազատ ու անկախ մեր հայրենիքում և պատրաստ ենք ամեն գնով պաշտպանել այն, պահպանել մեր նախնիներից մեզ հասած ժառանգությունը՝ հայրենի հողը, որը մեզ ուժ է տալիս և վստահություն:

Փորձառու ուսուցչուհին ջանք ու եռանդ չէր խնայել դասին հետաքրքիր ընթացք տալու համար: Նա դասը վարում էր կիրթ ու գրագետ՝ դասապրոցեսին մասնակից անելով բոլոր աշակերտներին: Ակտիվ էին բոլորը: Մեկը մյուսին լրացնելով՝ նրանք ձևակերպեցին տողադարձի՝ վանկատման և բառակազմական եղա-

նակով բոլոր օրենքները՝ բերելով համապատասխան օրինակներ: Ապա մեկնաբանեցին մի շարք առակներ՝ շեշտը դնելով առակի բարոյախրատական կողմի վրա: Վերջում ուսուցչուհին ընդհանրացրեց պատասխանները՝ հավելելով, որ առակներում ժողովրդի բյուրեղացած և ընդհանրացված միտքն է և մտածողությունը: Ուշագրավ էր «Առյուծը, աղվեսը և արջը» առակի բեմականացումը: Փոքրիկ «դերասանները» ուղղակի մտել էին դերի մեջ, իսկ բեմականացմանը հետևեց խրատական եզրակացությունը:

-Մի չարախոսիր: Մի՛ դատիր, որ չդատվես: Երբեմնի գործած չար արարքների համար անկեղծորեն զղջացին «հզոր առյուծը», «նախաձավոր հովազը», «սապատավոր ուղտը», «գորշ գայլը» և «նվաճված խիտունը»: Իսկ ընկերները նրանց ապաշխարանքի խոսքերին միացան երգով՝ հաստատելով, որ, իսկապես, նախանձեղը, տրտնջալը, գողանալը և նման բացասական երևույթները մերժելի արարքներ են, հետևաբար, պետք է լինել ազնիվ, կարգապահ, միշտ իրար օգնող ու սատարող:

Հետո ուսուցչուհին ապաշխարողներին համապատասխան խորհուրդներ տվեց, ըստ որի՝ առյուծն իր ուժը պետք է օգտագործի միայն թույլերին պաշտպանելու նպատակով, հովազն իր նախաձավոր մորթիով հպարտանալու փոխարեն ավելի լավ է մտածի մտքի ճկունության մասին, ուղտը վերջ պիտի տա իր անհարկի տրտմությանը, գորշ գայլը Կարմիր զխարկի տատիկին այլևս չպետք է կուլ տա, իսկ թռչել չիմացող խիտունը թող գոնե երգել սովորի և այդպես ուրախանա:

Առակների հերոսների բնավորության լավ ու վատ կողմերը, որ, ըստ երևույթին, մարդկանց բնավորության դրական ու բացասական գծերն են, ընդհանրացվեցին T-աձև աղյուսակի տեսքով, որը ճկուն է այն իմաստով, որ դրա օգտագործումը արդյունավետ է դասի տարբեր փուլերի

ընթացքում:

Չմոռանա՞մ ասել, որ դասարանը բաժանված էր երկու խմբի՝ «Այբ» և «Գին»: Համագործակցային ուսուցման ժամանակ սովորաբար սովորողները, համագործակցելով փոքր կամ մեծ խմբերով, ձևավորում են ընդհանուր հասկացություններ և հմտություններ՝ խոսելու, բացատրելու, բանակցելու, վիճարկելու և հարցեր տալու միջոցով: Խմբերը կարճ ժամանակում անսխալ



կատարեցին իրենց առաջադրված բառային և տեքստային աշխատանքները:

Դասին էլ ավելի հետաքրքիր ընթացք հարողրեց խաղ-վարժությունը: Մեկը մյուսին շարունակելով՝ երեխաները ամբողջացրին արդիական հնչեղություն և նշանակություն ունեցող հետևյալ նախադասությունը.

-Մենք պահանջում ենք, որ աշխարհը ճանաչի Հայոց ցեղասպանությունը և դատապարտի ոճրագործներին:

-Աշխարհը պիտի լսի ձեր ձայնը, յուրաքանչյուր հայ պահանջատեր է: Ոճրագործը պետք է պատժվի,- հուզված ավելացրեց ուսուցչուհին:

Հաջորդիվ եկրանին երևաց Ավ. Իսահակյանի մեծադիր նկարը: Երկու խմբերն էլ իսկույն

ճանաչեցին մեծ բանաստեղծին, վերհիշեցին նրա իրենց արդեն ծանոթ ստեղծագործությունները, ապա հնչեցրին անվանի մտավորականների մեծարժան և զանազանաբան խոսքերը Վարպետի մասին: Նոր դասի թեման Ավ. Իսահակյանի «Կյանքից թանկ բանը» խոհափիլիսոփայական բանաստեղծությունն էր: Ուսուցչի օգնությամբ թեմայի վերնագիրը մեկնաբանելուց հետո երեխաներն էկրանին տեսան վիրավոր աղավաղված ծանր ապրումները, որ ուղեկցվում էին աշակերտներից մեկի հուզիչ ընթերցանությամբ: Աշակերտները համոզվեցին, որ, իսկապես, կյանքից թանկ բան չկա, իսկ աղավաղված թևերը խորհրդանշում են ազատություն: Այդ էր վկայում նաև վանդակում փակված ճերմակ աղավաղների անհանգստությունը: Ուսուցչուհին տեղեկություններ հաղորդեց նաև աղավաղ մասին, մեջբերեց աստվածաշնչյան գրույցը և բացատրեց «Խաղաղության աղավաղ» դարձվածքը: Խոսք վեց նաև 1949թ. Խաղաղության մեծ կոնգրեսի մասին, հիշատակվեց Պ.Պիկատի հանրահայտ կտավը «Աղավաղն ծիծեռնու ճյուղով» և, որ ամենակարևորն է, զուգահեռ անցկացվեց Արցախյան գոյամարտի հետ:

Հետաքրքիր մեթոդական հնար է քառաբաժանը, որը շատ հարմար է հատկապես տեքստի հետ աշխատելիս: Խմբերն իրենց մտքերը գրանցեցին չորս բաժիններից յուրաքանչյուրում և բարձրաձայն կարդացին գրածները: Քառաբաժանը, անշուշտ, օգնեց նոր նյութի ոլորին ընկալմանը և աշակերտների մտքի զարգացման ընթացքին:

Դաս-միջոցառումը բովանդակալից էր, հետաքրքիր և ուսանելի:

Ռիմա ՄԵԼՈՒՄՅԱՆ
Սրբի. հ.6 հիմն. դպրոցի հայոց լեզվի և գրականության մեթոդախմբի ղեկավար

ՄԵԹՈՎՈՆԵՐԸ՝ ՄԵԹՈՎԱԿԱՆ ԽՐԱՆՄԱՆ ՄԻՋՈՒ

Զեքերը դասը կազմակերպվեց սկսնակ ուսուցչուհի Քրիստինե Գրիգորյանի մոտ ֆիզիկալ-Յուրաքանչյուր միջոցների, տեխնիկական սարքերի օգտագործումը նյութի՝ «Տեսակարար կշիռ», լավագույնս բացահայտումն էր: Նա փորձում էր դասի յուրաքանչյուր հատված հետաքրքիր և նյութի մատուցումը մատչելի դարձնել: Յուրաքանչյուր նշանավոր ֆիզիկոսների նկարները՝ իրենց ֆիզիկական բացահայտումներով, օրինակ՝ Նյուտոնը՝ խնձորի ծանրի տակ, Արքիմեդը՝ տաշտակի մեջ և այլն, «Դիֆուզիան» մեկնաբանվեց հանելուկներով:

Նոր նյութը՝ «Ջերմահաղորդականություն», սովորողներին մատուցեց կատարած փորձերով: Աշակերտները մեծ հետաքրքրությամբ լուծեցին ֆիզիկայի վերաբերյալ ռեբուսը:

Ուսուցչուհին ջանադիր աշխատանք էր կատարել՝ դասը հետաքրքիր և ուսանելի դարձնելու համար:

Ծավալված քննարկումների ժամանակ գովեստի խոսքեր հնչեցին ուսուցչուհու հասցեին, նրա աշխատասիրության մասին, իսկ եթե վրիպումներ կային, դա էլ բացատրվում էր մեթոդական փորձի պակասով, որը լավ ուսուցիչը տարիների տրեմաճան աշխատանքով կվերացնի ու կստեղծի իրենց, իր մեթոդը: Բոլորը հաստատեցին այն կարծիքը, որ քերականությունը լինում են կատարված աշխատանքում. սխալների վրա են սովորում: Ով անընդհատ փնտրում է, նա էլ գտնում է ավելի լավ մեթոդ: Չպետք է խլել ուսուցչի ազատությունը, քանի որ մանկավարժությունը ստեղծագործական աշխատանք է:

Դպրոցը հրավիրված թոշակառու ուսուցիչ էլ միայն Ասրյանը, հաստատելով, որ երկու դասերն էլ կյանքի դասեր էին, հորդորեց նույն ոգով շարունակել՝ միշտ բարձր պահելով Նորագյուղի դպրոցի պատիվը, իսկ Սարգսյանի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նաիրա Գրիգորյանը, զննատեսելով երկու ուսուցիչների գեղեցիկ խոսքը, կոչ արեց ոչ հայերենի ուսուցիչներին՝ անտարտ պահել մայրենին, քանի որ նրանք այն փորձի վտակներն են, որ պիտի հորդառատ պահեն մեր մայր գեղը՝ հայոց լեզուն:

Դպրոցում զգալի աշխատանք է տարվել հայոց Մեծ եղեռնի 100-ամյակի ուղղությամբ. յուրաքանչյուր դասարան



ում ու կաբինետում ձևավորված են հատուկ անկյուններ ու պատի թեթեր՝ Ցեղասպանության մասին՝ անմոռուկի խորհրդանիշով:

Ամփոփելով քննարկումը՝ Ասկերանի շրջապահակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Շ.Աղաբաբյանը խրախուսեց ուսուցիչների աշխատանքը և կոչ արեց համալսմանը ուժերը մի կարևոր խնդրի շուրջ. այնպես ամել, որ մանկավարժության ասպարեզը ընտրեն մեր լավագույն աշակերտները, այլապես մեր ապագան կարող է աղարտվել:

Պահանջեց նաև տնօրեններին, որ նրանք ուշադրություն հետևեն ուսուցիչների կողմից **dasar.am**-ի օրագրի կատարմանը:

Վերջում դպրոցականների գրական-երաժշտական ցերեկույթը՝ նվիրված Կանանց միջազգային տոն օրվան, հաճելի անակնկալ էր ներկաների համար: Նրանք իրենց անզուգական պարերով, երգով, ասմունքով ու արցախյան բառ ու բանով փառաբանեցին մայրիկներին, տատիկներին ու քույրիկներին:

Մեթոդխորհրդի հաջորդ նիստը կայացավ Խնամատու միջնակարգ դպրոցում: Անցյալ ուսումնական տարում Ասկերանի հեռակետային դպրոցի տնօրեն Կառլեն Մայիկյանի առաջարկությամբ որոշվել էր փնջի մեջ մտնող բոլոր դպրոցներում (խնամատու, խրամորթ, Նա-

խիջանիկ, Ուղտասար և Ասկերան), Ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ, բաց դասեր կազմակերպել հայոց պատմությունից և նախնական զինվորական պատրաստույթից:

Եվ այսպես, հայոց պատմությունից բաց դասեր կազմակերպվեցին սկսնակ ուսուցչուհի Մարինե Մանգասարյանի (9-րդ դասարան) և փորձառու Գայանե Բեգլարյանի մոտ (11-րդ դասարան):

Երկու ուսուցիչների ջանքերով կաբինետը կահավորված էր ճաշակով, առկա էին անհրաժեշտ դիտողական պարագաները, տեխնիկական միջոցները, որոնք ծանայեցին իրենց նպատակին:

Առաջին դասը սկսնակ ուսուցչուհու՝ Մարինե Մանգասարյանի մոտ «Արցախյան շարժման վերելքը: Սպիտակի երկրաշարժը» թեմայով էր: Արցախի և Հայաստանի դրոշմեր, հայ ժողովրդի մեծ քարեկամներ Միխայիլ Ռիժովսկի, Քերոլայն Քոքսի, Ցվետանա Պակալակայի մեծադիր նկարներ, անմոռուկներ, որից, ի դեպ, բաժանվեցին նաև հյուրերին, տեսաֆիլմ՝ «Կռունկ» և «Ղարաբաղ» կոմիտեների անդամներով, Սպիտակի երկրաշարժի վերաբերող կարդերով, «Միացե՛, հայե՛ք» երգի հնչյունների մեջ ուղեկցվող սովորողների խորտախոսք. սրանք էին կազմում դասի բովանդակությունը:

Սովորողները շատ ակտիվ էին: Նրանք կարողացան հասկանալ մի

կարևոր բան. երբ բոլորս միասին ենք, միահամուռ մի բռունցք ենք կազմում, անպարտելի ենք:

Վերջում սովորողները կատարեցին ուսուցչուհու առաջարկած քառաշրջային պահանջը, որի գաղտնաբառը *ցեղասպանություն*-ն էր, իսկ ուսուցչուհին համձնարարեց տնային առաջադրանք՝ «Արցախի ապագան» թեմայով:

Երկրորդ դասը նույն կաբինետում վարեց փորձառու ուսուցչուհի Գայանե Բեգլարյանը: Թեման՝ «Հայաստանը 1918-ից մինչև մեր օրերը. հայ ժողովրդի մայրաքաղաքի հերոսամարտերը»:

Հմտորեն ծավալված երկխոսության ընթացքում վեր լինելից մեր ժողովրդի՝ 20-րդ դարասկզբին ունեցած պատմական վայրիվերումներով լի իրադարձությունները, նրանց հետևանքները, դրանք: Սովորողները լավ պատկերացրին Հայաստանին և Արցախին վերաբերող բոլոր պայմանագրերի (Ակրի, Բաթումի...) բովանդակությունը: Գուցե հենց նրանց մեջ են լինելու մեր վարդապետի դիվանագետները, որոնք, անցյալի սխալներից դասեր քաղելով, դիվանագիտական դաշտում վրիպումներ թույլ չեն տա: Նրանք ցավով են մեկնաբանում գերմանացի դիվանագետի այն խոսքերը, թե՛ «Հայերին լողանալու տեղ տվին, բայց չորանալու տեղ չտվին»՝ նկատի ունենալով չափերով փոքր Հայաստանը:

Ամբողջ դասի ընթացքում դասարանում բևաժում էր Վարդան Մամիկոնյանի խրոխտ ոգին: Սա հայրերն ապրելու, հայեցի դաստիարակվելու մի փայլուն դաս էր, որը անհետանք թողնել չի կարող: Հենց դրա մասին էին խոսում աշակերտների աչքերի փայլն ու ոգևորված խոսքը: Դասերի վերլուծության ժամանակ զննատեսելից սկսնակ ուսուցչուհու աշխատասիրությունը, փորձառու ուսուցչուհու կողմից դասը ազգակենտրոն գաղափարախոսությամբ վարելու հմտությունը, պատմական շատ իրողությունների փակագծերը բացելու կարողությունը, արդարացի քննությունը:

Երրորդ դասը կազմակերպվեց 8-րդ դասարանում նախնական զինվորական պատրաստակառություն առարկայից: Հինդել Արման Ավանեսյանը ընտրել էր շատ արդիական նյութ՝ «Ինքնաձիգի հիմնական մասերը և գործողությունները»: Այսօր Արցախի գերխնդիրն է հայրենիքի պաշտպանության համար գրա-

գետ և նվիրյալ զինվոր պատրաստել, ինչին էլ նպատակաուղղված էր դասը: Ա.Ավանեսյանը ճիշտ բաշխեց ժամանակը՝ զգալի մասը հատկացնելով նոր նյութի հաղորդմանը, ինչն էլ տվեց իր արդյունքը: Սովորողների կողմից յուրաքանչյուր նյութը, որը երևաց անփոփանց ու ամրապնդման ժամանակ:

Օրվա խորհուրդը ամբողջացավ հիանալի միջոցառմամբ, որի կազմակերպիչները ամեն ինչ արել էին՝ հանդիսատեսի մտքին ու սրտին ներազդելու համար:

Եկրանին աստուծոց 7-րդ ծուն էր՝ Անդրանիկը՝ իր փիլիսոփայական խորհրդածություններով («Այսուհետև իմ բարձր լինելու են Հայաստանի լեռները, իսկ նվիրական երազանքս՝ հայրենիքի համար մեռնելը», «Ես իմ վաստակած գնահատականին մասին չեմ հոգար...») և այլն): Հետո հերթով հայտնվում են իրենց կյանքը հայրենիքի ազատությանը նվիրաբերած ֆիդայիները, և հնչում է «Նժդեհիկների երգը»: Խրոխտ, ֆիդայական ոգին աստիճանաբար վերափոխվում է մեղմ, գարնանային, մայրական թեմայի, կանաչի քնքշության:

Այսպես խրոխտությամբ ու քնքշությամբ միահյուսված մթնոլորտը տպավորում է հանդիսատեսին, որը թողնում է դախիլը՝ հոգևոր սննդով հագեցած:

Ամենատպավորիչը, թերևս, Տեղասպանության 100-ամյակին նվիրված նկարների ցուցահանդեսն էր և դախիլի անկյունում տեղադրված Եղեռնի կրթողի փորոցակն ճմուռը՝ հավերժական կրակով:

Ավելացնեմ նաև, որ **dasar.am**-ի հայտարարած մրցություն՝ «Դպրոցական շենքի Նոր տարվա ձևավորում», 6 մրցանակակիրներից հաղթող է ճանաչվել Խնամատու միջնակարգ դպրոցը և պարգևատրվել նոր սերունդի համակարգիչով:

Ամփոփելով օրվա աշխատանքը՝ կրթության բաժնի վարիչ Շ.Աղաբաբյանը զննատեսելից ուսուցիչների ջանքերը այն տեսանկյունից, որ, այդ 100-ամյա հեռավորությունում մեզ մոռանալ չի տվել մեր պահանջը, մենք հիշում ենք, մենք պահանջատեր ենք: Այսօրվա սերունդը լավ պետք է իմանա հայոց պատմությունը, որպեսզի հասկանա, թե ինչ է իր ուզածը աշխարհից, ու պայքարի դրա համար:

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ-100

ՃԱՆԱԳՈՒՄ, ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ, ՀԱՏՈՒՅՈՒՄ

Անցյալում նշված մեծ ջարդերն ու հալածանքները գրեթե աննշան են թվում 1915թ. հայ ազգի կրած տառապանքների համեմատ:

Գեորգի Մորզեգիան



Լուսանկարներում՝ հայ առաջնորդ Փափազյանը՝ 1915-1916թթ.: Դեր Ջորջի սարսափելի կոտորածների մարդկային դիակներին նայելիս: Այս ոսկորները բռնվել են Եփրատի կողմից:

Կողմից: Այս փաստը ընդունել են ոչ միայն օտարազգի մարդասերներ, այլ նաև՝ թուրք տարբեր խավերի ներկայացուցիչներ: Գեորգիյով ներկայացվում են փաստաթղթեր, որոնք ինքնին լուռ վկայում են Եղեռնի մասին և ավելի անկողմնակալ են՝ հաշվի առնելով փաստաթղթերի ու վկայությունների հեղինակների ոչ հայ լինելը: Այստեղ երևում է նաև, որ թուրք ղեկավարությունը ոչ միայն կազմակերպում է սպանող, այլ նաև՝ սպանողի կոծկումը: Դրանով խախտում է նաև Հազագայի վեհաժողովի ընդունած որոշումները:

Թալեաթ փաշայի պաշտոնական հրահանգը հայերի ջարդերի վերաբերյալ, 1915թ. մարտ-1916թ. հունվար Մարտի 25, 1915 Ջենալ բեյին, պատվիրակ Ադանայում

Յուրաքանչյուրի պարտքն է ամեն հնարավոր միջոցներով ազդել հայտնի տարրերի գոյության ոչնչացման վեհ ծրագրի իրագործմանը, ովքեր դարեր ի վեր խոչընդոտ են հանդիսացել կայսրության քաղաքակրթության բարգավաճմանը:

Յուրաքանչյուր, մենք պետք է մեզ վրա վերցնենք ամբողջ պատասխանատվությունը՝ երդվելով՝ ինչ էլ պատահի, իրագործել այն: Միշտ պետք է հիշենք, թե որքան մեծ է այն գոհողությունը, որը կառավարությունը կատարում է՝ ներգրավվելով Համաշխարհային պատերազմում: Պետք է այնպես գործենք, որ կիրառված միջոցները տանեն ցանկալի արդյունքի:

Փետրվարի 18-ի մեր զեկույցում հայտարարեցինք, որ Ջենիթեղ վճռել է բնաջնջել տարբեր ուժերի, որոնք դարեր ի վեր արգելք են հանդիսացել: Այս առումով պետք է կիրառել արյունալի մեթոդներ: Անշուշտ, այդ մեթոդների կիրառումը սարսափեցնում է մեզ, բայց Ջենիթեղ այլ ելք չունի, որ հավաստի իր գործելակերպի կառուցությունը:

Այլ հիգան՝ հանձնաժողովի պատվիրակ Հալեպում, դաժանորեն մեզ քննադատեց ու հորդորեց գթասիրտ լինել, այսպիսի պարզունակությունը ոչ այլ ինչ է, քան անհեթեթություն: Մենք կգտնենք մի վայր բոլոր նրանց համար, ովքեր չեն համագործակցի մեզ հետ, մի վայր, որտեղ կճնշվեն նրանց ցրտի նուրբ լարերը:

Կրկին անգամ թույլ տվեք ձեզ հիշեցնել սեփականության հարցի մասին: Սա շատ կարևոր է: Աչալըջուխամբ ընդունեք դրա բաժանումը, միշտ բնեք հաշիվները և շահույթից ստացված օգուտը: Ջենիթե

Սեպտեմբերի 3, 1915թ. Հալեպի կուսակալությանը

Տեղեկացնում ենք, որ պետք է ներառեք նաև կանանց ու երեխաներին այն կարգադրության մեջ, որ նախկինում վերաբերում էր միայն տղամարդկանց: Այդ պարտականությունների համար ընտրեք վստահելի ծառայողներին:

Թալեաթ, Ներքին գործերի նախարար Սեպտեմբերի 16 Հալեպի կուսակալությանը

Ձեզ տեղեկացրել էին, որ կառավարությունը Ջենիթեղ կարգադրությամբ վճռել է վերացնել Թուրքիայում բնակվող նշված բոլոր մարդկանց՝ հայերին:

Բոլոր նրանք, ովքեր կընդդիմանան այս վճռին և հրամանին, չեն կարող մնալ կայսրության պաշտոնական կազմում: Նրանք գոյությունը պետք է վերջ դրվի՝ որքան էլ միջոցներ ուղբերգական լինեն: Ձպետք է հաշվի առնել ոչ տարիքը, ոչ սեռը և ոչ էլ խղճի վարանումը:

Թալեաթ, Ներքին գործերի նախարար 1915թ. նոյեմբերի 18 Հալեպի կուսակալությանը

Կոստանդնուպոլսում ամերիկյան դեսպանի՝ արև Մորզեգիանի կողմից իր կառավարության անունից վերջերս արված միջամտությունից պարզ է դառնում, որ ամերիկյան հյուպատոսները գաղտնի միջոցներով տիրապետում են ինֆորմացիային: Նրանք մնում են չհանձնվող, չնայած մեր հավաստիացումներին, որ տեղահանությունները ապահով կիրականացվեն: Ձգույշ եղեք, որ ուշադրություն գրավող իրադարձությունները քաղաքների կամ այլ կենտրոնների մոտ չհրկանացվեն: Մեր ներկայիս քաղաքականության տեսանկյունից ամե-

նակարևորն այն է, որ այդ մասերում բնակվող օտարերկրացիներին համոզենք, որ հայերի արտաքսումը իրականում միայն բռնի տեղահանություն է:

Յետևաբար, կարևոր է, որ միառժամանակ մուրթ մոտեցուն ցուցաբերենք, իսկ սովորական միջոցառումները հարմար վայրերում իրականացվեն:

Բոլոր նրանք, ովքեր հակառակ ինֆորմացիա են տվել, կձերբակալվեն ու ռազմական իշխանություններին կհանձնվեն, որպեսզի ռազմական դատարանը նրանց դատի: Այս իրահանգը հուլիս կարևոր է համարվում:

Թալեաթ 1915թ. դեկտեմբերի 11 Հալեպի կուսակալությանը

Մեզ տեղեկացրել են, որ հայ լրագրիչների որոշ թղթակիցներ լուսանկարներ ու նամակներ են ձեռք բերել, որոնք պատկերում են ողբերգական իրադարձությունները, և դրանք նրանք տվել են Հալեպում ամերիկյան հյուպատոսությանը:

Այս տեսակի վտանգավոր մարդկանց պետք է ձերբակալել ու ճնշել: Ներքին գործերի նախարար:

Թալեաթ 1916թ., հունվարի 15 Հալեպի կառավարությանը

Մեզ տեղեկացրել են, որ որոշ նոր բացված որբանոցներ ընդունում են նաև հայ երեխաներին:

Եթե դա արվեր մեր իրական նպատակների անհրաժեշտությամբ կամ արհամարհան հետևանքով, կառավարությունը կդիտարկեր այդ տեսակ երեխաների կերակրումը կամ նրանց կյանքը երկարացնելու ցանկացած գործն որպես մեր նպատակներին լիովին հակադիր արարք: Քանի որ այդ երեխաների փրկության հարցը դիտարկվում է որպես վնասակար երևույթ:

Որբանոցներին խորհուրդ են տալիս չընդունել այդպիսի երեխաների, և փորձեր էլ չարվեն հատուկ նրանց համար որբանոցներ հիմնել:

Ներքին գործերի նախարար Թալեաթ Ներքին գործերի նախարարությունից Հալեպի կուսակալությանը

Միայն այն որբերը, ովքեր չեն կարող հիշել այն սարսափները, որոնց նրանց ծնողները ենթարկվել են, պետք է հավաքել և խնամել:

Մնացածներին ուղարկեք քարավանների հետ:

Ներքին գործերի նախարար Թալեաթ

Աղբյուր՝ Արժանագրություններ Մեծ պատերազմի վերաբերյալ, հատոր 3, խմբագիր՝ Չարլզ Ֆ. Չորն, «Ազգի գավալներ», 1923

Թիվ 79/Ք. — Ա ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 1915Թ. ՀԱՅԵՐԻ ԱՔՍՈՐՈՒՄԸ ԴԵՊՒ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ԽՈՐԹԵՐԸ. ԿՈՍՏ ՏՐԱՒԻՏԱՆՍԻՊՈԼԻՏԸ ԲԱՐՈՆ ԲՈՒՐՆԻՆԻՆ

Այն բոլոր լուրերը, որոնք հայկական կողմից են ծագում, Փոքր Ասիայի խորքերից այստեղ են ներթափանցում, հաղորդում են չսված գազանությունների մասին, որ տեղի են ունենում հայերին աքսորելու ամենաբարձր: Կարելի էր համաձայնել, որ այդ լուրերը իրենց աղբյուրները նկատի առնելով չափազանցված կարող էին լինել, սակայն, ցավոք, դրանք իրենց հաստատուն են գտնում այստեղի բանկերի և մասնաճյուղերի գեկուցագրերով, վերադարձած գերմանացի սպաների և այլոց ցուցումներով:

Ականատեսները պատմում են սահմելեցուցի տեսարանների մասին, որոնք տեղի են ունենում հայերով բնակեցված գյուղերի էվակուացման ժամանակ: Նույն իմաստով գեկուցում են Դամասկոսում և Տրապիզոնում գտնվող հյուպատոսության մեր ծառայողները: Տրամադրված մեծ մասամբ կոտորվել են, կանանց և երեխաներին ցրի գնով վաճառել են թուրքերին: Նրանք, որոնք դեպի երկրի խորքեր են ճանապարհվել, հասան իրենց նպատակակետին մեկ տասներորդից ավելի նվազ թվաքանակով, քանզի ճանապարհին զրկանքների, հիվանդությունների և հյուժվածության պատճառով մա-

հացել են: Այստեղ արդեն չի կարելի ժխտել, որ թուրքերը, անկասկած, պետական դավաճանության և կոչերի բազում անգամ արժարժված դեպքերը որպես առիթ են օգտագործել, որպեսզի հայ ցեղը բնաջնջել իրագործեն, ինչը, թվում է, նրանց մեծ մասամբ հաջողվել է: Թալեաթ բեյը ասում էր ինձ վերջերս անձամբ հայտնի գոհունակությամբ, որ, օրինակ՝ Երզրումում հազիվ թե այլևս հայ մնացած լինի: Բոլոր լուրերը համընկնում են այն իրողությամբ, որ հայերի դեմ կառավարության նորերս գործադրած միջոցառումները անհամեմատ ավելի շատ մարդկային կյանքեր խլեցին, քան Աբդուլ Համիդի կոտորածները...

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶՆԱՑՈՒԹՅԱՆ ՌԵՅԻՍԱԿԱՆՑՆԵՐ ԴԱՐՈՆ ՖՈՆ ԲԵԹՄԱՆ-ՅՈՒՎԵԳԻՆ ԹՈՒՐԻԱՅՈՒՄ ԱԿԱՏՐՈՒՅՈՒՄ ԳՐԱՐԻՍՏՐՈՒՅՈՒՄ ԴԱՍՏՐՈՒՅՈՒՄ ԳՐԱՐԻՍՏՐՈՒՅՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՕՏՏՈՎՈՐ ԶԵՐՆԻՆԻՆ 1917Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ՀՂԱԾ ԳՐՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ՀԱՎԵԼՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ 2 ՈՐՈՇ ՆՈՒԹԵՐ ԹՈՒՐԻԱՅՈՒՄ ՔՐԻՍՏՈՆՅԱՆՆԵՐԻ ՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Դիարբեքիի վիլայեթ. Ուրֆայի մերձակայքում 4երեն-Շահիրում, որը մի փոքր քաղաք է՝ 1400 հայ ընտանիքից և 140 ասորի ընտանիքից բաղկացած բնակչություն ունի, 400 ընտանիք ամբողջապես աքսորվել է անառվա սկզբին, բոլոր տղամարդիկ սպանվել են: Հարուստ ընտանիքները կանանց ու երեխաների հետ միասին բնաջնջվել են:

Սևերեկում բոլոր տղամարդիկ սպանվել են, կանանց ու երեխաներին՝ ընդհանուր առմամբ 300 ընտանիք, աքսորել են: Հակաբնակների մեծ թվով գյուղերի բնակչությունը սպանված է:

Դիարբեքիի մերձակայքում գտնվող քաղաքային շրջա գյուղի բնակիչներ նույնպես իրենց քահանայով հանդերձ սպանվել են:

Մարդիկում. այս քաղաքի բոլոր հայերն իրենց արքեպիսկոպոսով և 10 քահանայով հանդերձ աքսորվել են, իսկ այնուհետև ճանապարհին սպանվել...

...Սղեղի թեմը. քաղաքում կար 450 հայ ընտանիք, 120 քաղաքացիների ընտանիք, հակաբնակների 30 ընտանիք, բոլորը կողոպտվել, կոտորվել կամ աքսորվել են...

Ուրֆայում. Ուրֆայում, երբեմնի Եղեսիան՝ Աբգար արքայի մայրաքաղաքը, ավելի դաժան ճակատագիր է ունեցել: Երեք անգամ քրիստոնյաները, որոնց թիվը 25000-ից ավել էր, կողոպտվեցին, կոտորվեցին և դաժանությամբ կտտանքների ենթարկվեցին, այնուհետև քաղաքի թաղամասերը իրենականացվեցին և ավերվեցին: Նրանց եպիսկոպոսն ու քահանաները՝ երեկի քաղաքացիներով հանդերձ, մոտ 500 անձ բանտ նետվեցին սպանվելուց առաջ, հետո աքսորվեցին, ինչպես ասում են, դեպի Դիարբեքի, սակայն ճանապարհին նրանց սպանել են: Այժմ հազարավոր որբ-ստրուկներ գտնվում են մահմեդական ընտանիքներում: Այս թվաքանակը շատ-շատերը Ուրֆայի փողոցներում սովամահ են լինում: Ուրֆայի մահմեդականները կառավարության հետ անձամբ մասնակցել են կոտորածներին, նրանք կողոպտել են քրիստոնյաների ամբողջ ունեցվածքը:

Հայաստանը, Քրդստանը և Միջագետքի մեծ մասը դարձել են բարբարոսական և սահմելեցուցի տեսարանների թատերաբեմ: Ջրամբարները, հովիտները, անձավները լցվել են դիակներով: Եփրատի և Տիգրիսի հոսանքները շաբաթներով շարունակ տանում էին նեխած դիակներ: Այս վայրերում ճամփորդները հանդիպում են քաղաքից քաղաք և գյուղից գյուղ թափառող հայերի և քաղաքացիների, որոնք իրենց քաղաքներից և գյուղերից վտարված են, գիշերում են բացօթյա, ենթարկված են անառվա տապին և ծնեռվա ցրտին: Նրանք բոլորը դատապարտված են սարսափելի մահվան:

Քրիստոնյաների ճակատագիրը Թուրքիայի այլ մասերում շատ անորոշ է: Նրանք մշտապես ենթակա են սպանվելու սպառնալիքին:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԿՈՒՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ. 1915թ. ՄԱՅԻՍԻ 24

Վերջին մեկ ամսվա ընթացքում Հայաստանի բոլոր և թուրք բնակչությունը ներգրավված է եղել հայերի կոտորածներում Օսմանյան իշխա-



Հայկական վանք Բիթլիսի մոտ: Մոսկվա, համար 43, 20 նոյեմբերի 1916, տիտղոսաբերթ:



Հայ տարագիրներ, 1915 թ.: Armin T. Wegner. Wallstein Verlag, Germany.

Հայոց Մեծ եղեռնը համաշխարհային պատմության ամենացավոտ, ամենաողբերգական ոճրագործություններից է, մասնավորապես որ դեռևս չի ընդունվել թուրքական իշխանությունների

ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ-100

նությունների թողությունները և հաճախ ցանկացած: Ապրիլի կեսերին նման կոտորածներ են տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Էգիում, Բիբլիսում, Սասունում, Մուշում, Ջեյհանում և ողջ Կիլիկիայում: Կանի շրջակայքում 100 գյուղերի բնակիչներ սպանվել են: Քաղաքի հայկական բաղանջը պաշարված է քրդերի կողմից: Միևնույն ժամանակ Կ.Պոլսում Օսմանյան կառավարությունն իր կատաղությունն է թափում անպաշտպան հայ բնակչության վրա: Հաշվի առնելով թուրքիայի կողմից իրականացված այս նոր հանցագործությունները՝ դաշնակից կառավարությունները հրապարակայնորեն հայտարարում են Բ. Դռանը, որ պատասխանատվության են ենթարկելու ինչպես Օսմանյան կառավարության բոլոր անդամներին, այնպես էլ նրա այն գործակալներին, ովքեր ներգրավված են հայերի կոտորածներում:

ՀԱՏՎԱԾ ԼՈՐԻ ԶԵՅՍԱ ԲՐԱՅՍԻՒ՝ ԼՈՐԻԿԵՐԻ ՊԱՍԱՏՈՒՄ 1915Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ

Ես ցավում եմ, բայց պետք է ասեմ, որ շատ վայրերից ինձ հասած տեղեկությունը վկայում է այն մասին, որ մայիս ամսից ի վեր սպանվածների 800000 թիվը, որ ազնվագարմ կոմիտեի անհավանական է համարում, ցավոք, բավականին հավանական թիվ է: Եվ դա այդպես է, որովհետև ծեղանակված միջոցառումները հիմնովին կանխամտածված և համակարգված են: Կոտորածներն այն քաղաքականության արդյունք են, որը, ինչքան որ հնարավոր է պարզել, որոշակի ժամանակահատված մշակվել է այն ավագակախների կողմից, որն այսօր վերահսկում է կայսրության կառավարությունը:

ՀԱՏՎԱԾ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՓՈՒՍՆԱՑԳՈՐԾԱՆԱԽԱՐԱՐ ԼՈՐԻ ՈՒՐԵՆՑ ՍԵՆՍԻՒՒ՝ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱՍԱՏՈՒՄ 1915Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ՈՒՆԵՑԱԾ ԵԼՈՒՅԹԻՑ

Ես կարծում եմ՝ առանց որևէ չափազանցության կարելի է ասել, որ մարդկության պատմության ընթացքում ավելի սարսափելի ոճրագործություն չի իրականացվել...: Սա կանխամտածված և վաղուց որոշված ոճրագործություն է...: Սա թուրքիան հայերից մաքրելու և նրանց գոյությանը վերջ տալու կանխամտածված և երկար մշակված քաղաքականություն է: Այն իրականացվում է համակարգված կերպով, և հրամանները գալիս էին վերակից...:

ՍԱԼՈՆԻԿՈՒ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀՅՈՒՊԱՏՈՒ ՍԵՆՍԻՒՍ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԴԵԼՎԱՍԵՆ ԻՍԱԼՈՆԻԿ, 20 ՕԳՈՍՏՈՍԻ, 1915, ժ. 18.30 (ՍՍՏՅՎԱԾ ժ. 22.55)

Հաղորդագրություն: Ես տարբեր աղբյուրներից տեղեկություններ եմ ստացել, որ հայերը հալածանքների են ենթարկվում ինչպես Կոնստանդնուպոլսում, այնպես էլ գավառներում: Կայսրությունում կոտորած հայերի թիվը հասնում է 200000-ի, և եթե այս վիճակը երկար տևի, ապա, այդ ժողովուրդն ամբողջովին կքանջվի...:

ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՎԱԿԱՆ ԶԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ (ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 1915թ.)

... Հայերի թիվը, որոնք սպանվեցին, անհետացան, բռնի իսլամացվեցին, առևանգվեցին հայ ազգաբնակչության

չության զանգվածային տեղահանության ժամանակ Հայաստանի և Փոքր Ասիայի նահանգներում, անցնում է 500000-ից:

Կոստանդնուպոլսում ձերբակալությունները մշտական են և ձերբակալվածներին հեռացնում են մայրաքաղաքներից՝ առանց երաշխավորելու նրանց գոյությունը: Նրանք առևտրականներն են՝ ծնված նահանգներում, բայց հաստատված երկար ժամանակ Կոստանդնուպոլսում: Մի քանի հայերի հաջողվել է ձեռք բերել Օսմանյան տարածքը լքելու թույլտվությունը՝ թուրք և նույնիսկ գերմանացի պաշտոնյաներին վճարելով մեծ գումար, որը հաճախ գերազանցում էր 100000 ֆրանկը:

Թուրքիայի ողջ հայ բնակչությունը վերջնականապես դատապարտվեց մահվան, և այդ որոշումը գործի դրվեց կայսրությունում գերմանական մեթոդով: Ոչ Գերմանիան, ոչ էլ Ավստրիան իրենց դաշնակցին կանգնեցնելու փորձ չարեցին. իրենց դեսպանները Կոստանդնուպոլսում ասիմիլացիայի վեց ինչպիսի կազմակերպիչներին հարցնեցին՝ ինչու ենք ձերբակալում իսլամադավաններին, որոնք ոչ մի քայլ չարեցին, և որ նրանք երևան կհանեն թղթի մի պատառիկ հաշիվների պարզման օրը՝ արդարանալու համար: Նահանգներում այս երկու տերությունների հյուպատոսները մշուռ են, որ այն «Թուրքիայի ներքին քաղաքականության» հարցն է: Ավելին՝ գերմանացի սպաները ամբողջ օսմանյան տարածքում այսօր թուրքական գերագույն դասի կանխածելի տերերն են, ընդունել են քաղաքացիական և զինվորական իշխանությունների կողմից կիրառված միջոցները: Նրանք չկարողացան պատճառաբանել ժամհարմների և զորքի դահճի այդ աշխատանքը կատարելու գործելակերպը:

ՍԵՆՍԻՍ ԳՐԱԳՈՐԾԱՎՈՐ ՊԱՐՈՆ ՄԱՐՍԵԼ ԿԱՇԵՆԵ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅ ՊՈՐՏՈՒ ԱՐԻՍԻՏԻ ԲՐԻՍԻՆ ԺՈՒՐԻՉ, 19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 1915թ.

Ըստ արժանահավատ ականատեսների պատմությունների՝ ջարդերն իրենց ակադրությանը գերազանցում են 1894-1895 թվականների ջարդերին, իսկ 1915 թվականը արյունով է լցրել Հայաստանը... 1915 թվականին Բեռլինի զինվորական ակադեմիայի նախկին սան Էմվեր փաշայի ղեկավարությամբ այս դժբախտներից մեկ միլիոնը բնաջնջվեցին գերմանական սպաների և հյուպատոսների մեղսակցությամբ: Պալատի արտաքին գործերի մեր հանձնաժողովին պատվելի պարոն Սիարոնյանի կողմից տեղեկացվեց մի ամբողջ ժողովրդի բնաջնջման նոր փորձի մասին: Այս երևելի հայի ողբերգական պատմությունը հաստատվեց ամերիկյան և շվեյցարական միսիոներների, հյուպատոսների զեկույցներով, որոնք ներառվել են հարգաբժան Լորդ Բրայսի վերջին գրքում: Ոչ ոք չէր կարող անտարբեր մնալ բնաջնջման ենթարկված այս ժողովրդի նահատակության հանդեպ: Հակառակ ներկա դժբախտությունների, համաձայն մեր երկրի ազնվագարմ և արտակարգ ավանդության՝ Ֆրանսիան մեկ անգամ ևս բողոքի ծայր կբարձրացնի այդ գաղտնի ռոմիոների դեմ:

ԿԱՀԻՐԵՆԻՍ ՈՒՍԱԿԱՆ ԴԵՊՈՆԱՐԻՍ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Պ. ՍԱԶՆՈՒԿԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 58 ԿԱՀԻՐԵ, 25 ՀՈՒՆԻՍԻ 1915Թ.

Սիրիայում և նրան հարակից շրջաններում հայերի համոզեալ կատարված դաժանությունները հասնում են անհավատալի չափերի: Թալանը, բռնությունները, կոտորածը և հաճախ ամբողջ հայկական գյուղերի գլխտարածվելիս նախկինում վիճակում են անընդհատ ընտանիքները անողորմաբար բաժանվում են, կանանց խլում են իրենց տղաներին, ընտանիքներին՝ ծնողներին, և բոլորն ուղարկվում են աքաղաղության գործարարներին: Հատկապես ընտանիքները և խոստումներով թուրք և նույնիսկ գերմանացի պաշտոնյաները հաշիվեցին հայերին համաձայն թուրքի և նույնիսկ գերմանացի պաշտոնյաների: Սպառնալիքներով, խաբեությամբ և խոստումներով թուրքերը դրդեցին հայերին համաձայն Ձեյթունը և գրավելով քաղաքը, ամենադաժան կերպով հաշիվեցին հայերին տեղափոխվելու և նրանց Դաշնակցությանը հաշիվեցին: Վերջինից զրկվեցին հայերի և կոտորվեցին՝ չնայած լրիվ անպատեժիության լայն խոստումների...:

Վերջերս 12000-անոց թուրքական զորքերը գրավեցին Ձեյթունը, որը ծառայում էր որպես հայության պատվար և իրեն մոտ չէր թողնում թուրքական ուժերին: Սպառնալիքներով, խաբեությամբ և խոստումներով թուրքերը դրդեցին հայերին համաձայն Ձեյթունը և գրավելով քաղաքը, ամենադաժան կերպով հաշիվեցին հայերին տեղափոխվելու և նրանց Դաշնակցությանը հաշիվեցին: Վերջինից զրկվեցին հայերի և կոտորվեցին՝ չնայած լրիվ անպատեժիության լայն խոստումների...:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Պ. ՍԱԶՆՈՒԿԻ ԵԼՈՒՅԹՈՒՄ ԴԵՆԱԿԱՆ ԴՈՒՍԱՅԻ ԲԱՏԱՄԱՆ ՕՐԸ 9 ՓԵՏՐՎԱՐԻ, 1916Թ.

...Ինձ դեռևս նախկինում վիճակվել էր ձեր առջև հիշատակել այդ դժբախտ ժողովրդի չլսված տանջանքների մասին: Դաշնակցային Գերմանիայի բարեհաճ աջքի առջև, թուրքերը, ըստ երևույթին, մտադիր են իրագործել հայ բնակչության լիակատար բնաջնջման մասին իրենց վաղեմի երազանքը, որը (հայ բնակչությունը) չի ենթարկվում մահապատժի և այդպիսով, արգելք է ծառայում թուրքական կայսրությունը իրեն տնտեսապես և քաղաքականապես ենթարկելու գերմանական ծրագրերի համար...:

ՈՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԴԵՄՊՈՆ ԿԱՆԳԵՆՀԱՅՍԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՈՒՅՆԱԿԱՆՑԵՐ ԲԵԹՈՍԱՆ-ՀՈՒՎԵԳԻՆ 17 ՀՈՒՆԻՍԻ 1915Թ.

Հայ բնակչության տեղահանումը իրենց տներին արևելյան Անատոլիայի շրջաններում և նրանց վերաբնակեցումը այլ շրջաններում իրականացվում է դաժանորեն... Այնպիսի դարձավ, որ հայերի տեղահանությունը բխում է ոչ միայն ռազմական հանգամանքներից: Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը վերջերս անկեղծ հայտարարեց այդ մասին դոկտոր Մորցմանին, որն այժմ ծառայում է կայսերական դեսպանությունում: Թալեաթն ասաց, որ «Բարձր Դուռը մտադիր է օգտվել համաշխարհային պատերազմից, որպեսզի ամբողջովին երկիրը մաքրի ներքին թշնամիներից՝ տեղի բրիտանացիներից այնպես, որ այլ երկրներն իրենց դիվանագիտական միջամտությամբ չխանգարեն դա անել: Այդ միջոցառումը կծառայի Թուրքիայի բոլոր դաշնակիցներին և հատկապես գերմանացիներին շահերին, և վերջիններս էլ այդպիսով կկարողանան ամրապնդվել...»:

ՈՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԴԵՄՊՈՆ ԴՈՒՍԱՅԻ ՀԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՈՒՅՆԱԿԱՆՑԵՐ ԲԵԹՈՍԱՆ-ՀՈՒՎԵԳԻՆ 25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1915Թ.

...Վերջերս ստացվեց հետևյալ հեռագիրը պարոն Ռյուպերից, որը թվագրված է սույն ամսի 18-ով: «Վերջին մի քանի օրերի ընթացքում այստեղ ոտքով արևելքից եկան հայ կանանց և երեխաների բազմաթիվ շարասյուներ, որոնք գտնվում էին սովամահության եզրին և պետք է...

ՈՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԴԵՄՊՈՆ ԴՈՒՍԱՅԻ ՀԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՈՒՅՆԱԿԱՆՑԵՐ ԲԵԹՈՍԱՆ-ՀՈՒՎԵԳԻՆ 25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1915Թ.

Սարաշում և Հալեպում տեղահանությունը ընթանում է մեծ թափով: Սարաշում չինայվեցին նույնիսկ այն ընտանիքները, որոնք ունեին ներքին գործերի նախարարի բնակվելու հատուկ թույլտվությունը: Դիարբեքի իր գործունեությամբ հայտնի վալի Ռաշիդ բեյը Անգորայում զբաղված է նրանով, որ փնտրում է վերջին հայերին (ներառյալ կաթոլիկներին) և տեղահանում նրանց: Նույն ձևով վարվում էին Եսքիզեհիրում և Իզմիրի շրջակայքում դեռ մնացած բողոքական և կաթոլիկ հայերի հետ: Չնայած պաշտոնական անձանց բոլոր ժխտումներին, հայերի հետապնդման այս վերջին փուլում մեծ դեր է խաղում մահապատժի կատարումը: Արդեն ապրիլի կեսերին քահանա

նուղարկվեցին ավելի հեռու, եթե չհամառային այստեղ այս օրերի ընթացքում:

«Բարձր Դուռն հրամանը ձեռնպահ մնաց նրանց տեղահանությունից, ովքեր դեռևս գտնվում են իրենց տներում, բացահայտ կեղծիք է, քանի որ նրանցից մի քանիսին այդ իմաստով կարելի է համարել կասկածելի, և դա հաճախ օգտագործվում է իբրև պատրվակ հայերի տեղահանության համար:

Հակառակ այդ հրամանի, զինծառայողների ընտանիքների համար չեն անում բացառություն: Նմանապես դաժանորեն տեղահանում են ծանր հիվանդներին: Տեղահանվածների շարասյուները շարժվում են դեպի Դեյր-է-Ջոր և Մոսուլ: Չնայած Բարձր Դուռն հավաստիացումներին, ամեն ինչ ուղղված է հայ ժողովրդին ոչնչացնելուն:

ՀԱՅԵՐԻ ՀԵՏԱՊՆՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐԻԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇՐՋԱՆԵՐՈՒՄ ՏԵՐԱՊՈՒՎ, 10 ՀՈՒՆԻՍԻ 1916Թ.

ԿԱՅՆԱԿԱՆ ԴԵՄՊՈՆԱԿԱՆ ԴԵՄՊՈՆ ԴՈՒՍԱՅԻ Ն 368 ԹԱԳԱՎ. ՍՈՒՐՀԱՆ-ԴԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ

Հայերի հետապնդումները արևելյան նահանգներում թևակոխել են իրենց վերջնական փուլը:

Թուրքական կառավարությունը թույլ չտվեց իրեն խանգարել Հայկական հարցի լուծումը հայ ցեղի ոչնչացման ճանապարհով իր ծրագրի կատարմանը ոչ մեր միջնորդությունների, ոչ ամերիկյան դեսպանի և պապական լեգատի, ինչպես նաև ԱՄՆ-տանտի կողմից սպառնալիքների, առավել ևս արևմուտքի հասարակական կարծիքը հաշիվ առնելու միջոցով: Այժմ նա պատրաստվում է ձուլել և ցրել առաջին տեղահանությունը վեապրած հայերի վերջին մնացորդները: Ընդ որում, խոսքը վերաբերում է Հյուսիսային Սիրիայում (Մարաշ, Հալեպ, Ռաս-ու-Լայն), ինչպես նաև Փոքր Ասիայի որոշ խոշոր բնակավայրերում (Անգորա, Կոնիա) մնացածներին, հատկապես նրանց, ովքեր այստեղ են հայտնվել տեղահանության հետևանքով, կամ էլ ավելի շուտ այստեղ տեղափոխվածների: Սակայն նախքան վերջին շրջանում, ինչպես նաև, կաթոլիկ և բողոքական հայերի շրջանում այժմ կատարվում են «զտումներ», թեև Բարձր Դուռը կրկին խոստացել է խնայել այս վերջիններին: Այս մնացածները մասամբ տեղահանվում են ավելի հեռու Միջագետք, իսկ մասամբ էլ ենթարկվում են մահապատժի և ցեղասպանության:

Ռաս-ու-Լայնի համակենտրոնացման ճամբարը, որը դեռ ապրիլի վերջերին հաշվում էր 2000 բանտարկյալներ, ամբողջությամբ «զտվել է», Դեր-Ջոր անցնելու ճանապարհին առաջին շարասյունը ենթարկվեց հարձակման և ոչնչացման: Ենթադրվում է, որ մյուսների հետ վարվել են նույն ձևով:

Սարաշում և Հալեպում տեղահանությունը ընթանում է մեծ թափով: Սարաշում չինայվեցին նույնիսկ այն ընտանիքները, որոնք ունեին ներքին գործերի նախարարի բնակվելու հատուկ թույլտվությունը: Դիարբեքի իր գործունեությամբ հայտնի վալի Ռաշիդ բեյը Անգորայում զբաղված է նրանով, որ փնտրում է վերջին հայերին (ներառյալ կաթոլիկներին) և տեղահանում նրանց: Նույն ձևով վարվում էին Եսքիզեհիրում և Իզմիրի շրջակայքում դեռ մնացած բողոքական և կաթոլիկ հայերի հետ: Չնայած պաշտոնական անձանց բոլոր ժխտումներին, հայերի հետապնդման այս վերջին փուլում մեծ դեր է խաղում մահապատժի կատարումը: Արդեն ապրիլի կեսերին քահանա

Քրիստոֆելը Ավազից հայտնում է, որ Էրեզումում ինքը տեսել է վերջին հայ քրիստոնյաներին, այնտեղից մինչև Ավազ յուրաքանչյուր բնակավայր հիմնավորապես «զտված» է կամ աքաղաղված, կամ կրոնափոխ արված, կամ ոչնչացված է: Այլապես ոչ մի տեղ չէր լսվում որևէ հայկական հնչյուն:

ՍԵՏԵՐՈՒՍ ԿՈՍՏԱՆՊՈՒՊՈԼԻՍ, 10 ՀՈՒՆԻՍԻ, 1915Թ. [ՍՍՏՅՎԱԾ՝ ՀՈՒՆԻՍԻ 14]

Հայերի հալածանքներն ընդունում են աննախադեպ չափեր: Ամենատարբեր շրջաններից ստացվող զեկուցագրերը վկայում են, որ հետևողական քայլեր են ձեռնարկվում խաղաղ հայ բնակիչներին արմատախիլ անելու և կամայական ձերբակալությունների, սարսափելի տանջանքների, զանգվածային արտաքսումների ու կայսրության մի ծայրից մյուսն իրականացվող բռնագաղթի միջոցով նրանց ոչնչացնելու և չքավորության մատնելու ուղղությամբ: Բռնագաղթն ուղեկցվում է բռնաբարությունների, կողոպուտի և կոտորածի վերածվող սպանությունների հաճախակի կրկնվող դեպքերով: Այդ միջոցառումներն իրագործվում են ոչ թե ժողովրդի կամ մոլեռանդորեն տրամադրված խավերի պահանջով, այլ զուտ կամայական բնույթ ունեն և ուղղորդվում են Կոստանդնուպոլսից: Դրանք իրականացվում են ռազմական անհրաժեշտության անվան տակ, հաճախ այն վայրերում, ուր ռազմական գործողությունների հավանականություն չկա: Մահապատժի են հայերը ապրել են համաշխարհային կյանքով, սակայն...:

ԱՄԵՐԻԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՒՄՈՒՄ ԽԱՐԲԵՐԻ 24-Ը ՀՈՒՆԻՍԻ 1915Թ.

ՄԵԾՈՐԳՈՂ ՀԵՆՐԻ ՄՈՐԳԵՆ-ԹԱՈՒՒՆ ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՄՊՈՆՆԻՆ Կ.ՊՈԼԻՍ

Սիր, Պատիվ ունեն իմ հունիսի 30-ի և հուլիսի 11-ի հաղորդագրերին (թղթապանակ թիվ 840.1), որոնք վերաբերում են այս տարածաշրջանից հայերի արտաքսմանը, ավելի ճիշտ համընդհանուր սպառնալիքի, հետևյալ լրացումները կատարել...:

...Այլևս զաղտնիք չէ՝ հատուկ ծրագրով նախատեսված է բնաջնջն անել հայերին որպես ցեղ, ուղղակի նման նպատակը այնպիսի սառնասրտությամբ ու բարբարոսությամբ, ավելին՝ արդյունավետությամբ էր իրագործվում, որ սկզբում գլխի էլ չէին ընկնում, թե ինչ է կատարվում...:

...Լիովին հաստատվել է, որ մինչև այժմ այստեղից բռնագաղթածները քաղաքից դուրս գալուց ընդամենը մեկ-երկու օր անց մորթվել են, որևէ այլ ձևով սպանվել, ընդ որում՝ դա արել են ոչ միայն ճանապարհին նրանց սպասող քուրդ իրոսակախները, այլև հիմնականում աքսորականներին ուղեկցող զինվոր-նստիկաններն ու չեթները (պալանավորները), որոնց բանտերից ազատ են արձակել տարագրվող հայերին կոտորելու համար...:

...Ես չեմ կարծում, որ համաշխարհային պատմության մեջ երբևէ իրագործվել է ավելի հանդուրժանոր ու արմատական նախաձեռնություն, ինչ այժմ տեղի է ունենում մեր տարածաշրջանում, և ոչ էլ հավանում են, որ մարդկային ուղեղն ի գործ է հղանալ ավելի ահավոր ու սատանայական ծրագիր...:

...Տեղի ունեցածը այդպես կկոչվեր նույնիսկ այն դեպքում, եթե թողնեին, որ բոլորն էլ ճանապարհին մեռնեն: Բայց քանի որ մեծ մասն ուղղակի է նախաձեռնվել ենթարկվել, ոչ մի կասկած չի կարող լինել, որ կառավարության հրամանով է կատարվել...:



ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ-100

ՃԱՆԱԳՈՒՄ, ԴԱՏԱԴԱՐՏՈՒՄ, ՀԱՏՈՒՅՈՒՄ



Լինում է, չէ՞, մարդուն տեսնում ես առաջին անգամ, բայց թվում է, թե վաղուց գիտեիր նրան: Այդ զգացողությունն ունեցան «Գրիգոր Լարենցացի» համալսարանում գրողների միության վարչության նախագահ Վարդան Գևորգյանի կազմակերպած շնորհանդեսի մասնակիցները: Հրեա պատմաբան, ցեղասպանագետ, Իսրայելի Բաց համալսարանի պրոֆեսոր Յաիր Աուրոնի «Անընդունելի անտարբերություն. սիոնիզմը և Հայոց ցեղասպանությունը» գրքի շնորհանդեսի: Չարմանալիորեն, իսկ գուցե բնականորեն նույն զգացողությունն ուներ և մեր հյուրը: Նա, որ առաջին անգամ էր այցելել Արցախ, խոստովանեց, որ իրեն զգում է ջերմ, հյուրընկալ, հարազատ մարդկանց միջավայրում:

ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ԱՄՆԱԿՑՈՒՄ Ե ԵՎ ԱՆՏԱՐԲԵՐՆԵՐԻ ԲԱՆԱԿԸ

ը, դիտարկում է հրեաների գիտակցության մեջ ամրապնդված այն ընկալումը, թե հոլոքոսթը՝ ողջակիզումը, եզակի է, յուրահատուկ: Գրքից այն տպավորությունն է ստանում, թե Հ. Աուրոնը նույնպես հոլոքոսթը առանձնացնում է, դրան ավելի տարողունակ իմաստ վերագրում «ցեղասպանություն» հասկացության մեջ լիովին չըմբռնվող: Այդուհանդերձ, նա շեշտում է, որ երկու դեպքում էլ չարիք է տեղի ունեցել, և զանգվածաբար անմեղ մարդիկ են զոհվել, ինչը պիտի միավորի, մերժեցնի հանրություններին՝ համատեղ պայքարելու՝ կանխելու համար նման հանցագործությունները: Սինչըռե հոլոքոսթի՝ առանձնահատուկ լինելու գիտակցումը հրեաներին դրդում է անտեսելու, չիմանալու տալու, մոռանալու, ավելի ճշգրիտ՝ ուրանալու ուրիշ ժողովուրդների ցեղասպանությունը, այդ թվում և՛ հայոց: Հեղինակն այսպիսի դիրքորոշումը ոչ բարոյական է համարում:

- Ես ինձ զգում եմ որպես ծեր եղբայր, հայրենակից՝ բառի ամենալայն իմաստով: Չէ՞ որ մենք եղբայրակից ազգ ենք, նույն ճանապարհն ենք անցել, նույն ճակատագիրն ենք ունեցել:

1915-16 թվականներին և դրանից հետո, երբ մի ողջ ժողովուրդ էր կոտորվում, անտարբեր կեցվածք են ընդունել ոչ միայն սիոնիստները, Պաղեստինի հրեա համայնքը, այլև ամբողջ աշխարհը: Իրեն քաղաքակիրթ համարող Եվրոպայի ոչինչ չի ձեռնարկել՝ կանխելու համար եղեռնը և կան փրկելու համար հայերին: Ընդհակառակը, հետագայում փորձել են մոռացության տալ, մարդկության հավաքական հիշողությունից ջնջել այդ եղեռնագործությունը: Ողբերգական հետևանքը եղել է այն, որ աշխարհի անտարբեր հայացքի առջև երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ողջակիզման են ենթարկվել Եվրոպայում ապրող հրեաները: Ոչ մի տերություն չի բռնել գերմանական մացիստների ձեռքը: Հետագայում ևս ցեղասպանություններ են տեղի ունեցել նախկին Հարավային Ասիայում, Ռուսաստանում, և աշխարհը կույր է ձևացել: Հոլոքոսթը Գերմանիան ճանաչել է: Սինչըռե Մեծ եղեռնից 100 տարի անց էլ Թուրքիան շարունակում է ժխտել իր ոճրագործությունը, Հայոց ցեղասպանությունը չեն ընդունում աշխարհի շատ երկրներ, այդ թվում և՛ Իսրայելը: Իսկ հրամանը լավ գիտեն, թե ինչ է ճշմանակում սպանվել ազգային պատկանելության համար: Յ. Աուրոնը նման պահվածքն անբարոյ է համարում և համազօգյալ է, որ «ժխտելով այլ ժողովուրդի կրթական իրականացված ցեղասպանությունը՝ մենք պղծում ենք սեփական հոլոքոսթի ժառանգությունը»: Ցեղասպանության կրկնման սպառնալիքը կմնա օդում կախված, քանի դեռ ամեն մեկս և բոլորս չենք պայքարում այն բացառելու համար, իսկ պայքարի ձևերից մեկը դրա համար պատասխանատվությունն է և ընդունումը. այսպես է մտածում գիտնականը:

Գրքի վրա հեղինակն աշխատել է 5 տարի: Սակայն բազմաթիվ արխիվային նյութերի ուսումնասիրությունները, այլ հետազոտություններ, հանդիպումները տարբեր մարդկանց հետ շատ ավելի երկար են տևել:

- Աշխատությունում արտացոլել են հրեաների արձագանքը ծեր Ցեղասպանությանը, նրանց կարծիքները, դիրքորոշումը. առում է: - Հրեաների, ովքեր տեսել են ինչպես են հայ փախստականները գալիս Պաղեստին, ուր և ապաստան են գտել: Նրանցից ոմանք սպանել են եղել թուրքական բանակում, ոմանք նաև ակնատես են եղել 1915 թվականի հայկական կոտորածներին: Նրանցից ոմանք, որպես վկաների, կանչել են: Նրանց վկայությունները կարևոր դեր են խաղացել, քանի որ վկայել են ոչ թե իրենց լսածը կամ պատմածը, այլ աչքով տեսածը: Այդ վկայությունները շատ են օգնել գիրքն ավերջական դարձնելու:

Ի վերջո, գիտնականն իր համար բացահայտել է մի իրողություն, որ հնարավոր չէր կանխատեսել:

Օսմանյան կայսրությունում և՛ հայերը, և՛ հրեաները ազգային փոքրամասնություն էին: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերը հրեշավոր ոճիր գործեցին՝ փորձելով ոչնչացնել հայերին՝ ամխտի, բոլորին, ողջ ազգը: Հրեա ժողովուրդի զավակը՝ Աուրոնը, ցանկացել է պարզել, թե Պաղեստինի հրեական համայնքը և սիոնիստներն ինչպես են վերաբերվել իրենց աչքի առջև տեղի ունեցող ողբերգությանը՝ հայերի բնաջնջմանը, թեմա, որը շրջանցվում է: Սա կօգնե նրան՝ ավելի խորը հասկանալու Հայոց ցեղասպանության վերաբերմամբ Իսրայելի կառավարության խուսափողական վարքը, հրեական հանրության անտարբերության պատճառները: Իսկ ի՞նչ է բացահայտել գիտնականը: Պարզել է, որ սիոնիստական շարժման առաջնորդները, համայնքը, ելնելով սեփական շահերից, ոչինչ չեն արել, չեն անելու են տվել հայ ժողովուրդի ցավը, նույնիսկ աջակցել են հանցագործներին՝ երիտթուրքերին: Իսկ առանձին անհատների մղումները, ովքեր կարեկցում և սատարում էին հայերին, «ոչ թե հրեական, այլ համամարդկային էին»: Հայերեն հրատարակության համար հեղինակի առաջաբանում կարդում ենք. «Ես հույս ունեի գտնել ավելի մեծ կարեկցանք հայ ժողովուրդի տառապանքների հանդեպ, ելնելով մեր ճակատագրերի նմանությունից, ավելի շատ փորձեր՝ օգնելու և աջակցելու, թեկուզ այն սահմանափակ հնարավորությունների չափով, որ ունեն հրեա ժողովուրդը և առանձնապես սիոնիստական շարժումը և Պաղեստինի նախապետական հրեական համայնքը: Դրա փոխարեն ես գտա անընդունելի անտարբերություն և մի վերաբերմունք, որտեղ մասնավորը գերիշխում է համընդհանրականի վրա»:

Հեղինակը, համեմատության մեջ դնելով ցեղասպանությունները, այդ թվում նաև՝ Հայոց ցեղասպանությունը, ցույց տալով դրանց ընդհանրությունները,

ընդհանրապես արժանապատիվ է ՀՀ նախագահի մրցանակին:

- Չեն գրել, որ շնորհակալություն հայտնեք, համեստությունն ու անշահախնդրությունն իսկական մարդուն ու գիտնականին են հատուկ: - Գործն արել են, քանի որ դա իմ կոչումն է: Ցեղասպանագետ լինելով՝ արժանանում եմ ոչ միայն Հայոց ցեղասպանության, այլև աշխարհի տարբեր վայրերում տեղի ունեցած նման ողբերգությունների թեման:

Իսրայելի որդեգրած քաղաքականությունը Հայոց ցեղասպանության հարցում Յ. Աուրոնի համար ընդունելի չէ: «Իմ գրքով պայքարում եմ Հայոց ցեղասպանության ժխտման դեմ, իսրայելական կառավարության պաշտոնական դիրքորոշման դեմ», - առում է: Այս պայքարի արդյունքն է նաև, որ 2013 թվականին Իսրայելի խորհրդարանում՝ Բնետեթում, Հայոց ցեղասպանության հարցը ներառվեց օրակարգում, և ոչ մեկը դեմ չէղավ, այնինչ երկար տարիներ մերժում էին:

- Իսրայելը այս տարի ևս չի ճանաչի Հայոց ցեղասպանությունը, - շարունակում է: - Ցավալի է, բայց այդպես է: Սակայն դուք շատ ընկերներ, բարեկամներ ունեք Իսրայելի հրեա հասարակության մեջ: Ես պատրաստ եմ պայքարելու մինչև վերջ, քանի դեռ ժխտվում է Հայոց ցեղասպանությունը, քանի դեռ այն չի ընդունվել աշխարհի շատ երկրների կողմից:

3. Աուրոնը Սուևզայիթում, Բաքվում ազերիների կողմից հայազգի բնակչության սպանությունները չի որակում որպես ցեղասպանություն, որակում է որպես ջարդեր: Նա արցախցիներիս պայքարն արդարացի է համարում և ցավով փաստում, որ Իսրայելում ժողովրդի բացարձակ մեծամասնությունը տեղայն չէ Արցախի մասին: Ամոթալի իրողություն է համարում Իսրայելի կողմից Ադրբեյջանին զենք վաճառելը, զենք, որն օգտագործվում է մեր՝ արցախցիներիս դեմ: Փորձում է պայքարել իշխանությունների նման գործունեության դեմ, բայց՝ ապարդյուն:

- Երբ մենք զենք ենք վաճառում, ծեր հանդեպ մեծ մեղք ենք գործում: Այս դեպքում ևս չեն ուզում իմ երկրի քաղաքացին լինել: Դա բացառաբաց առում են ամենուրեք, ոչ միայն այստեղ: Ասում են, որ ամաչում են իմ երկրի քաղաքականության համար:

Մինչև Արցախ գալը Յ. Աուրոնը շատ քիչ բան գիտեր մեր երկրի, ժողովրդի մասին: Կարծում էր, թե այստեղ կտեսնի ավերակներ, թշվառություն... Ուրիշ բան տեսավ: Տեսավ ուժեղ և արժանապատիվ մի ժողովուրդ, առաջնագծում կանգնած զինվորի հզոր ոգին, զինվոր, ով խաղաղություն է ուզում, բայց պատրաստ է կյանքի գնով պաշտպանելու հայրենիքը: Ստեփանակերտում զբոսնելիս տեսավ բարի, ժպտուն հայացքներ, խաղաղ առօրյա: Հայ ժողովրդի դատի պաշտպանը ապրիլին Ծիծեռնակաբերդում իր հարգանքի տուրքը կմատուցի 100 տարի առաջ թուրքական յաթաղանին զոհ գնացած մեկուկես միլիոն հայերի հիշատակին: Նա դասախոսում է Հայաստանի Ամերիկյան համալսարանում: Հուլիսին երևանում կլինի: Կհաջողվի՞ Արցախ գալ՝ հաստատ չգիտի: Եթե ցանկությունը երկուստեք է, երկի կհաջողվի: Եվ մեր հրեա բարեկամները կտեսնի նոր, գունառատ Ստեփանակերտը՝ ձյան ձերմակի փոխարեն թավալյա կանաչ, վառ ծաղիկներ, կտեսնի նույնիսկ երկրորդ ուշ ժամերին առանց երկուրդի պուրակներում ու փողոցներում ճեմող մարդկանց, ովքեր համուն խաղաղ կյանքի ու անկախության անցել են պատերազմի փորձության միջոցով և չեն ուզում մեկուսացված լինել աշխարհից, ուզում են իրենց զգալ աշխարհի մի մասնիկը, բարկացողիչը, ովքեր, ի հեռուկա անտարբերների ու չարականների, անշեղորեն շարունակում են պայքարը՝ գարգացնելով տնտեսությունը, հզորացնելով բանակը, որպեսզի արյամբ ձեռք բերված ազատությունը պահեն ու պաշտպանեն:

Յուլիսար ԳՐԻԳՈՐՅԱՆ

Յուլիսար ԳՐԻԳՈՐՅԱՆ

Յուլիսար ԳՐԻԳՈՐՅԱՆ

Յուլիսար ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կոտորածի, չարարանքի և արտաքսման սարսափելի լուրով հայ քրիստոնյաները հատուկ խնդրանքով դիմել են ամերիկացիների կարեկցությանը և օգնությանը: Թուրքախույն բազմաթիվ և ստույգ արդյունքներից հայտնի դարձավ, որ դա անկարգ ու անընչառ հարստահարում է, բայց սխտեմատիկ ջարդերը տանում են դեպի հայ ցեղի բնաջնջումը: Հազարավոր ընտանիքներ վտարվեցին իրենց տներին և սովորական եղանակով ճանապարհին: Քաղաքները և գյուղերը ազատվեցին իրենց բնակիչներից: Շատերին տանջանքների ենթարկեցին, շատերին էլ ստիպեցին կրոնափոխ լինել: Կանանց ընդգրկում էին հարեմուրդի մեջ, իսկ երեխաները ստրկության էին վաճառվում:

Այս բռնությունը չի կարող արդարացվել անգամ ռազմական անհրաժեշտության հողի վրա: Ռուսների հավանական օգնության ուշացման պատճառով տարածքները ավերվեցին, և հայերը դիմում էին պատասխանության, ինչպես Վանում նրանք դիմեցին ինքնապաշտպանության: Թվում էր՝ թուրքերը հուսահատվել են, բայց կայուն կերպով ճնշում էին հայերին և կանխում Հայաստանի ինքնորոշումը, որի արդյունքում դաշակիցները նվաճեցին Թուրքիան:

Այստեղ տեղի է ունենում մի շատ հետաքրքիր բան. հասարակ Օսմանյան կայսրության ճնշմանը, ամերիկյան փողոց և կյանքը վերելք է ապրում... Թուրքախույն այժմ պահպանվում է 10 ամերիկյան քուլեք, որտեղ սովորում է ավելի քան 40 000 աշակերտ, որի մեծամասնությունը կազմում էին հայերը... Հազարավոր հայեր թուրքական բռնակալությունից խուսափելու համար ցանկացել են ապաստան գտնել ԱՄՆ-ում և դառնալ մեր երկրի լավ քաղաքացիներ: Հայերի ներկայիս դժբախտությունը, մոտավոր վտանգը Ասիայում պատճառ կհանդիսանան լայնածավալ անհանգստությունների ԱՄՆ-ում:

Աղբյուրը՝ Հայոց Ցեղասպանության ինստիտուտ-թանգարանի կայք (<http://www.genocide-museum.am/>):

Եղի՞ր այնքան ուժեղ, իրատուն է պատմությունը, որ թշնամիդ չհանդգնի հարձակվելու: Զգացնել տուր թշնամուդ, որ ամեն վայրկյան պատրաստ են պատերազմելու, և նա կիրառվի զենքի ուժով քեզ անհանգստացնելու մտքից: Արգահատելի է կրավորական մատակարար ժողովուրդը: Նրա համար գուցե ցավեն, բայց նրան չեն զինակցի: Թույլերը զինակցի չեն ունենում:

Պարզահան ՆՈՒՅԻՆ

Այո, մենք պետք է հետևենք նաև Նոյեմբերի խոսքին և իրատվենք ու հասկանանք, որ թույլերը զինակցի չեն ունենում: Մենք ցեղասպանության ճանաչումով չի, որ պիտի ներկայանանք աշխարհին, մենք ներկայանալու այլ բաներ ունենք՝ առաջին քրիստոնյա ազգ, բազմադարյա մշակույթ, գիտություն, ունենք նաև հաղթություններ, ուղղակի մեր նախնական ծննդի հիշատակը վառ ենք պահում ու պահանջատեր ենք դրա համար:

Մենք հստակ քայլերով գնում ենք առաջ ու հաղթանակներ ենք տոնում տարբեր բնագավառներում: Գանաչում, դատապարտում, հատուցում ճանապարհը ևս դեպի հաղթանակ է տանելու:

Պարզահան ՆՈՒՅԻՆ
Մարտիկների շք. Դրսիսի Վ. Հայկականի անվան միջն. դպրոցի պարունության և շախմատի ուսուցիչ

ԵՆԵԼԻ Ա. ՂԵՎԻՍ ԳՅՈՒՄԱՏՈՒ

«Հայերի բնաջնջումը» - Ինդիպենդենթ, սեպտեմբերի 27, 1915թ

Կոտորածի, չարարանքի և արտաքսման սարսափելի լուրով հայ քրիստոնյաները հատուկ խնդրանքով դիմել են ամերիկացիների կարեկցությանը և օգնությանը: Թուրքախույն բազմաթիվ և ստույգ արդյունքներից հայտնի դարձավ, որ դա անկարգ ու անընչառ հարստահարում է, բայց սխտեմատիկ ջարդերը տանում են դեպի հայ ցեղի բնաջնջումը: Հազարավոր ընտանիքներ վտարվեցին իրենց տներին և սովորական եղանակով ճանապարհին: Քաղաքները և գյուղերը ազատվեցին իրենց բնակիչներից: Շատերին տանջանքների ենթարկեցին, շատերին էլ ստիպեցին կրոնափոխ լինել: Կանանց ընդգրկում էին հարեմուրդի մեջ, իսկ երեխաները ստրկության էին վաճառվում:

Այս բռնությունը չի կարող արդարացվել անգամ ռազմական անհրաժեշտության հողի վրա: Ռուսների հավանական օգնության ուշացման պատճառով տարածքները ավերվեցին, և հայերը դիմում էին պատասխանության, ինչպես Վանում նրանք դիմեցին ինքնապաշտպանության: Թվում էր՝ թուրքերը հուսահատվել են, բայց կայուն կերպով ճնշում էին հայերին և կանխում Հայաստանի ինքնորոշումը, որի արդյունքում դաշակիցները նվաճեցին Թուրքիան:

Այստեղ տեղի է ունենում մի շատ հետաքրքիր բան. հասարակ Օսմանյան կայսրության ճնշմանը, ամերիկյան փողոց և կյանքը վերելք է ապրում... Թուրքախույն այժմ պահպանվում է 10 ամերիկյան քուլեք, որտեղ սովորում է ավելի քան 40 000 աշակերտ, որի մեծամասնությունը կազմում էին հայերը... Հազարավոր հայեր թուրքական բռնակալությունից խուսափելու համար ցանկացել են ապաստան գտնել ԱՄՆ-ում և դառնալ մեր երկրի լավ քաղաքացիներ: Հայերի ներկայիս դժբախտությունը, մոտավոր վտանգը Ասիայում պատճառ կհանդիսանան լայնածավալ անհանգստությունների ԱՄՆ-ում:

Աղբյուրը՝ Հայոց Ցեղասպանության ինստիտուտ-թանգարանի կայք (<http://www.genocide-museum.am/>):

Եղի՞ր այնքան ուժեղ, իրատուն է պատմությունը, որ թշնամիդ չհանդգնի հարձակվելու: Զգացնել տուր թշնամուդ, որ ամեն վայրկյան պատրաստ են պատերազմելու, և նա կիրառվի զենքի ուժով քեզ անհանգստացնելու մտքից: Արգահատելի է կրավորական մատակարար ժողովուրդը: Նրա համար գուցե ցավեն, բայց նրան չեն զինակցի: Թույլերը զինակցի չեն ունենում:

Պարզահան ՆՈՒՅԻՆ

Պարզահան ՆՈՒՅԻՆ

Պարզահան ՆՈՒՅԻՆ

Պարզահան ՆՈՒՅԻՆ

Պարզահան ՆՈՒՅԻՆ

ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ-150

ՀԱՐՑԵՐ, ՈՐՈՆԷ ՀՈՒՋՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԹՅԱՆԸ



Հայ ֆիդայիների ըմբոստ ճակատները մենք դեռ պետք է համբուրենք...

Սուշեղ Գալշոյան

Մինչև նախորդ դարի 60-ականները հայոց պատմության մոր և նորագույն շրջանի մի շարք հարցերի շուրջ կամ արգելվում էր խոսել, կամ ներկայացվում էր պատմագիտականությունից զուրկ, խեղաթյուրված: Արդարև, տասնամյակներ շարունակ մեր պատմության հերոսականության ու դրամատիզմով լի էջերը մնացել էին հաստ մոխրաշերտի տակ, որոշակի օրինակափոխություն դրսևորած բազում երևույթներ, ժողովրդի ճակատագրում էական դեր խաղացած շատ դեմքեր փոխադրվեցին մայր պատմության լուսանցքներ և ըստ էության դիտվում էին ժամանակից ու տարածությունից դուրս: Մինչդեռ ողջամիտ լայնախոհության դեպքում մեր պատմության շերտերում կարելի էր նկատել ուշագրավ այլ արժեքներ, առանց որոնց անհնար է պատկերացնել հայ ժողովրդի հարության և վերածննդի հրաշքը: Խոսքը վերաբերում է ֆիդայական շարժմանը, որն անջնջելի կնիք է դրել մեր ազգային նկարագրի վրա, օգնել մեկնաբանելու այն խորին խորհուրդը, թե ինչ հրաշքով կիսված ու արյունաքամ ժողովուրդը հերոսամարտերում վերածնեց թշնամուն ծունկի բերող բանակի: Նրանք ազատության համար մարտնչող զինվորներ էին, որոնցից շատերը մնացին մեր ազգային կապույտ երազանքի արյունոտ ակոսներում: Դենց այստեղ էլ անմահանում է Անդրանիկ Օզանյան հայրենասեր մարդու, նվիրյալ զինվորի բոլորանվեր կերպարը: Հանուն արդարության պիտի նշենք, որ այն հայրենիքը, որին անմահացող նվիրված էր զորավարը, տարիներ շարունակ չէր համարձակվում բարձրաձայն հիշել ազգի հերոսին, էլ չէնք խոսում այն մասին, որ Մյասնիկյանի կաթինետը զորավարի մահվան կապակցությամբ նույնիսկ ցավակցական հեռագիր չիղեց նրա ընտանիքին (ավելորդ է անգամ հիշել Անդրանիկ զորավարի վերջին պատգամը՝ իր մարմինը հայրենիքում ամփոփելու կտակի մասին) Սակայն ժամանակի հարավփոփոխության մեջ պատմությունից մաքրվեց ամոթանքի փոշին, և նորօրյա սերունդը ազգի մեծամունդ հսկաներին տվեց իր իսկական գնահատականը: Զե՛ որ հերոսների մահը դեռ վերջակետ չէ, նրանց ոգեղեն ներկայությունն ակնառու է ժողովրդի անցած հետագա ճանապարհի բոլոր հատվածներում՝ մեզ դիմակայության ավյուն ու արյուն տալու, արիացնելու, հերոսականության մղելու, մեզ վիճակված ճակատագրի աներևակայելի դժվարությունները հաղթահարելու առունով:

Փոքր Հայքի Նիկոպոլիս գավառի Շապին Գարահիսար բերդաքաղաքում 150 տարի առաջ թորոս և Մարիամ Օզանյանների ընտանիքում ծնվել է առաջնեկ գավակը՝ Անդրանիկը: Սանկուց պատանին ակնատես է եղել թուրք հարկահավաքների և քուրդ հրոսակախմբերի անկանոն հարձակումներին, հայկական բնակավայրերի անխնայ թալանին ու ավերածություններին, հայ օրիորդներին իբրև հարձ տանելուն, անմարդկային վայրագություններին: Դենց այդ տարիքից էլ Անդրանիկը

ուխտ արեց նվիրվել ազգի ազատագրության գործին: Իսկ մինչ այդ, մեկ տարեկանում Անդրանիկը կորցնում է մորը և մեծամունդ քրոջ՝ Նազիկի խնամքի տակ: Պարզվում է, որ սա ճակատագրի առաջին, բայց ոչ վերջին դառնությունն էր՝ նախատեսած ապագա մեծ Չորավարի համար: 17 տարեկան հասակում նա անուսնանում է, սակայն մեկ տարի անց կինը ծննդաբերության ժամանակ մահանում է, որը ժամանակ անց՝ նաև որդին (Սուրեն Սահակյան «Յերուսապատուն»): Այսպիսի ծանր կորուստներից գլուխը կորցրած պատանու հոգին դառնացել էր աշխարհի հանդեպ: Գոր՝ հյուսն թորոսի հետ կապված վերջին դիպվածը(թուրք խուժանի կողմից իր արիեստանդում դաժան ծեծի ենթարկվեց) Անդրանիկին ստիպեց վերջնականապես «պսակվել հրացանի հետ» և նվիրվել հայոց ազատամարտին:

Սույն հոդվածով նպատակահարմար ենք գտնում ոչ միայն ներկայացնելու Անդրանիկ Օզանյան հայրուկապետի գաղափարաբանությունն ու անցած մարտական ուղին, այլև վերհանելու արցախահայության համար ամենաբախտորոշ ժամանակափուլում նրա ունեցած դերակատարության մասին վկայություններ՝ փաստեր, որոնք պատմության ուսուցչի համար անչափ կարևոր տվյալներ կլինեն ավագ դպրոցի 12-րդ դասարանի հայոց պատմության դասագրքի «Հարաբերությունները հարևան երկրների հետ: Տարածքային հիմնախնդիրները» դասանյութը պատշաճորեն ներկայացնելու, վեր հանելու սուլթանության վարչակարգի դեմ նրա ունեցած հեռանկարային ծրագրերի, բրիտանամուսավաթական համագործակցման քաղաքականության բացասական հետևանքները, Անդրանիկի Միասնական հայրենիքի գաղափարը Արցախում պսակվելու մասին, որոնք, ցավոք, այդպես էլ իրականություն չդարձան մեծ տերությունների ածաբարությունների, հակոտնյա, շահարկային վերաբերմունքի պատճառով:

Պետք է նշել, որ Անդրանիկը հայոց ազգային արժեքային համակարգում տեղ գտած և ինքնուրույն շունչը պայմանավորող պատմական անհատներից մեկն է, ուստի, անհրաժեշտ է զգուշավոր լինել նրա գործունեության վերաբերյալ գնահատականներ տալիս՝ խուսափելով ծայրահեղական մոտեցումներից:

Երբ Արարատյան դաշտում և Ղարաբաղի սայի ծորերում վճռվում էր հայ ժողովրդի բախտը, նույն ժամանակ թիֆլիսում վերջին հոգեվարքն էր ապրում Անդրկովկասյան Սեյմի (օրենսդիր մարմին) իշխանությունը: Մայիսի 26-ին թուրքական սպառնալիքների և վրացի ու ադրբեջանցի պատգամավորների ճնշման տակ Սեյմը՝ նախագահ Չիսենկելու գլխավորությամբ, հայտարարեց ինքնալուծարման մասին: Վրաստանի և Ադրբեջանի անկախություններին հաջողորեն մայիսի 28-ին Հայաստանի անկախության հռչակումը, ինչը միանշանակ չընդունվեց հասարակական, քաղաքական շրջանակների կողմից: Չնայած թափած աներևակայելի ճիգերին, կրած զրկանքներին, հյուսած հերոսապատումներին՝ հայ ժողովրդի ազգային ազատագրական շարժումը գոհացում չէր ստանում: Բայց զոնե միտքարական էր այն, որ ժողովուրդը փրկվում էր վերջնական կործանման վերահաս վտանգից: Արդյունքում՝ հունիսի 4-ին Բաթումում ստորագրված պայմանագրով օրինականացվեց Կարսի մարզի (Կաղզվան, Օլթի, Արդահան), Սուրմալուի, Ալեքսանդրապոլի հանձնումը Թուրքիային, հայկական զինված ուժերի սահմանափակմանը և նորերի կազմավորման արգելմանը (պայմանագրի 4-րդ հոդվածով իրավունք էր տրված պահելու միայն 1200 հոգուց բաղկացած զորք), հանրապետությունը Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծի միայն 13 կմ երկարությունից կարող էր օգտվել: Լսելով Բաթումի «պարտավորագրի» մասին՝ Անդրանիկը վրդովվեց, իր գայրոյսն արտահայտեց նորանկախ հանրապետության գործող ղեկավարների ապաշ-

նորի գործունեության հանդեպ՝ որակելով այն «սոսկալի դավաճանություն, որով հավերժ թաղվեց արևմտահայության դատը»(Հրաչիկ Սիմոնյան «Անդրանիկի ժամանակը», գիրք ք):

Բաթումի պայմանագրի ստորագրությունների թանաքը դեռ չէր չորացել, երբ Վեհիբ փաշան, տեղեկացված լինելով Չորավարի՝ Հայաստանում գտնվելու մասին, կառավարությունից պահանջեց շտապ զինաթափել Անդրանիկի Առանձին հարվածող զորամասը: Կառավարության, հատկապես Արամի և Դրոյի (գաղափարական լուրջ տարածայնությունները խորացել էին հատկապես այն բանից հետո, երբ Չորավարը հեռացել էր Ղազնակցությունից, իսկ Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո հրաժարվում էր համագործակցել կառավարության հետ, հայոց պետությունը համարելով «թուրքից ստացած նվեր»-Հրանտ Աբրահամյան, «Արցախը կանչում էր Անդրանիկին») հետ առկա ներքին հակասություններն ու առճակատումները դրոյեցին Չորավարին Հայաստանից հեռանալու որոշում կայացնել: Հայրենիքի զինվորը երբեք չէր հարում գաղափարական-տեսական օտարամուտ հոսանքներին: Նա, ժողովրդի որակմամբ, իսկական ժողովրդական հերոս է, նրա պես իմաստուն, զգայուն և զորեղ:

Երբուրդին պիտի անցներ Դիլիջանից Սևանա լճի և Նախիջևանի վրայով Պարսկաստան: Արդանիկի հետ իրենց ճակատագրերն էին կապել հազարավոր արևմտահայ գաղթականներ, որոնք դժվարացնում էին զորամասի երթը: 1918թվականի հուլիս-օգոստոսին, հաղթահարելով պարսկական սահմանագլխին թուրքական զորամասերի հետ բախման ճանապարհը, Անդրանիկը փոխեց երթուղին դեպի Նախիջևան: Սակայն այստեղ էլ դժվար կացություն էր ստեղծվել գաղթականության համար. հացով և օթևանով ապահովել սովյալներին, պաշտպանել անվտանգությունը: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար Անդրանիկը վճռեց շարժվել Զանգեզուր, որտեղ զանգեզուրցին իր երկրի դմբերը լայնորեն բացել էր հերոսի առջև: Սակայն այստեղ էլ մեծ Չորավարին հանգիստ չէին տալիս ամեն օր Ղարաբաղից Գորիս հասնող տագնապալից լուրերը: Անշուշտ, Զանգեզուրում լինելու ժամանակ Ղարաբաղից մամակներով և խնդրագրերով (զրում էին Ղարաբաղի Հայոց Ազգային հորհուրդը, Գ.Յ.Ղազնակցության տեղի (Ապառաժի) Կոմիտեն, զինվորական և հասարակական գործիչներ) շարունակվում էին դիմել Անդրանիկին՝ անհետաձգելի հաղթարշավով երկրամաս մտնելու համար: Իսկ արշավելով Ղարաբաղ՝ Անդրանիկը ի՞նչ կոնկրետ խնդիրներ պիտի լուծեր այստեղ.

ա) մահմեդականներին վանել Ղարաղշլաղի (Կալադարաս) շրջանից և այս ու այն կողմ թափառող, քայքայված ու քաղցած ղարաղշլաղցիներին վերադարձնել իրենց բնակավայրերը,

բ) առանց դիմադրության Շուշի քաղաքը մահմեդականներին հանձնած հայկական կառավարությանը արժանի պատիժ տալը,

գ) Կարանդայի և Դիզակի շրջանների երկու տանայակից ավելի գյուղերի ցրված բնակչությանը վերադարձնել իրենց բնակավայրերը,

դ) պատժել այդ գյուղերն ավերած Աղդամի թուրքերին և նրանցից պահանջել հայ գյուղացիներին հասցրած վնասի հատուցում,

ե) Ղարաբաղում հաստատված անգլիական զինվորական միսիայի(նոյեմբերի 29-ին Բաքվի նախագահության նշանակված գեներալ Վիլյամ Թոմսոնի հրահանգով Շուշի է ժամանում անգլիական բանակի մայր Ուիլյամ Դըֆ Գիբբոնը՝ գաղթականների խնդիրն մոտիկից ծանոթանալու համար (Եղիշե Իշխանյան, «Ղարաբաղը 1917-1920 թթ.») հետ բանակցելու՝ խտրով բեկ Սուլթանովին երկրամասի գեներալ-նահանգապետ նշանակելու մտքից հրաժարելու և Արցախը Ադրբեջանի կազմի մեջ չմտցնելու նպատակով.

զ) խալիլ բեյի, Նուրի փաշայի տանկական զորքերի դուրս բերումը հայկական Ղարաբաղից (նոյեմբերի սկզբին թուրքական զորքերը մտան Ղարաբաղ և գրավեցին Շուշին) Չորավարի՝ Ղարաբաղում զինվորական գործի գլուխ անցնելը:

Անդրանիկի հեռագրա ծրագրերի մեջ էին մտնում դեպի Ղարաբաղ հաղթարշավից հետո ճանապարհը շարունակել Բաքու, որը մոտ երկու ամիս առաջ (սեպտեմբերի 15-ին) թուրքական զորքերի կողմից գրավվել ու հոր ճարակ էր դարձել (Բաքվի Հայոց Ազգային հորհրդի քարտուղար Բախշի Իշխանյանը ոճրագործության թարմ հետքերով կատարած ուսումնասիրությանը պարզել էր, որ երեք օրվա ընթացքում զոհվել է ավելի քան 29080 հայ, այսինքն՝ Բաքվի հայ բնակչության մոտ 32%):

Պատմական տեղեկանք

Նախքան Ադրբեջանի Հանրապետության պատմության բեմում հայտնվելը՝ Ռուսական կայսրության վերացումից հետո՝ 1918 թ. մայիսին, Արցախ-Ղարաբաղը ապրել է ինքնուրույն, անկախ կյանքով, կառավարվել ժողովրդի կամքով ստեղծված ազգային կառավարության կողմից: Առաջին աշխարհամարտի արդյունքում Անտանտի հաղթանակած երկրներից Մեծ Բրիտանիան ստանձնեց Անդրկովկասի կառավարման պատասխանատվությունը: Նոյեմբերի 18-ին Էնզելիցից նավերով Բաքու տեղափոխված գեներալ Թոմսոնը գրգռիչ միջամտություն է կատարում երկրամասի հանրապետությունների միջև ծագած կոնֆլիկտներին՝ դրանք ծառայեցնելով ի շահ տարածաշրջանում բրիտանական կայսրության քաղաքական նպատակներին: Դենց այդ քաղաքական նկրտումներն էլ Ղարաբաղի խնդրում հանընկան Ադրբեջանի ազգայնական իշխանությունների շահերի հետ (Գալուստ Գալոյան «Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թթ.»):

Հանուն արդարության պիտի նշել, որ դեպի Արցախ Անդրանիկի նախապատրաստվող արշավանքին բոլորը չէին հավանություն տալիս: Դրան դեմ էր ամենից առաջ Երևանի կառավարությունը՝ Հ. Քաջազնունու գլխավորությամբ: Նրանք այն կարծիքին էին, որ հարկ չկա փչացնելու հարաբերությունները անգլիացիների հետ, քանի որ Փարիզի առաջիկա Վեհաժողովը վճռելու է նաև հայկական տարածքների, այդ թվում նաև՝ Ղարաբաղի պատկանելության հարցը: Կառավարությունը գտնում էր, որ պետք է լրջորեն հաշվի առնել այն հանգամանքը, որ ղազնակցիները Նախիջևանի գավառը հավանաբար կհամարեն ՀՀ անբաժանելի մաս, ուստի, Անդրանիկը չպետք է իր ուժերը ցրի ու վատնի, այլ դրանք պետք է կենտրոնացնի Նախիջևանի սահմաններին, որպեսզի Երևանից եկած հրահանգի դեպքում մտնի այդ գավառ և ընդհանրապես Արարատյան դաշտից ելող հայկական զորքերին: Դեպի Ղարաբաղ արշավանքի նախապատրաստությունը լուրջ տարածայնություններ էր առաջացրել նաև բուն Զանգեզուրի ղեկավար գործիչների շրջանում՝ Զանգեզուրի Ազգային հորհրդի անդամ Գեղեճն Տեր-Միհայայանի գլխավորությամբ (Հրաչիկ Սիմոնյան «Անդրանիկի ժամանակը», գիրք ք): Սակայն Անդրանիկը իր անհամաձայնությունն էր հայտնել Ղարաբաղի հարցում Քաջազնունու կառավարության բռնած կրավորական դիրքի նկատմամբ, Երևանի իշխանություններին քննադատեց նախ՝ թուրքերի, ապա նրանց պարտությունից հետո ղազնակցիների հանդեպ ցուցաբերած «ոչ արժանապատիվ կեցվածքի» համար: Նա հատկապես անընդունելի էր համարում անգլիացիների հանդեպ ցուցաբերվող ավելորդ փափկանկատությունը և գերզգայուն վերաբերմունքը: Անդրանիկը՝ իր հեռատեսությամբ ճիշտ գտնվեց մեծ տերություններից ավելորդ սպասումներ ունենալու հարցում:

ՀՈՐԱՎԱՐ ԱՆՂՐԱՆԻԿ-150

ՀԱՐՑԵՐ, ՈՐՈՆՔ ՀՈՒՋՈՒՄ ԵՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ

7 Շ Սակայն Ղարաբաղից ամեն օր ահագնացող լուրերը Ջորավարին ստիպեցին վերջնական վճիռ կայացնել (հոկտեմբերի 18-ին Դիզակի հստաբերդ գյուղից Ալեքսան Առաքելյանը՝ նույն ինքը Սաքի ապան, գալիս է Գորիս՝ Ջորավարի մոտ և տեղեկացնում, որ արցախցիները սպասում են նրա օգնությանը և պատրաստ են 15 հազար մարդ գեների տակ կոչել, միայն թե Անդրանիկը Ջանգեզուրից մտնի Ղարաբաղ և շարժվի դեպի Շուշի):

Իսկ ի՞նչ էր կատարվում արդեթեանական նորաթուխ հանրապետության մայրաքաղաքում: Որպես կառավարողներ մի լայնածավալ գաղութային կայսության, որը ներառում էր միլիոնավոր մահմեդական հպատակների, բրիտանացիները այնպիսի դիրք էին գրավում, որ համընդհանուր բարյացակամություն նվաճեն՝ աջակցություն ցույց տալով նորագույն պատմության մեջ առաջին մահմեդական հանրապետությանը: Ավելի, բրիտանական ռազմավարները այն տեսակետն էին պաշտպանում, որ քաղաքականապես և տնտեսապես կենսունակ կառուցվածքը Ադրբեջանին նվազ դյուրընկալ կդարձներ պանիսլամական կամ պանթուրանական հուզումների և Օսմանյան կայսրության ներթափանցող ազդեցության նկատմամբ: 1918 թ. վերջերին նրանք նաև հավատում էին, որ Ղարաբաղի կիսատկան օսմանյան արևելյան վիլայեթները:

Յետևաբար, բնական էր թվում դիտել Ղարաբաղը և Ջանգեզուրը որպես փոխհատուցում Ադրբեջանին, որի հավակնությունները՝ ավելի հեռու ընկած արևմտյան հողերի նկատմամբ, կմերժվեին: Մինչ Լոնդոնի պաշտոնատար անձինք ցույց էին տալիս, որ Անդրկովկասի գրավումը Ֆինանսական խոշոր ծախսեր է պահանջում, Մեծ Բրիտանիան հաջողեց ձեռք բերել միլիոնավոր ֆունտ ստեռլինգ արժողությամբ հազարավոր տոմսերով նավթամթերք: «Նավթային իմպերիալիզմ» էր թելադրել բրիտանական քաղաքականությունը, թե՛ ոչ, ամեն դեպքում տնտեսական գործոնները չէին կարող անտեսվել: Հենց այս պայմաններից էլ ներկայումս գեներալ Թոմսոնը արդեթեանական կառավարության հետ միասնաբար ձեռնամուխ է լինում ըմբոստ Ղարաբաղը Ադրբեջանին ենթարկելու խնդրի իրագործմանը: Ամենայն հավանականությամբ, Անդրանիկի Ղարաբաղի ուղղությամբ սկսած ռազմական գործողություններով էր պայմանավորված բրիտանական զինվորական միսիայի հայտնվելուն երկրամասում:

Նոյեմբերի 17-ին Անդրանիկի Հարվածող գործառնք Տեղ գյուղից շարժվեց Ջաբուղ և Հագարո գետերի ուղղությամբ, որտեղ, բախվելով թուրք-քրդական ուժերին, ջախջախեց հակառակորդին: Միաժամանակ հեծյալ 2-րդ հարյուրյակը ձախ թևով անցավ Հագարո գետի կամուրջը և, դիմադրության չհանդիպելով՝ մտավ Ավդալար (Լաչին-Բերձոր): Ջորավարի տվյալներով՝ ճանապարհի հիմնական խոչընդոտները հաղթահարված էին: Այժմ անարգել կարելի էր բարձրանալ Ղարաղլաղի բարձունքը, գնալ Թթու ջուր(Լիսագորսկ), իսկ այնտեղից առաջանալով՝ մտնել Շուշի: Սակայն, ցավոք, Ջորավարին այնպես էլ չվիճակվեց ավարտին հասցնել սկսած պատմական ռազմերթը: Ադրբեջանի կառավարությունը վարչապետ Ֆաթալի խան Խոյսկու գլխավորությամբ և Բաքվում հաստատված անգլիական օկուպացիոն իշխանությունները ուշի-ուշով հետևում էին Անդրանիկի գործողություններին, և երբ տեսան, որ իրադարձությունները զարգանում են հօգուտ հայերի, շտապ դիմեցին զանազան հակամիջոցների, հատկապես՝ դիվանագիտական: Նո-

յեմբերի 18-ին Ավդալար գյուղում Անդրանիկը հեռագիր է ստանում գեներալ Թոմսոնից.

«Շուշի, Բաքվից, շտապ
...Ինձ հաղորդում են, որ Դուք մտադրվել եք գրոհել Շուշիի վրա: Թուրքական զորքերին դաշնակիցները հրամայել են թողնել Կովկասը: Ադրբեջանական զորքերին դաշնակիցների կողմից հրամայված է հայերի դեմ ռազմական գործողությունների չդիմել: Որպես դաշնակիցների ներկայացուցիչ՝ հրահանգում եմ չգրոհել թուրքական կամ արդեթեանական զորքերի վրա: Եթե Դուք չգործեք այս կարգադրության համաձայն, Ձեզ նախազգուշացնում եմ, որ ամենամեծ պատասխանատու կլինեք Ձեր գործողություններով պայտանահեղության տեղիք տալու համար: Այսօր մի սպա եմ ուղարկում Շուշի՝ հանդիպելու Ձեզ հետ:

Անգլիական գորավար»:
Հատկանշական է, որ հեռագրի տակ չկար գեներալի ստորագրությունը: Տեքստից նաև երևում էր, որ անգլիացի զորավարը կարծում էր, որ մինչև հեռագիրը կհասներ Անդրանիկին, նրա զորքն արդեն կլինի Շուշիում և իր ներկայացուցիչը նրա հետ կհանդիպի այնտեղ: Մյուս կողմից պարզորոշ է, թե ինչպիսի տագնապ էին զգում Բաքվի իշխանությունները Անդրանիկի Ղարաբաղում հայտնվելու համար: Անգլիացի գորավարի սպառնալից և անտակտ տոնով գրած նամակից Անդրանիկը եզրակացրեց, որ Մեծ Բրիտանիան հակվում է պաշտպանելու Ադրբեջանի շահերը: Դա էր վկայում նաև Հ.Յ.Դաշնակցության՝ Ապառաժի կենտրոնական կոմիտեից ստացած նամակը, որը Ջորավարին խնդրում էր կանգ չառնել կես ճանապարհին, անպայման մտնել Շուշի և կատարված փաստի առաջ կանգնեցնել դաշնակիցներին ու Մուսավաթին:

Թոմսոնի հեռագիրն առաջինը ստացան Շուշիի հայկական կառավարության նախկին անդամները և Վարանդայի հրամանատար Սուկրատ բեկը: Նրանք, որ ոչնչով չէին նպաստում Անդրանիկի արշավանքին, գոնե կարող էին ուշացնել չարաբաստիկ հեռագիրը Ջորավարին հանձնելը, մինչև որ նա կմտներ Շուշի: Բաքվից եկած հեռագիր-հրահանգը ստանալուն պես Անդրանիկը շտապ պատասխանեց.

«...Բաքվի հրամանատարի՝ անգլիական գորավարի հ. 501 հրամանը ստացել եմ այսօր: Այդ կարգադրությունն իմ մեջ որոշ կասկած հարուցեց դրա իսկության վերաբերյալ: Ինչ վերաբերում է Ջանգեզուրից դեպի Շուշի իմ շարժմանը, դրա համար ես ունեմ բազմաթիվ ծանրակշիռ պատճառներ: Սա մեկ տարի է, ինչ թաթարները կտրել են ամեն տեսակի հաղորդակցություն Ջանգեզուրի և Ղարաբաղի հայերի միջև: Ջաբուղ և Հագարո գետերի խորխորատներում ընկած են մի քանի հարյուրի հասնող դիակներն այն զինվորների, որոնք ռազմաճակատից Ջանգեզուրի վրայով վերադառնում էին Ղարաբաղ: Այս կարճատև ամիսներին բարբարոսաբար սպանվել են հազարավոր թուրքահայ գաղթականներ, որոնց ցանկությունն է եղել բնակություն հաստատել Ղարաբաղում: Կալադարասի հայկական գյուղի լիակատար ոչնչացումը, թաթարների կողմից Ջանգեզուրի հայերի վրա կատարվող հարձակումները, կողոպուտն ու սապատակությունները, իրենց երկրամաս վերադառնալու հնարավորությունից զրկված դարբաղցիների կուտակումները Ջանգեզուրում և, վերջապես, մուսուլմանների թշնամական վերաբերմունքը Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ, այս բոլորն ինձ պարտադրում են իրար

հետ կապել այդ երկու երկրամասերը»(Հրաչիկ Սիմոնյան«Անդրանիկի ժամանակը», գիրք Բ):

Անդրանիկի նամակի պատասխան բովանդակությունը ռազմական հրամանատարությանը ստիպեց դիմելու վճռական գործողությունների: Դեկտեմբերի 2-ին Ավդալար է հասնում մի ավտոմոբիլ՝ սպիտակ դրոշակ պարզած: Դա «հաշտարար պատվիրակությունն» էր Բաքվից, գոր. Թոմսոնի կողմից: Առաքելության ներկայացուցիչները՝ անգլիացի կապիտան Գոլդսմիդը և ֆրանսիացի կապիտան Պասֆելդը Անդրանիկին են հանձնում հերթական հեռագիրը՝ ոչ միայն սպառնալից բովանդակությամբ, այլև հայերին օգնելու շռայլ խոստումներով: Բանագնացները իրենց հետ Բաքու տարան Ջանգեզուրի Ազգային խորհրդի անդամ Արշակ Շիրինյանին, որի միջոցով 2 միլիոն ռուբլի են ուղարկում Գորիսում ապաստանած արևմտահայ գաղթականների կարիքները հոգալու նպատակով, որից 200000-ը տրվում է Ղարաբաղցիներին: Այսպիսով, անգլիացիներին հաջողվում է արգելել Անդրանիկի մուտքը Ղարաբաղ: Այս դեպքերով է պայմանավորված Անդրանիկի՝ «անգլիական ոսկով ծախված» պիտակումը: Դեկտեմբերի վերջին գոր. Թոմսոնը Բաքվում հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, որով արդեթեանցիներին տեղյակ էր պահում, որ մեծ Բրիտանիան Ադրբեջանի տարածքը համարում է միասնական ամբողջություն և այդ տարածքի վրա ճանաչում է միայն մի իշխանություն՝ արդեթեանականը: Իր երկդիմի քաղաքականության արդյունքում Թոմսոնը միասնական տարածքում ընդգրկում էր նաև Ղարաբաղը ու Ջանգեզուրը:

Դեպքերի հետագա զարգացումը ցույց տվեց, որ, ենթարկվելով անգլիացիների ճնշմանը, Ջորավարը գործել է անուղղելի սխալ: Այդ սխալը հետագայում շատ թանկ ստեց Ղարաբաղի հայության վրա: Ինքը՝ Անդրանիկը, հետագայում շատ է զղջացել Ղարաբաղյան արշավանքը տրամաբանական ավարտին չհասցնելու համար: Տարիներ հետո, հեռու Ղարաբաղում, տխուր մտորումների մի պահի նա դառնությանը ասել է. «Պետականության անկումից հետո դարեր շարունակ այս լեռնաշխարհը առավել անկախ վիճակ ուներ, քան հայկական որևէ ուրիշ տարածք, իր անառիկ դիրքերում կռվող ժողովրդի հավատն ու ուժը անասելի մեծ էին: Ջարմացած եմ՝ միշտ հայաբնակ ու հայադրոշմ մնացած այս երկիրը ոնց կարելի էր հանձնել թուրքին: Ես չգիտեմ, թե ինչպես պիտի հանգստանա հայկական խիղճը...»:

Այսօր, տասնամյակների հեռավորությունից, մեծ Հայի խոսքերը նոր իմաստ ու երանգ են ստացել, որովհետև նրա մեծագույն փափագներից մեկը՝ տեսնել հայկական Ղարաբաղը ազատ ու անկախ, իրականություն է դարձել: Ոչ շռայլ խոստումները, ոչ ժամանակի «հզորների» սպառնալիքները խոչընդոտ չէղան Անդրանիկ գորավարի սկսած սրբազան գործը ավարտին հասցնելու: Ինչպես տասնամյակներ հետո հայրենիքի նվիրյալ զինվորի մասունքները վերադարձան մայր հող, այնպես էլ հայկական Արցախը վերադարձավ հայրենի եզերք: Անդրանիկյան ոգով դաստիարակված ու նրա խոսքով ներծծված սերունդը դարձավ իսկական ժառանգորդը հզոր արժեքների, որոնց պարտքն է հետմահու համբուրել հայ ֆիդայիների ըմբոստ ճակատը...

Լորեդա ԱՐՐԱՅԱՍՅԱՆ
Սպեց. հ. 11 ավագ դպրոցի պարունության ուսուցչուհի

Նոր գիրք

«ԾԱՂԻԿՆԵՐ ՀԱՄՇԵՆԻՉ»

Երևանի «Հայաստան» հրատարակչությունը վերջերս լույս է ընծայել արձակագիր Կոմիտաս Դանիելյանի «Ծաղիկներ Համշենից» պատմվածքների ժողովածուն (խմբագիր՝ Ներսես Աթաբեկյան): Գրքի հանձնարարականը տեղեկացնում է, որ ընտրվել են ճանաչված հեղինակի տարբեր տարիների այն գործերը, որոնք ինչ-ինչ աղերսներ ունեն արցախյան իրադարձությունների հետ:



Տարբեր տարիները, բնականաբար, իրարից հեռու ժամանակներ են մատնանշում, սակայն ծանոթանալով գրքին՝ ակներև է դառնում, որ Կոմիտաս Դանիելյանի համար պայմանական է դրանց տարանջատումը: Ավելին՝ հեղինակը առաջին հայացքից միմյանց հետ առնչություն չունեցող տարրերի միահյուսմամբ է արարել իր ստեղծագործական կենսատարածքը, որն է՝ ուրույն ասելիքն ու գործելակերպն ունեցող, ժողովրդի ազատագրական պայքարի չիեռացող ներկան: Եվ ինքնավիրության ելածներիս համար խավարին ընդդիմանալու ճակատագրական ժամանակը հեռու է անցյալ դառնալուց: Ուստի, գիրքն ընթերցվում է հետաքրքրությամբ ու հուզմունքով. գրիչը մեր մարմնից է առնված: Միաժամանակ, այնքան էլ հեշտ չկարծեմք պատերազմ տեսածներիս հետաքրքրությունը բորբոքել այնչափ, որ սրտատրոփ հետևենք աղետալի իրավիճակներում հայտնված հերոսներին, նրանց համար փրկության ելքեր փնտրենք, հեղինակին հավասար փորձենք խառնվել նրանց ճակատագրին: Եվ գրքի պատումները երևում են մեր իսկ ասարած պատերազմի՝ մեր աչքից սպրդած էջեր:

Պատմվածքներում նկարագրված դեպքերի հավաստիությունը ընթերցողը չի վիճարկում, տողն անցնելով գեղարվեստական հնարանքի միջով՝ ավելորդ, անհանդիչ գույներ չի առել, խաղացկուն չի դարձել, մնացել է դաժան իրականության տարածքում, որի բնակիչները՝ մենք, պետք է անցնենք մեր բաժին չարչարանաց ճամփան՝ չկորցնելով լույսի հետագիծը:

Անհատի ու արվեստագետի այս հավատամքով են ամբողջանում Կոմիտաս Դանիելյանի արձակագիրական արժանիքները. գեղարվեստական հնարանքը տառնում է իրականության հաստատման ևս մեկ դրսևորում և իր հերթին՝ իրականության թելադրած գեղարվեստականությունը թույլ է տալիս կրկնապատկված ուժգնությամբ զգալ ասելիքը:

Ազատագրական շարժումը Կոմիտաս Դանիելյան գրողի համար սոսկ ստեղծագործական նոր պլանն է: Շարժումը իրենով ստեղծել է պայքարի ընդհատակյա փուլին մասնակցի ու հետագայում էլ իր ակտիվ կենսադիրքն ունեցող հայ մտավորականի, պատերազմում կորած որդուն սպասող հոր անվեհեր կերպար: Նման ակունքից էլ նուր տողը, իբրև հայրենասիրության դաս, հիրավի, այլ սրտազարկ ունի: Արցախյան շարժումից ի վեր շատ քիչ գործեր կարող ենք գտնել Կոմիտաս Դանիելյանի ստեղծագործություններում, որոնք չեն առնչվում այդ թեմային: Արվեստագետի ընկալումով Շարժման նախապատմությունը, դրան հաջորդած իրադարձությունները, պատերազմը, հրադարձը՝ իր փխրուն խաղաղությամբ, շարունակում են մեզ համար մնալ ելակետ՝ կյանքի և ստեղծագործության:

Ժողովածուն ներառող գործերից ոչ մեկը չեն ուզում առանձնացնել, բայց չեն կարող չնշել գրքի վերնագիր դարձած «Ծաղիկներ Համշենից» պատմվածքը: Ինքներս մեզմից թաքուն փայփայած հույսն է պատմվածքի նյութ դարձել... Պատերազմից տուն չդարձած, անհայտ ճակատագրեր դարձած մեր ազատամարտիկ - զինվորները իրաջքով փրկվել են, ապրում են հեռուներում՝ վերադարձի հնար չունենալով: Տեր Աստված, դու հուսավառես մեր հույսը, որ այն խզում չունենա անհայտության խավարից, ասում ու հավատում ենք գրողին, չհավատալ չենք կարող, ինքը մեզ է վստահել իր ամենաթանկ երազանքը... Կորած գավակը տուն գա երազի անհիմանալի ճամփով:

Կոմիտաս Դանիելյանը հեղինակ է պատմվածքների վեց ժողովածուի, Արցախյան գոյապայքարին նվիրված «Արցախը՝ չսանձած մտույզ» փաստավավերագրական վեպի և մի շարք պիեսների: «Ծաղիկներ Համշենից» գրքի բացած ակոսը տարողունակ է, համոզված եմ, որ առաջիկայում ևս առիթ կունենանք անդրադառնալու գրողի նոր գործերին:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀՈՎՇ. ՇԻՐԱԶ-100

ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆԻ ԿԵՐՊԱԿՈՐՈՒՄԸ ՀՈՎՇ. ՇԻՐԱԶԻ ԶԱՓԱՅԻՆՈՒՄ

(Գործածված են Հովհ. Շիրազի վերջին տպագրված հինգ հատորյակի օրինակները՝ 1981թ.-1990թ.):

Հայ ժողովրդի ազգային մեծ հերոս Անդրանիկ Օզանյանի կերպավորումը Հովհ. Շիրազի ստեղծագործություններում ծավալուն չէ, բայց հնչել է: Ազգային այդ մեծ հերոսի անվան գործածությունը խորհրդային կարգերում համարյա կես դար արգելված էր, բայց ժողովրդի մեջ երբեք չի մոռացվել: Հովհ. Շիրազը մի քառյակում շեշտում է այդ սխալի ուղղումը. Անդրանիկը ելավ չարի սև մոռացման պատյանից (1, 302): Մեծանուն հեղինակի համար Անդրանիկ Օզանյանը սուրբ էր: Նրան է նվիրված «Սպիտակ ձիավորը Փարիզում» (1, 268-272) ծավալուն և «Թե չլինեիր գորավարը» ու «Շատ ես, ազի՛գ, քո ճերմակ ձին»... փոքրածավալ բանաստեղծությունները: «Հայոց դանթեականը» պոեմում մի շարք գործողությունների անմիջական կամ միջնորդավորված մասնակից կերպար է (5, 11, 17, 18, 22, 63, 88, 89, 133, 155, 177, 178, 180, 302, 303, 304, 305, 306, 308-10, 312, 313, 314, 316-323, Անդրանիկներ՝ 89, Մեծ Անդրանիկ՝ 154. անտիպ գործերը մեզ անհայտ են): Տարբեր գործերում գորավարի անունը որպես արտահայտիչ, պատկերային խոսույն միջոց է ծառայում (1, 95, 270, 272, 302: 4, 231, 244): Անդրանիկ անունը նաև ընդհանրական զինվորի խորհրդանիշ է գործածվել եզակի ու հոգնակի թվով: Բոլորիս հայտնի է, որ Անդրանիկ Օզանյանն ազգային հերոսությամբ թուրք ասկյարների օրհան էր, ուստի, տեղին ու դիպուկ էր նրա անվան գործածությունը որպես այդպիսի խորհրդանիշ՝ Թե պատուհասող Անդրանիկներով (5, 89), Ես Անդրանիկի զինվորը հասարակ ... (5, 88), Յոթ ֆիդային էլ Անդրանիկ է քաջ (5, 133): Կամ՝ Հովհ. Շիրազը Մեծ մակդիրի գործածությամբ շեշտում է անմահ գորավարի հոգու վեհությունը, գործունեության անհեղինակությունը: Անդրանիկ Օզանյանի ընտանիքը բռնառնչված էր անօրենների կողմից, բայց ինքը մեծահոգաբար է վարվել նրանց անգոր մանուկների հետ (5, 154): Մեծ գորավարը Հովհ. Շիրազի համար օրինակելի հայ մարդ էր, որ արժանի էր աստվածացման, ուստի, կերպարին առանձին բառով անդրադառնալիս հիշատակում էր նրա ազգանվեր գործունեության որևէ հատկանիշը: Օրինակ՝ իր սկսնակ արվեստագետ որդուն՝ Արա Շիրազին, աշխատանքի խորհրդով անդրադառնալիս, պատգամում է քանդակել նաև հայոց մեծություններին: Այդ շարքում Անդրանիկ Օզանյանի անունն էլ է նշված՝ բարեհունչ ներքին հանգով, իսկ Վարդան Մամիկոնյանը՝ հետո՝ ընդհանուր հանգավորման համար:

Քանդակի՛ր, իմ բալի՛կ, Անդրանիկ, Վարդան,
Այնպես, որ արձանն էլ հայերեն խոսի,
Որ ասես՝ արյունս քո մեջ կհոսի,
Հանճարեղ ընծյունն ես ավերված իմ տան (1, 95):
Քառյակում ընդգծվել է մեծ գորավարի ուժը, ռազմական հմտությունը, բանիմացությունը և այլ արժանավորություններ: Մասիսի ձյան շողարձակումը համեմատվել է անմահ Անդրանիկի կայծակտացող թրի հետ, որը զինվորականի անենամեծ արժանիքներից է:
Մեծ Մաշտոցի հավերժաբուր գրի նման կշռողս,
Մասի՛ս, ձյունդ Անդրանիկի թրի նման

կշռողս (1, 302):
Հայրակարոտ Հովհ. Շիրազը հորը նվիրած «Սպասումի հեքիաթներով» բանաստեղծությունում մեծարանքը սրտախորով ցավով է շեշտում՝ որդիական սերը՝ հորը հասցնելով հայագետ իմաստունին, արքային, գորավարներին:
Մի՞թե հայր իմ, բոստանում բահերդ էլ չեն զնգալու,
Դու իմ Վարդան, Անդրանի՛կ, դու իմ Մաշտո՛ց, Արզի՛շտի՛ (4, 231):
Հովհ. Շիրազը Անդրանիկ Օզանյանի անունը «Հորս վերջին մոռնչը» բանաստեղծությունում գործածել է՝ շեշտելով ռազմավարական տաղանդի ուժը, որից ուզում էր ազատվել թուրքը: Վերջինիս խուժան ուժերի չարամտության, խորամանկության, դավադրության, ստորության և այլ հատկանիշներ են ընդգծվել: Տանջամահ են անում անզեն հային՝ բանաստեղծի հորը՝ պահանջելով.
-Անդրանիկի տեղն ասա՛ (4, 244):
Անդրանիկ գորավարի անունը, համեմատաբար, հաճախակի գործածվել է «Հայոց դանթեականը» պոեմում: Նույնիսկ որոշ էջերում մեկից ավելի կիրառություն կա (2 անգամ՝ 310, 312, 313, 321, 322, 3 անգամ՝ 320, 322, 323, 4 անգամ՝ 319): Նույնիսկ Սպիտակ// ճերմակ ձիավոր անվա հետ հասնում է հինգի (5, 310, 322, 323) և: Այս պոեմի գեղագիտական կերպար Նարեկացու տիպականացված խոսքում Անդրանիկ Օզանյանի անունը շրջատությամբ է գործածվում՝ աշխարհագրի հայր պատվանմամբ՝ -Իրավ է գայրդ (գայրութը-ՍՍ), հայրդ մեր գորաց (5, 21): Անվեհեր քաջ հերոս Անդրանիկի ներքնամոռնչ տառապանքներն իր հալածված ժողովրդի ցավից անգամ չեն վրիպել մեծ բանաստեղծի գրչից՝ Եվ Անդրանիկի ոգին ահագնում, խուլ մոռնում էր... (5, 177), Բայց գորքերի դեմ քո գերմանագեն, Ի՛նչ աներ հայոց իմ մանուկ բազեն, Իմ հայրուկ բազեն, գետային արծիվ, Դու՛ կրակե ծով, նա՛ մակույկ մի շիվ (5, 178), Տուտանի ծորում ճիշտ հարյուր հազար հայերս կորան, Մինչ Անդրանիկը հայտնվեց... ծորում (5, 302): Հովհ. Շիրազը դիպուկ բնութագրել է թուրքի ան ու սարսափը զինված Անդրանիկից՝ Մի բուռ զնդով՝ ռիտով անհագ, Նեղեց մի ողջ գորաբանակ, Չարկեց մթնում հրաշքի պես, Չարկեց մի գունդ Անդրանիկի, Շշմեց թուրքը պիշ աչքի պես (5, 304), Մի բուռ զնդով գորքն օղակեց, Թուրքը ճչաց՝ Անդրանիկն է, Սրի շաչունն ասաց՝ Ի՛նքն է... (5, 310), Ու թրամերկ առաջ սուրաց Ու թրահար արավ մեկից Յոթն ասկյարի... Այս որ տեսավ, Ինչպես նախիր հուր կայծակից, Թուրքն իր ահից՝ Ամանն, -ասավ, -Չլինի-թե Անդրանիկն է (5, 313), Անդրանիկի ահից ճչում էվ դուրս էին կռվից փախչում (5, 322) և: Անդրանիկ Օզանյանը «Հայոց դանթեականը» պոեմի սկզբում ներկայացվում է երիտթուրքական կեղծ հայապաշտների կողմից բացարձակ բացասական վերաբերմունքով, որով հեղինակը ցույց է տալիս թուրքի սուտ քաղաքականությունը (5, 11): Անդրանիկ Օզանյանը ներկայացվում է նաև որպես տեսլացած վշտի վկա ուրվական:
Եվ ճեղքել էինք գետը մոռացման,
Որ ափ դուրս գայինք հուշերի նավով,-
Երբ Անդրանիկի ոգին էլ անծայն
Եվ սպառազեն հայտնվեց ցավով (5, 17):
Այնուհետև տրվում է մեծ հերոսի նկատմամբ խորհրդային կարգերի՝ ստալինյան շրջանում հայության թույլ տված սխալ վե-

րաբերմունքը՝ որպես ուսուցողական անփոխարինելի դաս: Հեղինակի գեղագիտական նկարագրությունն ամենայն մանրամասնությամբ հնչում է անողոր ճշմարտությամբ:
Եվ ճամփազլխին մեր այս անդրանիկ
Հայոց նոր ոգի Անդրանիկը լուռ,
Հոնքերի աղեղն աչքերով զինեց,
Բարբառեց որպես մերկացող մի թուր՝
Ասես սրբությամբ ինձ էլ այպանեց,
Բանալով մի հին վշտի վարագույր,
(Որ դեռ չի բացել ոչ մի հայ գուսան,
Ոչ մի բանաստեղծ)...
Բացում էր դժոխքը հայ դանթեական:
Թե՛- լուռ կշտամբեց նա ողջ հայերիս՝
Մեր պիղծ լռության դաժան հրաշքով...
-Ո՛վ է այս ոգին,-հարցուց լուռ Դանթեն,-
Աչքից էլ զենք ու զրահ կկաթեն...
-Գարիբալդին է,-ասացի,-հա՛յր իմ,
Հայ Աստծուն էլ զենքով մտերիմ...
Եվ խորհրդավոր ուրվականը մեծ՝
Հայ Գարիբալդին, իսկույն հառաչեց.
-Այս, յավոր՛ն, հայե՛ր, ի-նչ ասես ձեզի,
Ի-նչ շուտ մոռացաք մերոնց ու մեզի...
-Օ՛, հա՛յր իմ ,-ասի,- և քե-զ մոռանանք,
Շինելդ թափ տաս,
Արժիճե կարկուտ կթափվի դեռ տաք.
Ո՛վ մեզ կրակից մայր Արագն անցուց,
Քարավանների չորս կողմը վահան՝ ձին
ծառս հանելով,
Ճիշտը յոթը հարյուր հազար հայերուս
մահը վանելով,
Ուր Սպիտակը վրնջում սևն էր օսմանի
գորքաց,
Քիչ է Մասիսն էլ, թե ճամփիդ փռեմք՝ ի
տեղ մեր գորգաց,
Բայց շղթայվեցավ մեր սիրո գորքն էլ...
-Հապա ինչո՞ւ է աճյունս դրսում... (5, 18-21):
Հայ ժողովրդի մեծ գորավարի կերպարը տիպականացնելու համար, բնական է, Հովհ. Շիրազը ցուցաբերել է արևմտահայերենի անթերի իմացություն: Անդրանիկ Օզանյանը բնութագրվել է տարբեր խոսույն ու ծավալուն մակդիրներով, փոխաբերություններով, փոխանունություններով, շրջատություններով՝ Հայ Աստծուն էլ զենքով մտերիմ... ..խորհրդավոր ուրվականը մեծ՝ Հայ Գարիբալդին (5, 18), ժպտաց հուր ոգին թուր Անդրանիկի ... (5, 22), Հայ լեզուն թուրն է քաջ Անդրանիկի, Որ պիտի խոսի նման կայծակի (5, 63), Ինչպես մի գունդը մեծ Անդրանիկի (5, 180), Երբ մոլեգնում էր ցեղասպան քամին, Քաջ Անդրանիկի գորքը հայտնվեց (5, 303), Հայդուկն հայոց (5, 311), Հաղթության թուր Անդրանիկը, Սասնա ծուռն հազար շիտակ, ...մոռնչուն Անդրանիկի Սանձեց սիրտը նոր բանակի (5, 312)...բայց ծառս հանեց հսկան իր ձին, ...մեծ ֆիդային (5, 313), Կայծակի անպ Անդրանիկը... Մեծ հայդուկի թուրն է գորռում (5, 314), Մեծ մի գարկով Անդրանիկի Մեջքը բեկվեց նոր բանակի, Խուճապն ընկավ թուրք գորքի մեջ, Եվ մոլեգնեց Հայդուկը մեծ (5, 322), Եվ ձին հեծավ արծիվն հույսի (5, 325) և: «Սպիտակ ձիավորը Փարիզում» ծավալուն բանաստեղծությունը նվիրված է ազգային հերոս Անդրանիկ Օզանյանի աճյունի՝ Ամերիկայից Փարիզի Պերլաշեզ գերեզմանոցը փոխադրվելուն (հայերը ցանկացել էին Երևան բերել, խորհրդային կարգերում չեն թույլատրել. այդ սուրբ մասունք աճյունը քսաներորդ դարի վերջին տասնամյակի սկզբին Երևանի Եռաբլուր տեղափոխվեց): Այստեղ երկու անգամ գործած-

վում է Անդրանիկ սուրբ անունը (1, 270, 272): Մահարձանը, ըստ Հովհ. Շիրազի պատկերացման, ըմբոստ, հայրենիքի՝ Սասունի, Արևմտյան Հայաստանի ազատությանը ձգտող, միասնական հայրենիք տեսնող Անդրանիկ՝ Սպիտակ ձիավորն է: Այստեղ Անդրանիկ երկու անուններն էլ նույն գեղագիտական նպատակն են հետապնդում՝ մեծ հերոսի, ընդհանուր հայության վեհ երազանքը՝ պայքարող, հայրենիքը ազատագրող ոգի, որը խորհրդանշում է մահարձանը և յուրաքանչյուր դիտողի համակուն դրանով (Հովհ. Շիրազն այդ մահարձանը միայն նկարներով էր տեսել):
Երագիս մեջ Փարիզ մտա,
Անդրանիկին այսպես գտա,
Պերլաշեզում
Սասունն ուզում...
Թռցնում էր ձին թևավոր (1, 270):
Յոթերորդ ծուռն հայ Սասունի,
Միակ շիտակն հայ ցատումի
Կանգ չի առնում ոչ մի վայրկյան
Իդձ Անդրանիկը հույսով Հայկյան (1, 272):
Հովհ. Շիրազն Անդրանիկ Օզանյանին նվիրած այլ բանաստեղծություններում մեծ գորավարի անունը չի տալիս, այլ Ջորավար կամ ճերմակ ձիավոր է կոչում, որն ընկալելի է համայն հայությանը (երևի նախորդ դարի մինչև վաթսուներկու զրված գործեր էին): Հնչել են «Թե չլինեիր գորավարը» (1, 116), «Շատ ես, ազի՛գ, քո ճերմակ ձին» (1, 226): «Շատ ես, ազի՛գ, քո ճերմակ ձին» բանաստեղծությունում նկարագրում է անվեհեր Ջորավարի սովորական, մարդկային երազանքը՝ ազատագրված հայրենիքում՝ Մասիսի լանջին ձիավարելը, խնամելը, Արագուն լողացնելը: «Թե չլինեիր գորավարը» փոքրածավալ բանաստեղծությունում, ճանաչված գորավարներին զուգահեռ, ի դեմս Անդրանիկի, վեր է հանում անանուններով մոռացվող նրա հենքը՝ նահատակված հասարակ զինվորների առանձին չիղջվելը, որը եղել է, կա ու կլինի (սզակիր մայրերի անբուժելի ցավը):
-Թե չլինեիր գորավարը՝
Չէր փրկվի մեր աշխարհը,-
Ասում էին այսպես իրար՝
Մոռանալով բազմահազար
Ու բազմաբյուր մեր զոհերին,
Որ փրկեցին աշխարհն արար,
Սանդուղք դառան գորավարին...
Բայց, ախ, կորան ողջ աշխարհում՝
Անգերեզման ու անանուն... (1, 116):
Հայ ժողովրդի համար սրբացած անուն Անդրանիկը Հովհ. Շիրազի կողմից բայցացվել է՝ անդրանիկվել, որն իր մեջ բովանդակում է մի շարք ընթացական իմաստներ՝ հայրենասեր քաջ պայքարող լինել, հերոսանալ, սրբանալ, անձնվեր, ազգօգուտ լինել, անարդար պատժող լինել՝ Անկողմնակալ խաղաղություն, ամենուրվի՛ր օդի պես, Որ գալիքվեն, անդրանիկվեն, իմ դեռ բարուր յոթն էլ քեզ (2, 284), Ո՛վ լիրբ հուռիաթ, մեզ լավ պատրեցին Այն ձյուն Ալթայից թուրքերը եկվոր, Ո՛վ խաբեություն, ինքը քեզ փրկած Սուրբ հայդուկներից խոլ անդրանիկված (5, 57), Այսպես թուրքաց գորքը բեկվեց, քանզի հայ գորքն անդրանիկվեց (5, 324):

Ս. ՄԻԱՍՅԱՆ
ԱրՊՅ, Բ. Գ. Թ., ՂՈՅՆԿ

ՁՈՆ

ԳԱՐՈՒՆԸ, ԿԻՆԸ, ՄԱՅՐԸ, ԿՅԱՆՔԸ...

Գարունը քնքշորեն մուտք է գործում հայոց լեռնաշխարհ: Գարավից դեպի հյուսիս են թափանցում արեգմաշող ճառագեղները, ու մի անուշ ծփանք է խայտում երկնքում: Թևածուն է մեղմանում ու առիքնող մի զվարթություն: Մի քանի օր ևս, և արևի շողերը մեզ կպարզեն ծիլ ու կանաչի, ծառ ու ծաղկունքի թագավորությունը արբշիռ թարմությամբ, որն արբեցումի բույրերով ու գույներով կմտնի ամեն մի սիրտ: Գարուն է...:

Այս տարվա գարունը բաղձալիորեն լինի ծաղկափթիթ, արփիագոծ, կենսաթթիռ, արբունքի բուրբ զմայլագեղ գույներով: Բուրեն ծաղիկները լիաթոք, խնդություն տիրի հայի հոգու անդաստանում, և ամենուր բերկրանքի ճիչ տարածվի ամեն մի հայոց օճորքում: Եղեռնից փյունիկված հայոց վաղմուշկան օրրանում լինեն բազմապատիկ ծնունդներ, հայությունը, մեծամեծ գործերի ձեռնամուխ լինելով, աննախադեպ արդյունքներ գրառի, մեծ նվաճումների հասնի, գարնան փթթումը յուրաքանչյուր օջախի լիության ու շենացման հենքը դառնա: Գարունը աշխարհի 100 տարվա բարձունքին գարունը շողշողա ոսկեծփուն արեգակի ծիրանիով...Եղեռնի գարունը ունենա առանձնահատուկ շնչառություն: Ս. Կապուտիկյանի բանավանդով՝ մենք «պիտի վրեժ առնենք ապրելով»՝ գարնան հեթո՞ւմ ճոր շունչ առած...:

Գարուն է և ուրախության ծովածավալ բերկրանք: Գարնան գարթոնքը նշանավորվում է մի զմայլագեղ տոնով. Կանանց միջազգային տոնը շքեղաշուք շղարշով է գարդարում գարունը, և Մարտի 8-ը սպասված տոն է բոլորի համար: Մոլորակի մարդկությունը շնորհավորում է աշխարհի հրաշագեղ արարածին՝ կնոջը: Կին՝ ասել է քնքշություն, ջերմություն, բարություն, վերընծյուղվող կյանք: Եվան բերեց այդ խնդությունը, որ Ադամի կողից ծնվելուց հետո ինքը շարունակի Արարչի ամենամեծ պարզև՝ արարումը: Կյանք առավ սերնդաբանությունը: Աշխարհը լցվեց արարման պտուղներով: Աստծո ստեղծած աշխարհը կերպավորվեց: Ազգերը տարածվեցին ամենուր, ստեղծվեցին քաղաքակրթություններ: Եղե՞լ է մի դար, որ կնոջ գեղեցկությունը չլիներ սքանչացումի, խանդավառման աղբյուր: Ինչքան մեծարժեք կտավներ են պատկերվել աշխարհում, որի առանցքը կինն է՝ կյանքի ոգեշնչումը...Ինչքան ներբողականներ են հյուսվել կնոջ գովքն անելու: Աշխարհը լի է գեղեցիկ քանդակներով, որոնց մարմարիոն վեհությունը հոգու թոթիոններ ու կայծեր է տալիս: Կինը գեղեցկության մարմնացումն է, գարնան ու գարթոնքի խորհրդանիշը: Այս գեղեցկությունն ինքը կյանքն է, նրա կենսաթթիռ էլեկտր ու լուսահորդ զարկերակը: Այդպիսի գեղեցկության կատարելատիպ է Նարեկացու պատկերած Աստվածամայրը, որին վերագրված են իրական կնոջ բոլոր բարեմասնությունները. «Բերանն երկթերթ, վարդ էր կաթուն շրթունքներից, Երբ խոսում էր, ասես տավրի քաղցրանվագ ձայն էր հնչում, Իսկ վարսերը՝ շքեղագարդ, շքեղագարդ, Եռահյուսակ ոլորած էին այտերի շուրջ... Երբ շարժվում էր մարգարտափայլ գեղեցկությամբ, Ամեն քայլին՝ լույս էր կաթուն իր ոտքերից»:

Կինը... Աշխարհի հորդների՝ տիրակալների հետ գահավորակին բազմած քնքշությունը, որի մի խոսքով անգամ ճակատագրեր են վճռվել: Հիշենք Եսթեր թագուհուն, որի խնդրանքով մի ողջ ազգ է փրկվում կործանումից: Ո՞վ կհասնի առաքինի կնոջը: Իսկ հայ կնոջ բարեմասնություններն ավելի են բազմապատկվում, քանզի նրանց արտաքին հմայքին միահյուսվում են հոգու առաքինությունները՝ հեզություն-

նը, հոգատարությունը, պատվասիրությունը, անձնագոհությունը, ինչպես նաև քաջությունը: Հիշենք Փափկասուն Տիկնանց Հայոց աշխարհի: Երբ զոհասեղանին դրված էր հայրենիքի ազատությունը կամ ոչնչացումը, նրանք աներեր կանգնեցին հայոց այրերի կողքին: Նրանք էին, որ իրենց հարստությունը տվին, որ սուր կռեն հայրենյաց պաշտպանության, և այրերի հետ կողք կողքի մարտնչեցին՝ պարսից այլադավան լուծը թոթափելու:

Արշակունյաց հայոց թագուհի Փառանծենը փառահեղ էր անգամ գերության մեջ: Երկար ու ծիզ ամիսներ շարունակ պաշարված լինելով Արտագերս ամրոցում՝ ոչ ոքի զգալ չէր տալիս այն չարիքը, որ համաճարակն էր փրթել ողջ հայրենին: Մատնությամբ պարսից Շապուհի ձեռքը հանձնված թագուհին պիտի անարգ մահ ընդուներ: Բայց վերջինս մահվանից առաջ թողություն խնդրեց՝ վերջին անգամ առանձնանալու և աղոթելու...որից հետո իրեն նետեց վիհը՝ ազատվելով Շապուհի վճռած ստորացուցիչ մահվանից:

Ինչպիսի՞ վեհանձնությամբ դիմացավ իր դատավճռին Մխիթար Սպարապետի տիկինը՝ Սաթենիկը, որ որդուն սպանել տվեց թուրքերի կողմից երկրի չղարծվելու համար և ճարճատող բոցերի մեջ ողջակեզ դարձավ...:

Անձնագոհ կանանց ինչպիսի՞ աստղաբույլ է պատկերված հենց «Սասնա ծռերում» . Ծովիցարը գերադասեց միայն ինքը զոհ գնալ, բայց երկիրը ավերումից փրկել.«Աղեկն էն է... ես մեկ ջան եմ, էրթամ, կորսվիմ, Քանց մեր Հայաստան երկիր ավերի...», Արմաղանը համուն Սասնա տան գերադասեց մահը, խորոտ ու առյուծասիրս Խանդութի Դավթի մահվանից հետո ինքնակամ մահ ընդունեց...:

Կինը՝ և՛ նուրբ, և՛ տոկուն, և՛ քաջ: Երբ Ալեքսանդր Մակեդոնացին ամազոնուհիների վրա արշավանքի էր պատրաստվում, ասաց. «Եթե ես հաղթեմ, իմ փառքը չի մեծանա, իսկ եթե նրանք ինձ հաղթեն, դա սարսափելի խայտառակություն կլինի: Կասեն կանայք հաղթեցին Ալեքսանդր Մեծին»: Եվ նա չեղյալ է հայտարարում այդ արշավանքը:

Ինչպիսին կլիներ աշխարհի տեսքն առանց կնոջ, առանց այդ քնքշասիրտ, մեծահոգի, հոգածու էակի: Առաքինի կնոջը ո՞վ կհասնի: Սողոմոն Իմաստունն ասում է. «Առաքինի կինը ով կրնայ գտնել: Անոր գինը գոհարներն ավելի է: Անոր երկանը սիրտը անոր վրա վատահ է ու ավարի կարոտ չըլլար... Անոր ճրագը գիշերը չի մարի: Անոր այրը կը ճանչցուի դռներում մեջ, երբ երկրին ծերերուն հետ նստի: Իր բերանը իմաստությամբ կը բանա եւ իր լեզուին վրա քաղցրութեան օրենք կա...»:

Մեծարման է արժանի Կլարա Ցետկինան, որի շնորհիվ սահմանվել է Կանանց միջազգային տոնը:

Մի՞թե մեծագույն առաքինություն չէ Մայր Թերեզայի կյանքն ու գործունեությունը, որ դառնալով Աստծո ուխտյալ զավակ՝ իր կյանքը նվիրաբերեց մարդկության կեղծված մասի վշտերի անոքմանը: Բացեց աղքատանոցներ, խնամեց հիվանդներին, հոգ տարավ անապաստաններին, անօթևաններին՝ իրենց կյանքի մայրամուտը գոնե արժանավայել վերջակետելու: Մայր Թերեզան իր օրինակով մեզ սովորեցրեց, թե ինչ է նշանակում ապրել Ավետարանը: Ահա մի քանի կարևոր դասեր, որ անհրաժեշտ է յուրաքանչյուրիս. «Այսօր աշխարհը կարծես գլխիվայր շուռ է եկել և տառապում է, որովհետև այնքան քիչ սեր կա տանը, ընտանեկան կյանքում... Սերը սկսվում է տանը, իսկ եթե այդպես չէ, տառապանքն ու դժբախտությունն է տիրում աշխարհում... Եվ ահա տանը



սկսվում է աշխարհի խաղաղության փլուզումը: Ամեն մարդու մեջ Աստծուն են տեսնում: Երբ լվանում են բորոտի վերքերը, կարծես Տիրոջն են խնամում: Աղաչում են ձեզ, ընտրեք խաղաղության ճանապարհը: Մենք զգում ենք, որ այն, ինչ անում ենք, գեթ մի կաթիլ է օվկիանի մեջ, բայց եթե այդ կաթիլը չլիներ, օվկիանոսն ավելի փոքր կլիներ...»:

Իսկ ինչպիսի՞ն են Արցախի կանայք ու մայրերը: Դեռ պապենական ավանդապաշտությամբ վառվում են թոնիրները, և խնկաբույր հացի բույրով է հայ կինը բացում սեղանը: Աշխատասեր են նրանք, մաքրակենցաղ, իրենց ուրախությունը զավակների հաջողությունների մեջ փնտրող, զոհաբերվող և ազգի օրհասի պահին տղամարդու կողքին ճակատ կազմող և թշնամուն ահաբեկող... Խրախուսանքի է արժանի հայ կինը՝ արարող, էլք փնտրող, անձնուրաց, զթառատ: Բնութագրական են այսպիսի տողերը. «Մահվան մեջ՝ կյանքի արմատներ փխրեցնող, Մաքառումներում այրերին հավասար, Ստեղծարար կյանքում բողբոջներ տվող, Վճռական պահերին՝ նույնիսկ առնական...»:

Երբ է նկատված՝ կինը օջախի ներքին սյունն է, տղամարդը՝ դրսի: Փոխադարձ համակրանքով ու փոխըմբռնմամբ ստեղծված ընտանիքի մեջ է ազգի զորությունն ու ապագան: Այրը՝ տան պարիսպ, կինը՝ հենասյուն: Հենց այսպիսի ընտանիքներում են մեծանում արժանավոր զավակներ:

Կնոջ ամենամեծ բարեմասնությունը մայրության օժտվածությունն է: Ամենաքանցելի գեղեցկությունն անգամ տարիների հետ կթոշմի, սակայն մոր վաստակը չի կորչի: Մայրը կյանքի ակունքն է: Մայրանալու մեջ ինչքան հոգեկան հարստություն կա, երբ մայրը զգում է իր զավակի խլտումը կրծքի տակ: Մայրության բերկրանքը աշխարհին խնդություն է պարզում: Դա զորության ու կենսունակության աղբյուր է. մայրը՝ մանկիկը գրկին, զավակներին դարձնում անվիելիս, նրանց սնարի մոտ անքուն գիշերներ անցկացնելիս, կյանքի ճանապարհով առաջնորդելիս... Մայրը կյանքի փարոսն է: Երջանիկ են այն զավակները, ովքեր ունեն հոգատար մայրեր: Եվ աշխարհի մեծերը մեծ են նախևառաջ իրենց մայրերով: Տեղին է Շիրազի խոսքը. «Կին կգտնես, բայց մայր երբեք չես գտնի»:

Ո՞վ դու անփոխարինելի էություն, որտեղի՞ց քեզ այդքան ուժ և ավյուն, որ կարող ես աշխարհի բեռն իսկ ուսել: Վախթանգ Անանյանն անհուն կարոտով է հիշում, որ հենց իրեն՝ մոր ծնված մանկանը փրկելու համար մայրը մեռավ, մանկանը մեջքին կապած, Բազումի լեռներից իջել է Դիլիջանի հովիտը՝ հորդառատ անձրևի տակ քայլելով, հազար ու մի տեղ սայթաթելով: Հետագայում գրողը որքան է ցանկացել իմանալ, թե նա որտեղ է սայթաթել՝ մոր ոտնատեղերը համբուրելու և իր վաղամեռիկ մոր կարոտն այդպես առնելու...:

Քանի՞-քանի անկրկնելի տողեր են մայրե-

րին նվիրվել: Մայրերգակ բանաստեղծները մորը սրբացրել են, Աստվածածնի չափ մեծարել: Քիչ է մեկ օրը հայոց մայրերին, դրա համար է գարնանային միամայակ սահմանվել:

Ապրիլի 7: Ազնվագույն տոններից մեկը, Երբ Գաբրիել հրեշտակապետը ավետում է Մարիամին Աստվածածնին, որ նա որդի կունենա, ով Բարձրալի Որդի կկոչվի: Դա ավետան օրն է, օրը մեծ ցնծության: Իսահակյանը գորովանքով է հիշում մորը, քանզի մոր խորունկ սիրտը միայն կիմանա որդու վիշտը: Պանդուխտ որդուն թե կինն էլ չսպասի, մայրը կսպասի և չի վիստվի: Շիրազը մոր սիրտը համարում է անչափելի խորություն, ճրագ ու արեգակ, տան աստված:

Երևի զգացած կլինեք, որ առանց մոր տունն անհամ է լինում՝ նման հողից պոկած թռչնած ծաղկի: Թոթվեցնք խոր ներշնչանքի տողեր ունի նվիրված մորը. «Մայրը՝ դա հավիտենական, մշտաթարմ և մշտադալար լիրիկան է, դա ոսկյա ծառն է երկնքի կապույտ դաշտում բուսած»: Սակայն բոլորին կոչ է անում համբուրել մոր ձեռքերը՝ փոշի սրբող, լվացք անող, անվերջ դատող, անվերջ բանող...:

Մայր, դու մշտագոր վեհություն, զավակներիդ ծնած, սնած, դու իսկական աստվածություն: Դու ես խղճի զարկերակը աշխարհի: Դարձյալ դիմենք Շիրազին. «Լուկ մայրն է այժմ խիղճն հայրենիքիս, Դարերի կյանքն էլ թե տաս մայրիկիս, Աստված իմ, քիչ է, չէ, քիչ է էլի»:

Չհնվորված մայրեր, ձեր կյանքի ամենավճռական պահը եղել է մարտադաշտում: Դուք ունեցաք զավակներ և նրանց եք փոխանցում ձեր արիությունը: Իսկ եթե չունեցաք... և մնացիք, ախ, անվասայակին զանված, ազգի սերունդներն են ձեր զավակները. նրանք են պարտք ձեզ այցելել ու հոգ տանել: Դուք սխրանքի մեջ հաղթանակի շիվեր տնկեցիք, որոնք այսօր հաստաբուն ծառեր են: Ձեր ամեն մի տոնը համազգային տոն է, ձեր մարտական հուշերը՝ սերունդների դաստիարակության զինանոց... Սուսե մայրիկը ձեր սխրանքին ականջալուր կլիներ ու ինքն էլ կպատմեր, թե ինչպես իր սիրեցյալ ամուսնու՝ Աղբյուր Սերոբի ու որդիների հետ ընդդեմ թուրքերի է կռվել ու Բաղեշի բանտում անգամ հոգու արիությունը չի կորցրել...:

Սևազգեստ և վաղուց ճերմակահեր քանի՞-քանի մայրեր պատմում են իրենց զավակների սխրանքը: Շատերն էլ զրի են առել այն ամենը, ինչ զավակներն են կատարել:

Մայր, քո տառապանքը ակունք ունի, և այդ ակունքը վտանգված հայրենիքի զոհասեղանն է: Անուր բռնիք մտքիդ թելը, որ ոչ մի թիզ սխրանքի հուշ որևէ մատյանում անվավեր չմնա...:

Ու աշխարհի փոքրիկ մի անկյունը՝ Արցախը, տարեցտարի իր բարոյական տեսքն ընդունելով, մայրությանը մեծ պարզ և տալիս՝ բարեկեցիկ կյանքով ապրելու և արժանավոր որդիներ դաստիարակելու: Ու թող ոչ մի զավակ չմեծանա հայոց երկրում գրկանքի ու կարիքի մեջ, ու մայրերը, մեծ հոգատարությամբ շրջապատելով իրենց զավակներին, ծաղկեցնեն հայոց օջախները:

Շնորհավոր ձեր տոնը, հայոց մայրեր: Գազապայից էլ համեղ եք դուք, դուք՝ սիրասուն, բայց և տանջված, քնքշասիրտ, բայց և նեղությունների թուրայով անցած, դուք՝ մեզ ապավեն, ո՞վ աշխարհաշեն մայրեր:

Հայոց կենարար մայրեր, դարերի հետ սերունդ եք կրթել, կրթեք շարունակ, որ նոր սերունդը հոգու թռիչքով գորացնի մեր երկիրը, և որևէ ոտնձգություն չխախտի արցախահայության անդորրը:

ԱՆԱՂԱՐՑ ՊԱՅՏԵՔ ՄԵՐ ԱՎՅՐԵՆԻՍ

«Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու լուծման ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարհական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը», -ասել է մեծն Ռունանյանը:

Աստված յուրաքանչյուր ազգի մի առավելություն է տվել: Հայերիս էլ մեր առաքելությունն է տվել, մի անփոխարինելի առաքելություն, ինչն ամփոփված է մեր լեզվում: Մայրենի լեզուն պարունակում է Աստուծո խոսքը, միտքն ու նտածողությունը:

Աստուծո յուրաքանչյուր օր հանգստանում ենք մեր մեծերի գնահատանքի մեջ, որ «Մեր մահից հետո մեզ և աշխարհին փոքր ժառանգություն չեն կտակել: Բայց մենք պետք է

չնոռանանք երբեք, որ մեր ժառանգության մեծագույն գանձը մեր լեզուն է»:

Եվ ի նպաստ մայրենի լեզվի պահպանման՝ փետրվարի 27-ին Ասկերանի շրջանի Խնամապատի Արթուր Հայրապետյանի անվան միջնակարգ դպրոցում հայոց լեզվի և գրականության ուսուցիչների կողմից կազմակերպվել էր միջոցառում՝ «Անաղարտ պահենք մեր մայրենին» խորագրով:

Միջոցառումը բաղկացած էր երկու մասից՝ թատերախաղի և վիկտորիանայից:

Հինգերորդ և յոթերորդ դասարանի աշակերտները հանդիսատեսին ներկայացան «Խոսքի մասեր»-ի հանդերձանով: Նրանք ներկայացան միջոցով փորձեցին ցույց տալ մեր մայրենի յուրաքանչյուր տարրի կարևորությունն ու գեղեցկությունը: (Ստորև կներկայացվի թատերախաղն ամբողջությամբ):

Թատերախաղից հետո անցկացվեց վիկտորիան, որտեղ 5-8-րդ դասարանների աշակերտներն իրենց ուժերը փորձեցին հայոց լեզվից ունեցած գիտելիքներով: Վիկտորիան կազմակերպվեց 3 փուլով (1-ին փուլ-մասնակցում էին 4 թիմերը, 2-րդ փուլ-ավագների մրցույթ, 3-րդ փուլ- առավել բարձր միավորներ հաղթած 2 թիմեր):

Հաղթող ճանաչվեց 6-րդ դասարանի «Այբուբեն» թիմը:

Միջոցառման մասնակիցները ստացան փոքրիկ հուշանվերներ:

Եկեք չնոռանանք, որ լեզուն մեր հայրենիքն է, և ինչպես հայրենիքը, այնպես էլ լեզուն ևս կարիք ունի ամենօրյա պաշտպանության:

Առլենա ՉԱՊՊՐԱՆ
ԽՆՈՒՄԱՎՈՐ ԿՈՆԿՐԵՏԱԿԱՆ ԴԱՊՐՈՑԻ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՍՏՈՑՆԻՔԻ



Հու օգուն ա, քիսա թա կյաս, այուն-ապուն ըրեվալմա, Ղարաբաղում լոխ լավա:
Սաղ աշխարհը մեզ ա յեշում, ես հինջ երգիր, ես հինջ դուշ, ինքն ա պերալ խիլա մարդու մալրիաթու սուկիթեն շուրջ, Այուն-ապուն արևը վկա, Ղարաբաղում լոխ լավա:
Ղարաբաղը մեր Աքան ա, Ղարաբաղը Ապան ա, Այան-ապան սահման չըն տալ՝ Ղարաբաղում լոխ լավա:
Այան-ապան մեր սահմանն ա, ընդհանա տեն տեղ չկա, Խելունք կացեք, բլոտենք, թորքը պենու մաթալա:
Այան-ապան լուխճիդ մատաղ, վեր մանը կտրիս՝ ցավ կտա, Սերավ կացեք՝ թորքը սատկե, Ղարաբաղում լոխ լավա:
Մին պեն էլ կա՝ թաքուն ըմ ասում՝ Աշկար չանիք, դաշխայընք, Գիղացկանա, դոնգիություն՝ Ռուսա, ուղի, թա ջիուդ, վեր ջիում ըն, կոլավընը ընգուն, Գիղում չըն հինջ, բայց ասում ըն՝ լոխ լավա:

ԼՈՒՍ ԼՅԱՎԱ

Մեր բարբառը չգիտողը են կլխան էլ քյախթա,
Մեր բարբառը չընդունողը, աստուծ վկա, ըշկըրներաս ընգածա,
Մին անգույնը Ջրաբերդնա՝ վար ասում, վար անում,
Ես մին ճունդան մեր Դիզակնա՝ Քիսա, թա կյաս՝ լոխ լավա:
Վարանդաք, զինքդ թափ տո, տու պենդ պահե չափարը,
Մեր հաչենն ա, թա մեր Ղալան, Խաչը վեր կա՝ Ղարաբաղում լոխ լավա:
Ա ժողովուրդ, լոխ լավ կացեք, ես աշխարհը թատրոնա,

Զ. ՍԱՐԳՍՅԱՆ
Մանկավարժ

ԹԱՏԵՐԱԽԱՂ «ԲԱՌԱՐԱՆՆ ՈՒ ՔԵՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

Չեղինակ.-Չգիտեն երբվանից, մի քարանձավում ապրում էին ծերուկ Բառարանն ու նրա կյանքի ընկեր Քերականությունը: Նրանք ունեին ութ զավակ-խոսքի մասեր՝ Գոյական, Ածական, Թվական, Դերանուն, Բայ, Մակբայ, Կապ, Շաղկապ: Գոյականն ու Բայն աշխատում էին, մյուսներն օգնում էին, լրացուցիչ գանազան գործեր կատարում: Երեկոյան բոլորը հավաքվում էին, թյուն, սրանից ու նրանից գրուցում: Մի կիրակի վաղ առավոտյան ծեծում են դուռը:

Բառարան.-Վա՛հ, ես ո՞վ եր...
Բայ.-Օ՛Ֆ, չեն թողնում քնենք(զնում է դուռը բացելու):
Չեղինակ.-Շենքին երևում են երկու փոքրիկ՝ խեղճագած:

Չայնարկություն.-Ողջո՞ւյն Ձեզ, բարի մարդիկ:
Բառարան.-Բարև Ձեզ, օտարականներ՝, ներս եկեք, հանգստացեք, տեսներք ովքե՞ր եք, ու՞ր եք գնում:
Վերաբերական.-Մրտում ենք, թեյ կարելի՞ է:
Քերականություն.-Իհարկե, հենց հիմա:
Ածական(Թվականի ականջին շնջում է).-Օհո՛, ինչ էլ համարձակ են:

Թվական.-Գոնե մի քիչ սպասեին:
Քերականություն.- Ահա Ձեզ թեյ, անուշ արեք:
Չայնարկություն.-Ինձ անվանում են Չայնարկություն, աշխարհում ապրում են շատ վաղուց, իսկ որոշ գիտնական մարդիկ չեն ուզում ճանաչել ինձ որպես առանձին խոսքի մաս, Ձեր տանն էլ մոտ չէին թողնում: Բայց ընկերոջս հետ Ձեզ գտանք: Խնդրում են մեզ էլ ընդունեք Ձեր ընտանիքը, հավատարիմ կլինենք, ազնվորեն կծառայենք, ինչպես բոլորը:

Կապ.-Ա՛յ քեզ բան:
Դերանուն.-Թու՛, ինչ համարձակ է:
Թվական.-Չա՛ն, Դուք էիք պակաս:
Բառարան.-Բավական է, լսենք նրա ընկերոջը:

Վերաբերական.-Ես էլ մեծ վաղուց ապրում աշխարհում, ինձնով մարդիկ իրենց վերաբերմունքն են արտահայտում, ինձնից օգտվում են, բայց չեն ճանաչում: Խնդրում են, գոնե Դուք ճանաչեք, ընդունեք Ձեր ընտանիքը:
Ածական....-Դե, իհարկե, կընդունենք:
Քերականություն.-Գիշտն ասած, դժվար բան եք ասում, անպայման պետք է մտածենք այդ մասին, զնացեք մյուս սենյակ (խոսքի մասերին է ուղղվում խոսքը), այստեղ խորհրդակցելու ենք:

Իսկ հիմա պատմեք, թե ինչ կարող եք անել, արդյոք որևէ օգուտ կարող եք տալ:

Չայնարկություն.-Խնդրեմ, ես Չայնարկությունն եմ: Դուք՝ բոլորը, ծեր խոսքում կան իմ, կան ընկերոջս ծառայությունից էիք օգտվում, բայց ուշադրություն էլ չդարձրիք: Մենք կարևոր ենք, առանց մեզ դժվար է առաջ գնալ, քանի որ ծեր զգացմունքները, տրամադրությունը, դատողական վերաբերմունքը մենք ենք արտահայտում:

Ուրախանում եք՝ ջա՛ն, օ՛հ, ուխա՛յ եք ասում, Ձզվում եք, դժգոհում՝ փու՛, վա՛խ, օ՛Ֆ, թու՛հ, ի՛հ, Ձարմանում եք՝ օհօ՛, պա՛հ, վա՛հ, ա՛յ-ա՛յ
Վերաբերական.-Որևէ բան եք հաստատում-իրոք, իսկապես, իհարկե, արդարև, կասկածում եք կարծեմ, երևի, գուցե, միթե, արդյոք, թերևա, սահմանափակում եք՝ գեթ, գոնե, միայն, լոկ, ժխտում եք՝ ոչ, ամենակին: Ես եղանակավորիչ եմ:

Չայնարկություն.-Ոչ միայն մարդիկ, այլև կենդանիներն էլ են օգտագործում ինձ՝ ծի՛վ-ծի՛վ, հա՛Ֆ-հա՛Ֆ, միա՛ն՝, բա՛, ծուղորուղո՛ւ, նույնիսկ առարկաները՝ զըճո, ճըճ, տըկ-տըկ:

Չեղինակ.-Բառարանն ու Քերականությունն իրար

երեսի նայեցին:

Քերականություն.-Առանց ձեզ դժվար է արտահայտիչ խոսել:

Բառարան.-Դե եկե՛լ, հասե՛լ եք այստեղ, երկուսիդ էլ կընդունենք:

Չեղինակ.-Քերականությունը չառարկեց, և զավակների թիվը հասավ 10-ի:

Բառարանն ու Քերականությունն ընդունեցին Չայնարկությանն ու Վերաբերականին, և պետք է այս որոշումը հայտնեին մյուսներին: Ներսից աղմուկ էր լսվում: Վե՛ճ էր սկսվել նրանց միջև:

Վե՛ճը սկսել էին Թվականն ու Դերանունը:

Թվական.-Դու ի՞նչ խոսքի մաս ես, երբ մի որոշակի իմաստ չունես, ում ասես փոխարինում ես:

Դերանուն.-Իսկ դո՛ւ, ես կարող եմ Գոյականի, Ածականի, Մակբայի, Շաղկապի, նույնիսկ քո դերը կատարել, դու ի՞նչ կարող ես անել՝ միայն թիվ ցույց տալ, գոյականի վրա դրվել: Ես էլ եմ դրվում, ածականն էլ: Լավ չի՞ լինի, որ քեզ անվանեն Ածական, կամ երկուսիդ՝ Մականուն:

Շաղկապ.-Դա քո գործն է:

Չեղինակ.-Խառնվեց Շաղկապը, որը վաղուց զայրացած էր Դերանունի վրա, քանի որ իր դերն էլ է խլում, նախադասություններ է կապում:

Դերանուն.-Դու էլ խոսելու իրավունք չունես, դու էլ ես ավելորդ, դու կապ ես, կապում ես, քեզ ո՞վ է առանձնացրել:

Շաղկապ.-Եթե ես կապ եմ, դու էլ ամեն ինչ ես, քեզ էլ պետք է բաժանեն մյուս խոսքի մասերի վրա և վերացնեն:

Չեղինակ.-Լուռ էին միայն Գոյականն ու Բայը: Ոչ ոք նրանց ինքնությամբ չէր կասկածում: Բառարանն ու Քերականությունը տեսան, որ վե՛ճը կռվի կարող է վերածվել, ներս մտան ու լռեցրին բոլորին:

Բառարան.-Ի՛ն սիրելի զավակներ, ինչու՞ եք վիճում, ինչու՞ եք իրար վիրավորում:

Քերականություն.-Չէ ո՞ր դրանով մեզ եք անպատվում: Ես անչափ տխրում եմ, երբ տեսնում եմ, որ Դուք չեք ուզում միաբան լինել:

Բառարան.-Մի բան լավ հիշեք՝ Միաբանության մեջ է միակ գործությունը: Իսկ բոլորիդ միաբանողը պետք է Սերը լինի:

Քերականություն.-Սիրեք ու հարգեք իրար, սիրելի՛ զավակներ: Այդ դեպքում իրար թերություններ երբեք չեք տեսնի:

Դերանուն.-Դու ամենայն ճիշտ ես մայրիկ: Ներեցեք ինձ, խնդրում եմ, ամենից հպարտը ես էի, ես պարծենում էի ինձ տված շատ հնարավորություններով. նրանով, որ ես կարող էի շատերի վրա իշխել: Իսկ այժմ ես ինձ շատ խղճուկ եմ զգում: Ես առանց ձեզ ոչինչ եմ:

Կապ, Շաղկապ.-Ներում ենք, մեր հարազատ եղբայր, մենք էլ պակաս չէինք:

Բառարան.-Ապրե՛ք, զավակներս, մի անակնկալ ունենք ձեզ: Մեր շատ սիրելի հյուրերն ուզում են միանալ մեզ՝ դառնալով մեր տան անդամները:

Մակբայ.-Մենք միասին շատ նպատակներ ունենք իրագործելու:

Կապ.-Միասին միտք կարտահայտենք՝ նախադասություններ կազմելով:

Թվական.-Եկեք լինենք բարեգութ, թույլ տանք, որ մարդիկ մեզանից օգտվեն, նկարագրեն բնության հրաշալի տեսարաններ, հայրենասիրական ոգի արթնացնեն:

Ածական.-Մայրենի լեզուն գովերգեն:

Բառարան.-Միշտ եղեք իրար կողքի, նեղության պահին օգնեք իրար:

ԿԻՆԸ, ՈՐ ՈՒՆԻ ԱՌԱՆՁՆԱԸ-



Չազվագյուտ երևույթներ կան, որոնք չեն կարող վրիպել անգամ անտարբեր մարդու հայացքից: Դրանք աչքի զարնող երևույթներ են: Եվ ամենաուշագրավն այն է, որ դրանք լավագույն դրական զգացումներ են առաջացնում: Արդեն չորս տարի է, ինչ Շուշիի Խ.Աբովյանի անվան կրթօջախում է աշխատում շնորհաշատ մի դաստիարակ՝ Նարինե Գրիգորյանը: Կին, որ ճանաչում է ձեռք բերել նախառաջ իր կազմակերպչական առանձնահատուկ շնորհքով: Նրա համար չկա որևէ սահմանափակում, պարզապես երևույթը նրա համար դառնում է տոն, իսկ տոնը համընդհանուր խանդավառություն է պարզապես ողջ քաղաքին: Որտեղ ինչ-որ մեկին է առանձնանում: Նոր տարի է, Հայրենյաց պաշտպանի օր, թե գարնան տոն, նա՛ է առանձնանում:

Այս անգամ շքեղաշուք է Գարնան ու Կանանց միջազգային օրվա տոնակատարությունը: Դահլիճը փառահեղ տեսք էր ստացել՝ լի գարնան շնչով ու թարմությամբ: Բեմն իրենից ներկայացնում էր մի հանդիսատես, ուր ամեն ինչ շնչում էր գարնան թարմությամբ ու զվարթությամբ, իսկ դահլիճը, ինչպես միշտ, լեփ-լեցուն էր: Մայրության հանդես մանուկների խանդավառանքն էր տիրում բեմի վրա:

Հանդեսը բացվում է ուսուցչուհու ողջույնի շնորհավորանքով՝ ուղղված ուսուցչուհիներին, մայրերին, հրավիրված հայուհիներին: Երջանկություն է մաղթում բոլորին միամայակի առթիվ:

Միջոցառումը նախադրոգական փոքրիկները սկսում են հարցազրույցով: Նրանք բովանդակալից հարցեր են առաջադրում մասնակիցներին, որոնց պատասխանն էլ ինքնաբերական ու անմիջական: Ավստրալիայից: Հնչում է մանուկների աղոթքը՝ գոհաբանությունը Աստուծո՛ւ՝ բարի հայր ու սիրող մայր ունենալու համար:

Այնուհետև ծիլ է առնում մանուկների կարկաչուն ձայնը, որն ամբողջովին զովք է մայրիկներին, շնորհավորանք՝ անուշ մայրերին: «Մայրը մի բառ է, մայրը մի վանկ է, սակայն այդ բառը մի աղանաղ է»: Ողջ միջոցառումը զուգակցվում էր շնորհագեղ պատրաստված սլայդներով, որոնք մեկը մյուսի հետևից իրար էին հաջորդում և ընդգծում մայր-վեհույան գեղեցկությունն ու անկրկնելիությունը:

Եվ կյանքը դառնում է գեղատեսիլ մի գարուն... Այնուհետև բեմահարթակի կենտրոնում են փոքրիկ բանակայինները, որոնք ևս արտաբերված մաղթանքներ են հնչեցնում մայրիկների պատվին: Հնչում է «Հայոց մայրեր» երգը ու նրանց անմեղ թողնվածը. «Մայրիկ, քեզ շատ եմ սիրում, թե չես հավատում, տես՝ աչքերիս մեջ դու ես երևում...»

Նրանց են միանում աղջիկները: Նրանք ցուցադրում են ծաղկեպսակների պարը... Եվ այսպես անվերջ հորդում է ուրախությունը, որ խիճդ է պարզապես բոլոր հանդիսատեսներին, նրանց հոգին լցնում խանդավառանքով, հրճվանքով, հպարտությամբ...


Այսպիսին է Նարինե Գրիգորյանը, որ տրամադրություն է առաջացնում ամենուր: Նրա ջանքերով կազմակերպված բոլոր և հաճախակի՝ մեկը մյուսին հաջորդող միջոցառումները համընդհանուր գոհունակության են արժանանում, իսկ այս մեկը՝ Մայրության ու գարնան տոնին նվիրված առանձնահատուկ է:

Սա պտղավորում է կյանքն ու գարունը, և ինքն էլ հենց իր մեջ կրելով կյանքի պտուղը, գնում է մայրամալու և իր չորրորդ զավակի ճիշով լցնելու ընտանեկան հարկը:

Թող մայրության խիճդը նոր եռանդ քեզ տա, տիկին Նարինե, հնայագեղ կին, դու կին ես մեծ եռանդի, որ ունես առանձնաշնորհում:

Վ. ԿԱԿՈՒՅԱՆ

ՄՏԵՂԵԱԳՈՐԾՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԱՆՅԱԼԻ ՈՒ ՆԵՐԿԱՅԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ



Ուսուցիչ Ալբերտ Սարգսյանը՝ արժանավոր մարդ՝ հարգված թե՛ մեծերի, թե՛ փոքրերի կողմից: Ծնվել է 1936թ. Դահրավում: 1950-51 ուստարում ընդունվել է Շուշիի մանկավարժական տեխնիկում, որն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Հայրուբի շրջանի Խժաբերդի յոթամյա դպրոցում՝ որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ: 1961 թվականից մինչև 1994թ. աշխատել է Այգեստանի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկական կուլտուրայի և նախնական ռազմական պատրաստության ուսուցիչ: Երկար տարիներ դասավանդելով դպրոցում՝ նա ցուցաբերել է մասնագիտական բարձր վարպետություն, անձնացողով նվիրում, վաստակել սեր ու հարգանք և՛ կուլտուրայում, և՛ սաների կողմից: Կարևոր են համարում նշել այն հանգամանքը, որ Արցախի հերոսամարտի օրերին իր ներդրումն է ունեցել նաև Ալբերտ Սարգսյանը, որն իր սաների հետ 1992թ. մասնակցել է

Ջանհասանի մարտերին: Ուսուցչի սաները հպարտորեն խոստովանում են, որ կռվի դաշտում իրենց միշտ օգնել են ուսուցչի խորհուրդները, մարտավարությունը, և հենց դրանց շնորհիվ էլ հասել են հաղթանակի: Նա ոչ միայն լիովին տիրապետել է իր առարկայի նրբություններին, այլև նրա մեջ առկա էին բանասերի անժխտելի հակումները, ինչը նրան ավելի սերտ կապերով էր կապում աշակերտների, կուլտուրիստների, ինչու չէ, նաև ողջ գյուղի հետ: Մինչև այսօր Ա. Սարգսյանի աշակերտները սիրով ու կարոտով են հիշում իրենց դասերը, ակսուսում, որ նրա մեծ նվիրված ուսուցիչների մեր օրերում դժվար է հանդիպել: Անգամ այն մարդիկ, ովքեր չեն աշակերտել Ալբերտ Սարգսյանին, միևնույն է, բոլորի համար նա միշտ եղել ու մնում է որպես ընկեր Սարգսյան, որի մասին դրվատանքի խոսքեր միշտ են հնչել ոչ միայն հայրենի

գյուղում, այլև շրջանային և մարզային տեսչություններում: Աստված շնայլ է գտնվել Ա. Սարգսյանի հանդեպ՝ շնորհելով նաև ստեղծագործական ձիրք: Նա հեղինակ է տասնյակ արձակ ու չափածո գործերի, որոնք հնչել են հանրային ռադիոյով, մեծ գնահատանքի արժանացել նաև հանրապետությունից դուրս: Իսկ նրա հեղինակած երգերը զարդարում են գյուղի խնջույքները, տխրության ժամանակ իր խոսքերով սփոփում է կորուսյալի հարազատներին: Նա սեղանի հմուտ դեկավար է, ինչը, համաձայնեք, մեծ շնորհ է, և ոչ բոլորն են տիրապետում առաջին հայացքից դուրսի թվացող գործին: Նման կենսագրություն ունեցող անձնավորությունը չի կարող հայրենասեր չլինել: Ալբերտ Սարգսյանը իր հայրենիքի ջատագով է, գովերգողը, և բոլոր այն մարդիկ, ովքեր օժանդակում են հայրենիքին ու ժողովրդին, նրա համար դառնում են

մեծություններ: Վերոհիշյալի մասին է վկայում մեծն բարերար Լևոն Հայրապետյանին նվիրված ստեղծագործությունը, որը ծնունդ առավ Մոսկվայում՝ բարերարի հետ հանդիպման ժամանակ: Հիրավի հպարտանալ կարելի է նման հարուստ ներաշխարհ ունեցող անձնավորությամբ, որը երբեք չի առանձնանում իր ժողովրդից, կիսում է նրա մտահոգությունները, տեսակետները, երբեմն ծառա լինում անարդարությունների դեմ, իսկ իր անդորրը գտնում է աշխատանքի մեջ՝ մասնավորապես զբաղվելով մեղավարություններով: Կարծում ենք՝ այսպան է բավական է՝ զարգալի կազմելու համար մի մարդու մասին, որը տարիների հետ չի ծերանում, չի ընկճվում, այլ միշտ մարտական է տրամադրված, լավատես է, բարի ու մարդասեր, ինչի վկայությունն են նրա ներքինիչյալ գործերը:

Անահիպ ՄԵԼՈՒՄՅԱՆ

Ալբերտ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՄ ԼԻՆԵՒ

Ղարաբաղում ես լինեի,
Ղարաբաղում պես լինեի,
Ղարաբաղում ապրող հերոս
ժողովրդի պես լինեի:
Կրկն.-ես լինեի, ես լինեի,
Հյուսիս-հարավ ողնաշարի
Կառուցողը ես լինեի:
Մարտակերտում ես լինեի,
Վաղուհասցու պես լինեի,
Մարտակերտ համայնքի հերոս
Մամուլն ալի պես լինեի:
Կրկն.-ես լինեի, ես լինեի,
Մարտակերտը թուրքից փրկող
Քաջ հերոսի պես լինեի:
Գանձասարում ես լինեի,
Լևոն այրի պես լինեի,
Ոսկու հանքում ոսկի հանող
Ոսկի մարդկանց պես լինեի:
Կրկն.-ես լինեի, ես լինեի,
Մեծ հարսանիք իրողությամբ
Չուսպ քավորի պես լինեի:
Ողջ Արցախի մեծի, փոքրի
Խոնարհ ծառան ես լինեի,
Շատ հյուրասեր, ընկերասեր,
Աղ ու հացով ղարաբաղցու
Պես լինեի:
Կրկն.-ես լինեի, ես լինեի,
Ավո-Բեկոր ես լինեի,
Հայրենիքի համար գոհված
Տղաների պես լինեի:

Ա՛խ, ես ի՞նչ անեմ, ա՛խ ես ի՞նչ անեմ,
Որ դուք արթնանաք,
Ա՛խ, ես ի՞նչ անեմ, որ վերադառնաք,
Որ վերադառնաք ձեր կիսատ թողած
Գիրքը կարդալու,
Ձեր կիսատ թողած հողը հերկելու,
Որ վերադառնաք՝ ձեր շուրթին սառած
Երգը երգելու,

Ձեր կիսատ թողած համբույր սիրո
Սիրած շուրթերին նոր համբույր տալու,
Ձեր բալիկների կիսատ խաղերը
Հիմա մեծի պես նորից խաղալու:
Ես ո՞ւմ աղաչեմ, ես ո՞ւմ բողոքեմ,
Որ վերադառնաք, ձեր կիսատ թողած
Նորակառույցին տիրություն անեք:
Ո՞ւմ սիրաշահեմ, կամ աղաչեմ,
Որ չարգելեն ձեր գալն ու մնալը:
Ես ամբողջ հայոց սուրբ հողի վրա մտեր կվառեմ
Միայն թե Աստված թույլ տա ձեր դարձը,
Երջանիկ վերհուշ, մռայլ ու մշուշ,
Ննջեցեք քաջեր, ննջեցեք հավերժ:

Հարազատ էինք,
Բայց դարձանք ծանոթ,
Ժամանակը մեզ բաժանեց.
Եղունգները մսից հանեց...
Խիղճն էլ որդուց ընդմիշտ հանեց:
Ի՞նչ մեղք ունի ժամանակը,
Որ «Կաղնու» տեղ ինքն է խոսում «Շագանակը»,
Որիչները մանուկներին
Խղճակորույս որդիներին,
Որպես հաջող բարերարի,
Խոնարհվում են մինչև գետին,
Որ ամբանա իրենց գոտին:
Հարազատ ենք, դարձանք ծանոթ,
Եվ մնացինք առանց բարիք,
Խիղճն էլ մեզ դարձավ չարիք:
Օ՛, կյանք, ասա, ո՞նց ապրել առանց բարիք,
Ինչպե՞ս մաքրվել առանց բաղնիք:
Ի՞նչ կուսուցանե իմ այս գրածը.
Թող ծանոթները դառնան հարազատ,
Հարազատները՝ իղձ, սեր ու մաղթանք:

Աշխարհը՝ մեկ, Արցախը՝ մեկ,
Հայոց երկրի ուղեղ ու ղեկ,
Թե քեզ թողնեն, հեռու գնամ,
Քո թշնամին պիտո որ դառնամ,
Քեզ թշնամի ես կդառնամ:
Հայեր, ամբողջ հողաշխարհի,
Աղքատ, հարուստ, թե տիրուհի,

Միացե՛ք դուք, մի բուռ դարձե՛ք,
Հային հատուկ ուղի հարթե՛ք,
Հային հատուկ ուղի մտե՛ք:
Քաղցր, համով մրգեր ունես,
Դու անառիկ լեռներ ունես,
Դրա համար անվանեցին քեզ լեռնային,
Դա հատուկ է քեզ և հային:
Դու լեռնային, մեր սիրելի սուրբ Ղարաբաղ,
Ինչ կա քո մեջ, այդ ամենին լինենք մատաղ:
Աղջիկներդ թխաթույր են և անմամն,
Տղաներդ հերոսներ են ու առնական,
Ղարաբաղ, քո զավակներդ՝ Հայրուբ, Շուշի և Մարտակերտ,
Մարտունի, Ասկերան, գեղեցկուհի Ստեփանակերտ,
Ով քեզ տեսնի՝ չիհանա, չզարմանա,
Թող որ հոգով և զույգ աչքով նա կուրանա:

Սարերն իրենց տեղն են մնում,
Արծիվներն էլ՝ զագաթին.
Տղան հորն է փոխարինում,
Փառքն ու աչքը՝ յուր տոհմին:
Այն թշվառը, որ չի պահում պապենական ազգանուն,
Ընդմիշտ, անշուշտ, կանհետանա՝ չթողնելով հետք ու անուն,
Լավ ինսպիր, թե չես տնկել ազգիդ համար մի թթենի,
ժողով ու վարդ,
Ուրեմն դու չես ճաշակել վեհ մայրական սեր ու կաթ:
Թե դու մոտդ ես, դեմդ տեսնես քո միևնույն զավակիդ,
Դու ծնկաչոք պիտո մեծարես անչափ բարի քո հավթին,
Այն թշվառը, որին սնել, պահպանել ես դու, մեծ մարդ,
Ամբարտավան էակ է նա, պիտո որ կրի վիշտ, տանջանք:
Որդուդ համար բարի եղիր, ինչպես նա է քո կյանքն ու իղձ,
Մինչ իմ կյանքի վերջը, տղաս, գոհ կլինեն քեզանից:
Եթե որդին ժառանգում է հորից ազնիվ սեր, հարգանք,
Դա հոր փառքի մեծությունն է, իսկ թշնամուն՝ անարգանք:
Եթե կյանքում միայնակ ես, չես ունենա լավ անուն,
Անգամ եթե աստվածները քո թիկունքում լինեն կանգուն,
Աստծո կամքից այս աշխարհում անկախ չկա ոչ մի շունչ,
Մարդիկ, տեսար, մեկ լիանում, մեկ դառնում են ոչ ու փուչ:
Աշխարհը մեր առանց մարդու հավասար է գրոյի,
Իսկ մարդակերպ էակներով անասնատիպ մի հոտի:
Մինչև հիմա քիչ են գրել՝ գանգատվելով իմ խելքից,
Որոշել են՝ պիտի գրեն, որ չտանջի մշտախոռվ հոգիս ինձ:
Եղեք խելոք ու պարզամիտ, մեծ ուժի տեր առյուծի,
Քանի որ դուք՝ ծննդով հայ, իսկ ծագումով՝ արցախցի:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանը հայտարարում է տնտեսաշխարհային հիմունքներով կարճաժամկետ ուսուցման ընդունելություն հետևյալ մասնագիտություններում.

- 1.տրակտորիստ-էքսկավատորավար,
 - 2.բուլդոզերավար,
 - 3.կոմբայնավար,
 - 4.կռուցկավար:
- Ուսման տևողությունը՝ 2 ամիս, ուսման վարձը՝ 80.000 դրամ:
5.Վարորդների պատրաստում:
Ուսման տևողությունը՝ 10-15 օր, ուսման վարձը՝ 20.000 դրամ:

Ցանկացողները պետք է ներկայացնեն.
-դիմում,
-կրթության մասին փաստաթղթի բնագիրը և պատճենը,
-4 լուսանկար,
-անձնագրի պատճենը:
Փաստաթղթերը ընդունվում են մինչև սույն թվականի ապրիլի 1-ը, ամեն օր ժամը՝ 9.00-14.00-ը, բացի կիրակի օրերից:

Մեր հասցեն՝ ք.Ստեփանակերտ, Բաղրամյան 27 հեռախոս՝ 94-61-18

ԼՈՒՍԱՐԱՐ ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ	Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info	Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:	Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 16.03.2015թ.:
---	--------------------------------	--	--	--

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: